

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ  
ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ  
2011

ՀՏԴ 325.4  
ԳՄԴ 66.3  
Ա 862

Արևելյան Եվրոպայի հայ համայնքների խնդիրները. - Եր.:  
Ա 862 «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 2011. - 184 էջ:

Գիրքն անդրադառնում է Արևելյան Եվրոպայի երկրների հայերի ներկայացվածությանը և ակտիվությանը վիրտուալ սոցիալական ցանցերում, հայ համայնքների մտավոր ներուժին, ինչպես նաև նրանց տեղեկատվական և կազմակերպչական ռեսուրսներին: Հետազոտությունը ներառում է Արևելյան Եվրոպայի երկրների մտավորական հայերի, հայ համայնքային կառույցների և ԶԼՄ-ի մասին պատմական և արդի տվյալներ:

Գիրքն ուղղված է Հայության հարցերով զբաղվող փորձագիտական հանրությանը և ընթերցողների լայն շրջանակին:

ՀՏԴ 325.4  
ԳՄԴ 66.3

ISBN 978-9939-825-08-3

© ՀՀ Սփյուռքի նախարարություն, 2011  
© Նորավանք, 2011

Գիրքը հրատարակվում է

ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով,  
«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի  
փորձագիտական խորհրդի որոշման հիման վրա

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ  
ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աննա Ժամակոչյան

Հեղինակային խմբի ղեկավար  
«Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական  
հետազոտությունների կենտրոնի ավագ փորձագետ

Արա Պապյան

«Մոդուս վիվենդի»  
հասարակագիտական կենտրոնի ղեկավար

Արեստակես Միմավորյան

«Նորավանք» ԳԿՀ  
Հայագիտական կենտրոնի ղեկավար

Դիանա Գալստյան

«Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական  
հետազոտությունների կենտրոնի փորձագետ

Էդվարդ Բադալյան

1998-2002թթ. Հունգարիայի հայ ազգային  
ինքնավարության գործադիր նախագահ

Մամվել Մարտիրոսյան

«Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական  
հետազոտությունների կենտրոնի փորձագետ

Վահրամ Հովյան

«Նորավանք» ԳԿՀ  
Հայագիտական կենտրոնի փորձագետ

Տիգրան Ղանալանյան

«Նորավանք» ԳԿՀ  
Հայագիտական կենտրոնի փորձագետ

## Բովանդակություն

Առաջաբան.....	6
<b>1. Արևելյան Եվրոպայի երկրների հայերը վիրտուալ սոցիալական ցանցերում.....</b>	<b>9</b>
<b>2. Հայության մտավոր ներուժը Արևելյան Եվրոպայում.....</b>	<b>15</b>
Բուլղարիա.....	15
Լեհաստան.....	24
Հունգարիա.....	31
Ռումինիա.....	34
Չեխիա.....	40
Սլովակիա.....	45
<b>3. Բուլղարիայի հայ համայնքը. տեղեկատու.....</b>	<b>48</b>
<b>4. Բուլղարիայի հայ ավետարանականները.....</b>	<b>64</b>
<b>5. Լեհաստանի հայ համայնքը. տեղեկատու.....</b>	<b>71</b>
<b>6. Լեհաստանի հայ կաթոլիկները կամ «հին» համայնքը.....</b>	<b>77</b>
<b>7. Հունգարիայի հայ համայնքը. տեղեկատու.....</b>	<b>101</b>
<b>8. Հայերը Հունգարիայում. Էդվարդ Բադայանի դիտարկումները.....</b>	<b>105</b>
<b>9. Չեխիայի հայ համայնքը. տեղեկատու.....</b>	<b>120</b>
<b>10. Չեխիայի հայերը. նոր ձևավորվող համայնքի առանձնահատկությունները.....</b>	<b>128</b>
<b>11. Ռումինիայի հայ համայնքը. տեղեկատու.....</b>	<b>153</b>
<b>12. Գեռլայի հայերը. Արա Պապյանի անձնական դիտարկումները.....</b>	<b>161</b>
<b>13. Սլովակիայի հայ համայնքը. տեղեկատու.....</b>	<b>168</b>
<b>14. Հարցազրույց Սլովակիայի հայ համայնքի և Եվրոպայի հայկական միությունների ֆորումի ղեկավար, դոկտոր Աշոտ Գրիգորյանի հետ.....</b>	<b>169</b>
Ամփոփում.....	177
Резюме.....	180
Resume.....	182



---

## ԱՌԱՋԱԲԱՆ

**Մ** փյուռքի հայկական գաղթօջախների մեջ ուրույն տեղ ունեն Արևելյան Եվրոպայի՝ Բուլղարիայի, Լեհաստանի, Հունգարիայի, Չեխիայի, Ռումինիայի և Սլովակիայի հայ համայնքները: Արևելաեվրոպական երկրները հայկական սփյուռքի տեսակետից առանձնահատուկ են նրանով, որ այստեղ, ավանդական սփյուռքի կողքին, հետխորհրդային շրջանում ձևավորվել և որպես ծանրակշիռ հանրույթ է ներկայանում նոր սփյուռքը՝ հետխորհրդային շրջանում Հայաստանից արտագաղթած և այդ երկրներում հաստատված հայերի ամբողջությունը:

Այսպիսով, Արևելյան Եվրոպայի երկրների հայ համայնքներն արտագաղթի ժամանակագրության սկզբունքով կարելի է բաժանել երկու շերտի.

1. *Ավանդական սփյուռք*, որը ներկայացնում է նախքան Հայոց ցեղասպանությունը և դրա հետևանքով հայրենիքից հեռացած ու Արևելյան Եվրոպայում հաստատված հայերի ամբողջությունը:

2. *Ժամանակակից սփյուռք*, որը ներկայացնում է հետխորհրդային շրջանում Հայաստանից և այլ երկրներից արտագաղթած և Արևելյան Եվրոպայում հաստատված հայերի ամբողջությունը:

Արդ, Արևելյան Եվրոպայի հայ համայնքը կազմող հայության այս երկու շերտերն ընդհանուր ազգային պատկանելության հետ մեկտեղ ունեն նաև որոշակի յուրահատկություններ (լեզվական, աշխարհայացքային և այլն), ինչը բազմազանություն է մտցնում հայ համայնքի կյանքում:

Եթե ըստ ժամանակագրության արտագաղթի շերտավորմանն ավելացնենք նաև Արևելյան Եվրոպայի հայ համայնքների՝ այլ չափանիշներով (կրոնադավանանքային, սոցիալական կարգավիճակի, ունեցվածքի, կրթվածության և այլն) շերտավորումը, ապա վերջինիս ներքին բազմազանությունն էլ ավելի խոր և արտահայտված տեսք կստանա:

Չնայած իրենց սոցիալական առանձնահատկություններին, այդ շերտերն էթնիկ հիմքով միասնական ամբողջություն են կազմում՝ Արևելյան Եվրոպայի հայ համայնքները: Հետևաբար, նրանց խնդիրները, ինչպես նաև հնարավորություններն ու ռեսուրսները պետք է դիտարկել ընդհանրական համայնքների և ողջ Հայության շրջանակում:

Արևելյան Եվրոպայի հայ համայնքների ռեսուրսների ուսումնասիրությունը Հայաստանի Հանրապետության համար կարևորվում է հետևյալ հիմնական նկատառումներով.

- ՀՀ-ն իբրև համայն Հայության հայրենիք և պետություն՝ շահագրգիռ է և պարտավոր է հնարավորության սահմաններում օժանդակել ու նպաստել արտերկրի հայ համայնքների խնդիրների (հայապահպանություն, հոգևոր-մշակութային հարցեր և այլն) լուծմանը՝ հիմնվելով արդեն առկա ռեսուրսների վրա:

- Արևելյան Եվրոպայի հայ համայնքները որոշակի պոտենցիալ ունեն, ինչն արդյունավետ կառավարելու և օգտագործելու դեպքում հնարավոր է լավագույնս ծառայեցնել ինչպես այդ համայնքների, այնպես էլ ՀՀ և համայն Հայության հիմնախնդիրների լուծմանը: Մասնավորապես, այս համայնքները ՀՀ և Հայության յուրօրինակ «դեսպաններն» են այդ երկրներում և լավագույն

---

հնարավորությունն են՝ ներկայացնելու ՀՀ և Հայության խնդիրներն ու առաջնահերթությունները:

Այսպիսով, արտերկրի հայ համայնքների ռեսուրսների ուսումնասիրությունը թե՛ վերջիններիս և թե՛ ՀՀ-ի ու համայն Հայության համար ունի փոխադարձ կարևորություն: Այն, մի կողմից, հնարավորություն է տալիս հայ համայնքների արդի վիճակի, նրանց առջև ծառայած խնդիրների ու մարտահրավերների վերհանման միջոցով արդյունավետ ուղիներ մշակել նրանց հիմնախնդիրները լուծելու, կենսունակությունն ապահովելու և զարգացնելու համար: Մյուս կողմից՝ Արևելյան Եվրոպայի երկրների հայ համայնքների ներուժի բացահայտումն ու ճիշտ գնահատումը լավագույնս կնպաստեն այն ի շահ ՀՀ-ի և ողջ Հայության արդյունավետ օգտագործելու համար:

*Արեստակես Միմավորյան*



## 1. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՅԵՐԸ ՎԻՐՏՈՒԱԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ

Արևելյան Եվրոպայի հայկական համայնքները համացանցում բավական ցրված են և ավելի թույլ են կապակցված, քան հետխորհրդային տարածքի հայկական համայնքները կամ ամերիկահայությունը: Այս հանգամանքի համար հիմնական գործոն է հանդիսանում լեզուն, քանի որ արտագաղթի նոր ալիքի ներկայացուցիչները ձգտում են համացանցում շփվել ռուսերենով, իսկ ավելի վաղ բնակված հայերը գերադասում են կիրառել տեղի լեզուները կամ անգլերենը: Այդ պատճառով արևելաեվրոպական երկրներում առաջանում են միանգամից մի քանի հայկական ցանցային համայնքներ.

1. Մի մասը, օգտվելով ռուսերենից և որոշ չափով՝ հայերենից, մտնում է հետխորհրդային երկրների և Հայաստանի ցանցային խմբերի մեջ: Տվյալ խմբերը հիմնականում անդամակցում են լայն բովանդակության հայկական ռուսալեզու և հայալեզու խմբերին:

2. Մյուս մասը ներգրավվում է անգլիալեզու, կրկին լայն բովանդակության հայկական խմբերում, որոնք ավելի շատ գտնվում են արևմտահայության ազդեցության տակ:

3. Շատ ավելի փոքրաթիվ մասը լոկալ խմբեր է ձևավորում իր իսկ համայնքային կյանքի շուրջ:

Ըստ լեզվական գործոնի, այս համայնքային խմբերը հիմնականում բաժանված են անգլիալեզու և ռուսալեզու հարթակների միջև՝ համապատասխանաբար ընտրելով *facebook.com* կամ էլ *Odnoklassniki.ru* և *Vkontakte.ru* անցիալական ցանցերը:

---

Այսպիսի ցրվածության հետևանք է այն, որ համայնքային ինտերնետային բազմաթիվ կայքեր, որոնք նաև ցանցային շփման միջոց էին, վերջին տարիներին անհետացան: Փորձը ցույց է տալիս, որ փոքրաթիվ համայնքները կորցնում են իրենց դերը համացանցում:

Մյուս կողմից՝ Արևելյան Եվրոպայի հայության ռուսալեզու և անգլիալեզու խմբերի շրջանում նկատվում է ընդհանուր հայկական դաշտի հետ միավորվելու ձգտում: Սակայն այս ընթացքն էլ իր կողմից հանգեցրել է առանձին մի քանի ինտերնետային համայնքների ստեղծմանը, որոնք իրար հետ գրեթե կապ չունեն: Խոսքը մաքուր անգլիալեզու կամ ռուսալեզու խմբերի մասին է, ուր հավաքվում են այն օգտվողները, որոնք գիտեն տվյալ լեզուներից միայն մեկը և վատ են տիրապետում կամ ընդհանրապես չգիտեն հայերեն:

Հայկական հիմնական մեծ ֆորումներում կամ սոցիալական ցանցերի խմբերում մասնակցում են Արևելյան Եվրոպայի հայկական համայնքների մեծ թվով ներկայացուցիչներ: Լինելով մեծ հարթակի մի մաս՝ նրանք պարտադրված են լինում մասնակցել լայն ֆորմատով քննարկումների, որոնք կապ չունեն իրենց համայնքային կյանքի հետ: Համայնքային կյանքն այս տեսանկյունից դուրս է մնում ցանցային ձևաչափից:

Ակտիվությամբ աչքի է ընկնում Լեհաստանի հայ համայնքը, որն ինտերնետն օգտագործում է համայնքային կյանքը կազմակերպելու, ցուցահանդեսներ, հանդիպումներ և մշակութային այլ մեծ միջոցառումներ իրականացնելու համար: Այստեղ գործում են զանազան համացանցային խմբեր՝ ֆորումներ, սոցիալական ցանցերի համայնքներ: Սակայն քանակական տեսանկյունից Լեհաստանը, միննույն է, զիջում է հետխորհրդային երկրների ակտիվությանը (տե՛ս *Աղյուսակ 1.1*):

**Աղյուսակ 1.1**

**Լեհաստանի համայնքային հայկական ցանցերը**

	Խմբի/կայքի անունը	Խմբի/կայքի հասցեն	Մասնակիցների թիվը
1.	Հայկական ֆորում Լեհաստանում	forum.armenia.pl	47000 <sup>1</sup>
2.	<i>Ormianie Polscy</i>	facebook.com/group.php?gid=63411327396	40

Մեծ ակտիվություն են ցուցաբերում նաև Բուլղարիայի հայերը: Այստեղ գործում են ինչպես անկախ համայնքային, այնպես էլ կազմակերպությունների խմբեր (տե՛ս *Աղյուսակ 1.2*): Բուլղարահայերը, Լեհաստանի համայնքի համեմատ, ինտերնետային մեծ ակտիվություն են ցուցաբերում ոչ միայն համայնքի ինքնակազմակերպմանը վերաբերող, այլ նաև տարածաշրջանային քաղաքական հարցերում, հիմնականում հայ-թուրքական հարաբերություններին առնչվող թեմաներում:

**Աղյուսակ 1.2**

**Բուլղարիայի հայկական ցանցերը**

	Խմբի/կայքի անունը	Խմբի/կայքի հասցեն	Մասնակիցների թիվը
1.	Armenians in Bulgaria	facebook.com/group.php?gid=8057635218	440
2.	Armenians in Bulgaria	facebook.com/group.php?gid=6807872465	182
3.	Armenian Relief Society, Arax Chapter, Varna, Bulgaria	facebook.com/group.php?gid=21958729778	225
4.	Вестник "Единни Арменци"/"United Armenians" E-Magazine /	facebook.com/group.php?gid=223096024122	565
5.	Армяне в Болгарии	Odnoklassniki.ru	235

<sup>1</sup> Սա գրանցված օգտվողների թվաքանակն է, սակայն ակտիվ օգտվողների իրական թիվը կարող է պակաս լինել, քանի որ հաղորդագրությունների քանակն ավելի փոքր է:

Ռումինիայի հայ համայնքը ևս խումբ է կազմավորել *facebook.com* սոցիալական ցանցում «*Armenians in Romania*» անունով ([facebook.com/group.php?gid=9249170481](http://facebook.com/group.php?gid=9249170481)), որին անդամակցում են 136 մասնակից: Այս խումբը լուսաբանում է հայերի կյանքը Ռումինիայում, սակայն արդեն կորցնում է ակտիվությունը: Սրան զուգահեռ՝ նոր սկսել է զարգանալ Clubul «*Armenilor din Romania*» ռումինահայերի ակումբի էջը (<http://www.facebook.com/ArmeniansIn-Romania?ref=mf>)՝ 85 մասնակցով:

Որոշ արևելաեվրոպական երկրներում սոցիալական ցանցերում հայ օգտվողներն առանձնահատուկ խմբեր են ձևավորում՝ ուղղված Մեծ եղեռնի ճանաչմանը և ընդդեմ Թուրքիայի քաղաքականության: Նրանք հիմնականում երբևէ թուրքական լծի տակ եղած երկրների հայերն են, որոնց հաճախ միանում են նաև տեղի բնիկ ազգությունները: Նման խմբերը հիմնականում գործում են Բուլղարիայում (տե՛ս *Աղյուսակ 1.3*):

**Աղյուսակ 1.3**

**Հայոց ցեղասպանությունը ճանաչելուն և թուրքական քարոզչությանը դիմադրելուն ուղղված խմբեր**

	<b>Խմբի/կայքի անունը</b>	<b>Խմբի/կայքի հասցեն</b>	<b>Մասնակիցների թիվը</b>
1.	За признаване и осъждане на арменския геноцид!	<a href="http://www.facebook.com/group.php?gid=210066245591">http://www.facebook.com/group.php?gid=210066245591</a>	1710
2.	За признаване на геноцида над арменския народ	<a href="http://www.facebook.com/group.php?gid=206981412595">http://www.facebook.com/group.php?gid=206981412595</a>	1950
3.	za priznavane na genocida nad armenskiqt narod!!!!	<a href="http://www.facebook.com/group.php?gid=104737949569698">http://www.facebook.com/group.php?gid=104737949569698</a>	180
4.	Арменците почитат паметта на загиналите от "Турския Геноцид"	<a href="http://www.facebook.com/group.php?gid=105067809535930">http://www.facebook.com/group.php?gid=105067809535930</a>	30
5.	Армяне в Болгарии	Odnoklassniki.ru	160

Բացի դրանից, այս խմբերից ձևավորվում են ավելի լայն խնդիրներ լուծելուն կոչված ցանցեր: Դրանք հիմնականում պայքարում են թուրքական քարոզչության դեմ: Այս խմբերը միավորում են հայերին, հույներին, բուլղարացիներին, սերբերին, ինչպես նաև եվրոպական երկրներում բնակվող ասորիներին (տե՛ս Աղյուսակ 1.4):

**Աղյուսակ 1.4**

**Թուրքական քարոզչության դեմ պայքարող միասնական խմբեր**

	<b>Խմբի/կայքի անունը</b>	<b>Խմբի/կայքի հասցեն</b>	<b>Մասնակիցների թիվը</b>
<b>1.</b>	The Diasporas (Armenians, Assyrians, Circassians, Greeks, Serbians)	<a href="http://www.facebook.com/group.php?gid=195184652779">http://www.facebook.com/group.php?gid=195184652779</a>	960
<b>2.</b>	United Orthodox States-Сједињене Православне Државе-Ενωμένα Ορθόδοξα Έθνη	<a href="http://www.facebook.com/group.php?gid=43443516119">http://www.facebook.com/group.php?gid=43443516119</a>	6510
<b>3.</b>	Delete Anti-Armenian/Greek/Cypriot/Serb Racist Groups and Pages	<a href="http://www.facebook.com/group.php?gid=113417068708942">http://www.facebook.com/group.php?gid=113417068708942</a>	590
<b>4.</b>	Assyria, Armenia & Greece (UNITED)	<a href="http://www.facebook.com/group.php?gid=117321964954450">http://www.facebook.com/group.php?gid=117321964954450</a>	205
<b>5.</b>	Serbia Armenia=Friendship forever	<a href="http://www.facebook.com/pages/Serbia-ArmeniaFriendship-forever/137210129633907?ref=ts">http://www.facebook.com/pages/Serbia-ArmeniaFriendship-forever/137210129633907?ref=ts</a>	850
<b>6.</b>	Virtual Embassy of Nagorno Karabakh in Serbia	<a href="http://www.facebook.com/pages/Virtual-Embassy-of-Nagorno-Karabakh-in-Serbia/140354552664611?ref=ts">http://www.facebook.com/pages/Virtual-Embassy-of-Nagorno-Karabakh-in-Serbia/140354552664611?ref=ts</a>	480

Արևելաեվրոպական մյուս երկրների հայկական համայնքները համացանցը չեն օգտագործում ինքնակազմակերպման համար, իսկ Հայաստանի հետ կապը պահպանելու նպատակով ներգրավվում են համահայկական մեծ խմբերի մեջ:

---

Այսպիսով, Արևելյան Եվրոպայի հայկական համայնքները համացանցում համեմատական ակտիվություն են ցուցաբերում գլոբալ հայկական խնդիրների հարցում, ինչպիսին է Ցեղասպանության ճանաչմանն աջակցելը: Դրանով է պայմանավորված հայկական խմբերի կողմից ուղղափառ ազգերի ներկայացուցիչների հետ համախմբվելու միտումը, որը հանգեցնում է հակաթուրքական ընդհանուր ճակատի ստեղծմանն ինտերնետում:

## 2. ՀԱՅՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՆԵՐՈՒԺԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Բուլղարիայում, Լեհաստանում, Հունգարիայում, Ռումինիայում հայերն ունեցել են ավանդական համայնքներ, որոնք դարեր շարունակ մասնակցել են այդ երկրների գիտության և մշակույթի զարգացմանը: Այստեղի հայության մտավորականության ներկայացուցիչները հաճախ ուղղակիորեն համագործակցել են այլ երկրների հայ համայնքերի և հայրենիքի հետ: Ի տարբերություն սրանց՝ Չեխիայում և Սլովակիայում հայկական համայնքները ձևավորվել են վերջին տասնամյակների ընթացքում՝ այստեղ նույնպես ներգրավվելով գիտության և մշակույթի բնագավառներում: Արևելյան Եվրոպայի հայկական համայնքները, մտավոր ներուժի համախմբման տեսանկյունից, մի շարք առանձնահատկություններ ունեն: Այնուամենայնիվ, այստեղի հայության մտավոր ներուժը կազմում է ողջ Սփյուռքի և Հայության ներուժի մի մասը և ունի հետազոտման, գնահատման և Հայության խնդիրների լուծմանն ավելի սերտ ինտեգրվելու պահանջ:

### ***Բուլղարիա***

Բուլղարիայում գիտության և մշակույթի բնագավառներում հայերը սկսել են գործել ավելի քան մեկ հազարամյակ առաջ:

Միջին դարերում այստեղ եղել են գրչության կենտրոններ: Այս ժամանակաշրջանից սկսած՝ Բուլղարիայում հաստատված հայերը կապեր են ստեղծել տարբեր հայկական գաղթօջախների և հայրենիքի հետ: Բուլղարիայի հայկական վանքերում և

---

եկեղեցիներում պահվել են շուրջ 200 հայերեն ձեռագրեր, որոնց զգալի մասը գրվել է Հայաստանում և արտերկրի հայաշատ կենտրոններում:

Հայկական մշակույթը Բուլղարիայում մեծ վերելք ապրեց 19-րդ դարի վերջին: Այդ ժամանակաշրջանում բուլղարահայ մտավորականությունը հիմնականում բաղկացած էր հայկական դպրոցների ուսուցիչներից, լրագրողներից, հոգևոր ու աշխարհիկ ծառայողներից, որոնք մեծ դեր կատարեցին ինչպես հայկական գաղութների, այնպես էլ Բուլղարիայի հասարակական-քաղաքական և մշակութային-լուսավորչական կյանքում: Նրանց մեջ հատկապես աչքի են ընկնում Գարեգին և Նշան Շիշմանյան եղբայրները, Տաճատ Պեյլերյանը, Խորեն Քյուչուքյանը, Գևորգ Օվաճգյանը, Մկրտիչ Թյուրունճյանը, Կարապետ Սահակյանը և ուրիշներ<sup>1</sup>:

Նշանակալի դեր խաղացին նաև նորաստեղծ հասարակական կազմակերպություններն ու հայրենակցական միությունները: 1883թ. Ֆիլիպոպոլիսի Վարդանյան դպրոցի տեսուչ Տաճատ Լուրճյանի նախաձեռնությամբ հիմնադրված «Գրասիրաց եղբայրությունը» բացեց հայկական գրադարան-ընթերցարան, որը նպաստեց տեղի հայերի մտավոր զարգացմանը (1994թ. Պլովդիվում նշվել է «Գրասիրաց»-ի հիմնադրման 110-ամյակը): Գրադարան-ընթերցարաններ են գործել նաև Բուլղարիայի այլ քաղաքներում:

20-րդ դարի երկրորդ կեսին ևս հայերն ակտիվորեն

---

<sup>1</sup> Հայ ժողովրդի պատմություն (ՀԳԱ հրատ.), հ. 6, Երևան, 1981, էջ 667:



ներգրավված էին Բուլղարիայի գիտական և մշակութային կյանքում, ինչին նպաստում էր նրանց կրթական բարձր մակարդակը: Օրինակ, 1960-ական թթ. սկզբի դրությամբ երկրի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում էին 300-ից ավելի հայեր<sup>1</sup>:

Բուլղարիայի տնտեսության, գիտության և մշակույթի բնագավառներում աչքի ընկնող բազմաթիվ հայեր արժանացել են սոցիալիստական աշխատանքի հերոսի և պետական դափնեկիրների բարձր կոչումների<sup>2</sup>:

19-րդ դ. վերջին – 20-րդ դ. սկզբին Բուլղարիայում գրվել են մի շարք աշխատություններ՝ նվիրված հայոց պատմությանը: Հրատարակվել են նաև Ս.Սապահ-Գուլյանի «Եվրոպայի քաղաքական դրությունը Բեռլինի դաշնագրությունից հետո» (Ռուսե, 1898), Ե.Պալյանի «Հայ սոցիալ-դեմոկրատական միությունը և իր «Պրոլետարիատ» թերթը» (Ռուսե, 1908), Վ.Պատրիկի (Վարդո) «Տասը տարի Հայ հեղափոխական դաշնակցության շարքերուն մեջ» (Վառնա, 1908), Ա.Ալպոյաճյանի «Պուկարաց պատմությունը» (Վառնա, 1910) և այլն<sup>3</sup>: Արևելագիտության բնագավառում է գործել թուրքագետ, թարգմանիչ, աստվածաբան, բողոքական քարոզիչ Աբրահամ Ամիրխանյանը:

2010թ. փետրվարին Սոֆիայի Սբ. Կլիմենտ Օրհիդսկի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետում բացվեց

<sup>1</sup> Գասպարյան Ս., Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Երևան, 1962, էջ 190:

<sup>2</sup> Տե՛ս Ղասաբյան Զ., Հայ-բուլղարական բարեկամության պատմությունից, Երևան, 1978, էջ 84-85:

<sup>3</sup> «Հայ սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003, էջ 135:

---

հայագիտության նոր կենտրոն<sup>1</sup>:

Մաթեմատիկայի բնագավառում է գործում Ալեքսանդր Աղեկունյանը, իսկ կենսաքիմիայի ասպարեզում՝ Հարություն Մանուելյանը: Բուլղարահայ աչքի ընկնող բժիշկներից է Բուլղարիայի վաստակավոր բժիշկ Հակոբ Չաքըրովը, որը 1951թ. ստեղծել է հակաքաղցկեղային ինստիտուտը և գլխավորել այն<sup>2</sup>:

Հայերն ակտիվ գործունեություն են ծավալել հրատարակչական և լրագրության ասպարեզներում:

Տպագրիչ, գրող Թադևոս Դիվիթջյանը բուլղարական տպագրության ռահվիրաներից է: Բուլղարիայում առաջին հայկական տպարանը ստեղծվել է Վառնայում, որտեղ 1884թ. լույս է տեսել «Հույս» («*Huis*») լատինատառ հայերենով անդրանիկ պարբերականը (խմբագիր՝ Անդրանիկ Յոհանեսկու՝ Հովհաննիսյան և Բ.Ատրունի): Մինչև 2003թ. Բուլղարիայում հրատարակվել են ավելի քան 80 անուն հայկական պարբերականներ: Բուլղարիայում լույս տեսնող հայկական պարբերականներից աչքի են ընկել «Դանուբ» երկշաբաթաթերթը (Ռուսե, 1891-1892թթ., խմբ.՝ Մկրտիչ Թյութունճյան), «Իրավունք» քաղաքական եռօրյա հայերեն, ֆրանսերեն թերթը (Վառնա, 1885թ., խմբ.՝ Հ.Մավի (Հակոբ Մավիյան), «Իրավունք» հասարակական-քաղաքական եռօրյա, ապա՝ շաբաթաթերթը (Վառնա, 1896-1911թթ., խմբ.՝ Հ.Գուրպեթյան), «Լուսարձակ» հասարակական-քաղաքական շաբաթաթերթը (Վառնա, 1920-1924թթ., խմբ.՝ Տիգրան Մարտի-

---

<sup>1</sup> <http://ankakh.com/2010/02/24313/>

<sup>2</sup> Տե՛ս Բախչինյան Ա., Հայագգի գործիչներ. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը (կենսագրական հանրագիտակ), Երևան, 2002, էջ 124, 127-128:

րոսյան), «Կարմիր լուրեր» ամսաթերթը (Պլովդիվ, 1920-1921թթ., իմր.՝ Ստեփան Շահբազյան), «Հայաստան» ազգային, գրական, քաղաքական կիսաշաբաթաթերթ, հետագայում շաբաթաթերթը (Սոֆիա, 1915թ., 1919-1920թթ., Պլովդիվ, 1920-1925թթ., իմր.՝ Տիգրան Խաչիկյան, Օնիկ Վարդանյան, Մկրտիչ Թելալյան, Արմեն Սևան (Հովհաննես Դեհձյան), Գ.Փիլիպոսյան), «Պալքանյան մամուլ» հասարակական-քաղաքական հայերեն, բուլղարերեն շաբաթաթերթը (Ռուսե, ապա Սոֆիա, 1915թ., 1918-1922թթ., 1931-1944թթ., իմր.՝ Ս.Սալահ-Գուլյան, Ժ.Միրզախանյան, Է.Չուքուրյան, Գ.Գույումջյան, Հ.Պողոսյան, Ս.Էքմեքձյան), «Ռահվիրա» մանկավարժական ամսաթերթը (Շումեն, ապա Պլովդիվ, 1906-1908թթ., իմր.՝ Ա.Իշխանյան, Ա.Պետեյան), «Ուսումնարան» դպրոցական ամսագիրը (Պլովդիվ, 1932-1943թթ., պատասխանատու իմր.՝ Մ.Կարապետյան, Հ.Ոսկանյան), «Փարոս» շաբաթաթերթ, ապա եռօրյան (Սոֆիա, ապա Պլովդիվ, 1929-1945թթ., իմր.՝ Բ.Մազլմյան, Տ.Մարտիրոսյան, Տ.Գոչունյան, Հ.Մարթայան): 1944 թվականից Սոֆիայում լույս տեսնող «Երևան» գրական, հասարակական-քաղաքական և մշակութային շաբաթաթերթը գործում է նաև այժմ: Տարբեր տարիների այն իմրագրել են Ս.Փաչաձյանը, Բ.Թյուֆենկյանը, Հ.Օրմանձյանը, Կ.Հայրապետյանը, իսկ 1996 թվականից՝ Վարդանուշ Թովաքբաշյանը: 1991 թվականից Պլովդիվում լույս է տեսնում «Վահան» բուլղարերեն և հայերեն շաբաթաթերթը, որի իմրագիրն է Հարի Նիկողոսյանը: 1993 թվականից Բուրգասում լույս է տեսնում «Հայեր» երկշաբաթյա պարբերականը՝ բուլղարերեն-հայերեն գլխագրով և սակավաթիվ հայերեն հոդվածներով, որի իմրագիրն է Գևորգ Սաֆարյանը: 2003թ. Սոֆիայում լույս է տեսել «Մենք» բուլղարերեն

---

պատկերագարդ հանդեսը, որը հայկական մշակույթի, պատմության և ավանդույթների համառոտ հանրագիտարան է՝ ուղղված բուլղար ընթերցողին (հրատարակությունն իրականացրել են Հարի Նիկողոսյանը, Վարդանուշ Թոփաքբաշյանը և Անի Աճեմյանը)<sup>1</sup>:

1920-1980-ական թթ. իրենց արձակ, չափածո պատմական ու բանասիրական ստեղծագործություններով աչքի են ընկել Ջ.Պլպուլը, Օ.Զարմուհին (Փանիկյան), Հրանտ Հրահանը, Կ.Կարազյոզյանը, Պարույր Ասատուրը, Կարո Ղազարոսյանը, Տիգրան Մարտիրոսյանը, Ներսես Ղասապյանը, Վ.Չերչյանը, Մ.Հաղիդյանը, Է.Սելյանը, Մ.Տոնիկյանը, Ա.Բալաբանովը: Նրանց գործերը տպագրվել են բուլղարահայ մամուլի և տարեգրքերի էջերում: Վերջին տասնամյակներին գրական կյանքում աչքի են ընկել գրող Գրիգոր Փափազյանը, թարգմանիչներ Հակոբ Օրմանճյանը, Կարո Հայրապետյանը, Կարո Կիլիկյանը (բուլղարերեն են թարգմանել հայ դասական գրողների երկեր): Արձակագիր և հասարակական գործիչ Սևդա Սևանի (եղել է Բուլղարիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան) ստեղծագործությունները («Ռոդոսթո, Ռոդոսթո» վեպը, «Տեր Ջոր» եռահատոր վեպը) լայն ճանաչում են բերել հեղինակին: Բուլղարահայ գրող և հրապարակախոս Հակոբ Մելքոնյանը ստեղծագործում է բուլղարերեն: Լույս է ընծայել երեք ժողովածու, ունի նաև գիտական ուսումնասիրություններ և հրապարակախոսական հոդվածներ: Նրա գործերը թարգմանվել են ռուսերեն, լեհերեն և գերմաներեն:

---

<sup>1</sup> «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 135-138:

19-րդ դ. վերջից բուլղարահայ համայնքում գործել են բազմաթիվ երգչախմբեր: Հայտնի են Պլովդիվի «Գրասիրաց եղբայրություն» միության «Դայլայիկ» և «Մեղեղի» (1883 թվականից), նույն համայնքի Վահան Մանուելյանի (1904 թվականից), Վառնայի հայ համայնքի Բարսեղ Կանաչյանի (1920 թվականից), Ռուսեի «Կոմիտաս» (1932 թվականից) և Սոֆիայի «Քնար» (1927 թվականից) երգչախմբերը: Հետագա տարիներին երգչախմբեր են գործել «Երևան» մշակութային միության մի շարք մասնաճյուղերին կից: Համերգներով հանդես են եկել նաև բուլղարահայ երգի-պարի համույթները: Ներկայումս գործում է «Երևան» մշակութային միության «Գրիգոր Գրիգորով» երգչախումբը: Երաժշտության բնագավառում աչքի են ընկել մի շարք հայ գործիչներ: Հայտնի երաժիշտ Նաթան Ամիրխանյանը (1872-1949) Սոֆիայի օպերային թատրոնի, Վառնայի «Գուսլա» երաժշտական ընկերության հիմնադիրներից է: Բուլղարիայում լայն ճանաչում են գտել երգահան Սարգիս Պալթայանը, դաշնակահարուհիներ Զարուհի Սայանը, Հերմինե Ասատուրը, խմբավար Կիրկոր Կարապետյանը, ջութակահարներ Ստեփան Խանջյանը, Հակոբ Աղասյանը: Ավելի ուշ, 1950-1970-ական թթ., հանդես են եկել հայտնի դիրիժորներ Կիրկոր Կիրկորովը, Վիլլի Գազայանը, խմբավար Խ.Միհրանյանը, ջութակահար Էմանուել Գոյումջյանը, թավջութակահարուհի Սեդա Պալթայանը, դաշնակահարուհիներ Մավվինա Խաչատրյանը, Ալիս Աբրահամյանը, Էմմա Թահմիզյանը, մենակատարներ Սոնյա Համեղլինգը, Նադյա Աֆեյանը, Մարի Գրիգորյանը, Արշալույս Ազարյանը և ուրիշներ: Երգահան Հայկաշատ Աղասյանը 1993թ. արժանացել է «Ոսկե Օրփեոս» մրցանակի: Խմբավար Արթո Չիֆթյանը

---

հիմնադրել է Պլովդիվի երիտասարդ սիմֆոնիկ նվագախումբը, իսկ Պետրոս Փափազյանը 1981թ. ստեղծել է «Օրիենտալ» խումբը, գրել է տրիոներ, կվարտետներ, սոլոներ: Մանկավարժության բնագավառում աչքի է ընկնում Նատալյա Աֆեյանը, որը դասավանդում է վոկալ և բեմական արվեստ:

1897թ. Ռուսջուկում Մ.Մինասյանը և Ֆ.Ոսկերչյանը կառուցել են թատրոնի հատուկ շենք, որը բուլղարական հողի վրա հայկական առաջին թատրոնը կարելի է համարել<sup>1</sup>, թեև բուլղարահայ համայնքի առաջին ինքնագործ թատերական խմբերը ստեղծվել են ավելի վաղ՝ հայկական դպրոցներին կից: 1906թ. Հակոբյան ամուսինները Վառնայում ստեղծել են «Օրիենտալ» թատերախումբը, իսկ 1925թ. թատերախումբ է կազմակերպվել Պլովդիվի «Հառաջ» ընթերցարանին կից՝ Օնիկ Քեչյանի, Խաչիկ Պալյանի և Պետիկ Զավենի ջանքերով: 1930-ական թթ. թատերական խմբեր են գործել ՀՕԿ մասնաճյուղերին կից: 1950-1970-ական թթ. «Երևան» մշակութային միությանը կից գործող թատերական խմբերից հատկապես հայտնի էին Սոֆիայի Գ.Սունդուկյանի անվան, Վառնայի Ալ.Շիրվանզադեի անվան և Պլովդիվի թատերախմբերը (տարբեր տարիների հյուրախաղերի են հրավիրվել Հայաստան և արժանացել բարձր գնահատականի): Դերասան Սարգիս Մուհրիբյանը 1957թ. ստեղծել է Սոֆիայի բուլղարական պետական երգիծանքի թատրոնը: 1989թ. Պլովդիվում ստեղծվել է Պարոնյան թատերախումբը: Պողոս Աֆեյանը եղել է Պլովդիվի ժողովրդական օպերայի գլխավոր

---

<sup>1</sup> Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Բ, Երևան, 1967, էջ 128:

բեմադրիչը: Բեմադրիչ, Բուլղարիայի ժողովրդական արտիստ Գրիգոր Ազարյանն աշխատել է Պլովդիվում, ապա Սոֆիայի Վազովի անվան թատրոնում: Բեմադրիչ Խաչո Բոյաջիևը հեռուստատեսությամբ ներկայացրել է բազմաթիվ ծրագրեր և բեմադրություններ<sup>1</sup>:

1940-ական թվականներից Բուլղարիայում ֆիլմեր են նկարահանել Բուլղարիայի ժողովրդական արտիստ Գրիգոր Ազարյանը (Պլովդիվի թատրոնի, ապա Սոֆիայի Ի.Վազովի անվան թատրոնի ռեժիսոր), Խ.Բոյաջիևը: 1988թ. Բուլղարիայում նկարահանվել է «Ցեղասպանություն» վավերագրական ֆիլմը (ռեժիսոր և սցենարի հեղինակ՝ Սևդա Սևան): Իսկ կերպարվեստի ոլորտում Բուլղարիայում ճանաչման են արժանացել գեղանկարիչ և քանդակագործ Գրիգոր Ահարոնյանը, գեղանկարիչներ Տիրան Սարգսյանը, Հրանտ Անանյանը, Հայկուհի Հարությունյան-Խաչատրյանը (Հիլդա), Կարինե Փափազյանը, Ոսկան Ադամյանը, Արտաշ Թավուքճյանը, Նվարդ Աբգարյանը, քանդակագործ Հանրի Արաբյանը և ուրիշներ:

Բուլղարահայերը վաղ ժամանակաշրջանից սկսած ակտիվ մասնակցություն են ունեցել շինարարության գործին: Ստեփանոս Ասողիկը հայտնում է, որ Բարսեղ Բուլղարասպան կայսրը Բուլղարիայում կատարած ավերածություններից հետո հայ շինարարների մի մեծ խումբ է տեղափոխել Բուլղարիա՝ քանդված երկիրը կառուցելու համար: Հայ շինարարների, ճարտարապետների մասին տեղեկություններ կան հետագայում ևս: Բուլղարիայի

---

<sup>1</sup> Տե՛ս Բախչիւնյան Ա., նշվ. աշխ., էջ 124-126, 128:

---

հնագույն հուշարձաններից մեկն է Բաչկովոյի վանքը, որը հիմնվել է 1084թ. հայ իշխան Բակուրյանի և նրա եղբայր Աբաս Բակուրյանի կողմից<sup>1</sup>: Աչքի ընկնող ճարտարապետներից է Լևոն Ֆիլիպովը, որի նախագծով Վելիկո Տոնովո քաղաքում կառուցվել են բազմաթիվ շենքեր, 1984թ. այստեղ բացվել է նրա տուն-թանգարանը:

### ***Լեհաստան***

Լեհահայերը դարեր շարունակ ակտիվ գործունեություն են ծավալել գիտության և մշակույթի բնագավառներում: Նրանք նպաստել են ինչպես լեհական, այնպես էլ հայկական գիտության ու մշակույթի զարգացմանը:

Լեհաստանում գոյություն են ունեցել հայկական գրչության նշանավոր կենտրոններ Լվովում, Կամենեցում, Գալիչում, Ջամոչչեում և այլուր, որտեղ գրվել և ընդօրինակվել են հարյուրավոր ձեռագրեր: Լեհահայ գրչության օջախներից մեզ հասած ձեռագիր մատյանների թիվը հաշվվում է մոտ 200, որի կեսը գտնվում է Հայաստանի Մատենադարանում, իսկ մյուսները ցրված են աշխարհի տարբեր ձեռագրական ժողովածուների մեջ: Լեհաստանում հայկական ձեռագրերի մեջ կան դատաստանագրքեր, տոմարագրքեր, փիլիսոփայական բնագրեր, քերականություններ և այլն: Մեծ թիվ են կազմում մանավանդ կրոնական բովանդակությամբ ձեռագրերը: Մեզ հայտնի են լեհահայ մի շարք գրիչներ, որոնք բազմաթիվ ձեռագրեր են ընդօրինակել: Նրանցից

---

<sup>1</sup> Աբրահամյան Ա., նշվ. աշխ., հ. Ա, Երևան, 1964, էջ 326:



կարելի է առանձնացնել Մինասին, Հակոբ և Ղազար Թոխաթեցիներին, Գրիգոր Տոմաժիսկուն, Թորոս դպիրին, Ստեփանոս Լեհացուն, Արթունին, Ջատիկին և ուրիշներին: Այդ գրիչներից ոմանք եղել են նաև մանրանկարիչներ:

Լեհահայ մատենագիտության մեջ նշանակալի տեղ ունի պատմագրությունը: Լեհահայ պատմագրության աչքի ընկնող դեմքերից են Հովհաննես Ավագերեցը, Սիմեոն Լեհացին, Հովհաննես Կամենեցիացին, Յան Տոմաշ Յուզեֆովիչը և այլք: Պատմաբան, բանահավաք, աստվածաբանության ու փիլիսոփայության պրոֆեսոր Վինցենտի Ֆերերի Սադոկ Բարոնչը գրել է երեք տասնյակ մենագրություններ և բազմաթիվ հոդվածներ, իսկ Ֆրանցիսկ Բսավերի Չախարիասևիչը եղել է աստվածաբանության դոկտոր:

Աստվածաբանական և փիլիսոփայական խնդիրներով են զբաղվել Ստեֆան Լեոպոլիտան, Ջամոշչի ակադեմիայի առաջին ռեկտոր Մելիխոր Ստեֆանովիչը, Սահակովիչ Կասյանը, Ֆրանցիշեկ Բոգդանովիչը, Շիմոն Բեդրոսովիչը, Ջամոշչի ակադեմիայի ռեկտոր Յակուբ Առաքելովիչը, Դեոդաթ (Աստվածատուր) Ներսեսովիչը, Ստեփանոս Բեռնարդովիչ Լեհացին, Ստեփանոս Ռոշքան, Բսավերի Աբգարո Չախարյասևիչը, Յակոբ Ստեփան Ավգուստինովիչը, Կոստանտին Ավտիքը, Սիհալ Ավտիքը, Ավետիք Բոնավենտուրան և այլք: Այս բնույթի գրականության թարգմանությամբ են զբաղվել Գաբրիել Չախարովիչը, Վարդան Հունանյանը, Կժիշտոֆ Գորիչկա Հոլուբովիչը և այլք:

Գրական ստեղծագործություններով աչքի են ընկել Մինաս Թոխաթեցին, Շիմոն Շիմոնովիչը, Պարսամ Տրապիզունցին, Հակոբ

---

Թոխաթեցին, Լազար Թոխաթեցին<sup>1</sup>: 19-րդ դ. լեհ գրականության զարգացմանը նպաստել են Կարոլ Բոլոզ դը Անտոնևիչը, Յուզեֆ Դիոնեզի Մինասովիչը, Կաետան Աբգարովիչը, Ադոլֆ Աբրահամովիչը, Յան Զախարյասևիչը և այլք: 19-20-րդ դդ. գրողներից աչքի են ընկնում Կաետան Աբգարովիչը, Յան Ավգուստինովիչը, Ստանիսլավ Բարոնչը, Անջեյ Մանդայանը:

Յուզեֆ Էպիֆանի Մինասովիչը Վարշավայի ազգային գրադարանի հիմնադիրներից էր ու առաջին տնօրենը: Փիլիսոփայության դոկտոր Գժեգոժ Փիրամովիչը եղել է Լեհաստանի լուսավորության նախարարության պատասխանատու քարտուղար, Լեհաստանի լուսավորության ծրագրի համախմբագիր ու Լեհաստանի բոլոր դպրոցների գլխավոր տեսուչ, հեղինակել է մանկավարժական մի շարք գիտական աշխատություններ, դասագրքեր, ձեռնարկներ: Նշանավոր աստղագետ է եղել լվովահայ Տոմաշը: Բժշկական գիտությունների դոկտոր Յան Դովինիկ Պյոտր Յասկևիչը հիմնադրել է բնական գիտությունների, անատոմիայի, վիրաբուժության ամբիոններ, լաբորատորիաներ ու կաբինետներ, կառուցել է կլինիկական հիվանդանոց, ստեղծել է բուսաբանական այգի: Որպես խոշոր երկրաբան ու հանքաբան ընտրվել է Արքունի ֆինանսական հանձնաժողովի գլխավոր խորհրդատու՝ արդյունաբերության և լեռնագործության գծով: Դեղագործ, քիմիկոս Թեոդոր Թորոսովիչն ունեցել է սեփական դեղատուն, գրել 100-ից ավելի գիտական աշխատություն: Իգնասի

---

<sup>1</sup> Գալստեան Զ., Հայկական գաղթավայրերի առաջացումը Ուկրաինայում եւ Լեհաստանում, «Էջեր հայ գաղթավայրերի պատմութեան», Երևան, 1996, էջ 77-98:

Լուկասն իչը զբաղվել է նավթարդյունաբերության խնդիրներով: Լեհահայերն աչքի են ընկել նաև դիվանագիտության մեջ: Նրանք կարևոր դեր են կատարել հասկապես Արևելքում լեհական արտաքին քաղաքականության մեջ: Լեհաստանին դիվանագիտական մեծ ծառայություն են մատուցել Շիմոն Բեդրոսովիչը, Կասպեր Սինանովիչ Շիմանսկին, Շիմոն Պետրովիչը, Կոստանտին Պրի Ջգոբսկին, Ռոմասկևիչը, Բոգդան Գուրդին և այլք:

20-րդ դարի լեհահայ գիտնականներից աչքի են ընկել գյուտարար Բորիս Բարոյանը, երկրաբան Էրազմ Բարոնչը, վիրաբույժ Ռոման Բարոնչը, իրավաբան Դոմինիկոս Յակոբովիչը<sup>1</sup>: Արվեստաբանության բնագավառում աչքի են ընկել Յան Կլեմենս Սինասովիչը, Յան Բոլոգ Անտոնովիչը, որը Լեհաստանի ԳԱ ակադեմիկոս էր:

Լեհահայերը նշանակալի ավանդ են ներդրել Լեհաստանի մշակույթի զարգացման մեջ: Երաժշտության ասպարեզում նշանավոր է հանճարեղ կոմպոզիտոր Շոպենի հայ ասիստենտ Կարլ Միկուլը, որը 1858-1887թթ. դեկավարել է Լվովի երաժիշտների միությունը<sup>2</sup>: 19-րդ դ. երաժշտության ասպարեզում աչքի են ընկել կոմպոզիտոր Յոզեֆ Նիկոբովիչը, լեհական ազգային օպերայի հիմնադիր, կոմպոզիտոր Ստանիսլավ Մոնյուշկոն, որը հայկական ծագում ուներ մոր կողմից: 1666թ. Լվովում հայ կաթոլիկ դպրանոցում հիմնադրվեց դպրաթատրոն, որտեղ դրամաները բեմադրվել են հայերեն, լատիներեն, լեհերեն: Այստեղ

<sup>1</sup> Բախչինյան Ա., նշվ. աշխ., էջ 184-185, 190:

<sup>2</sup> Աբրահամյան Ա., նշվ. աշխ., հ. Ա, էջ 233:

---

հետամուտ էին հայերենի առողջանության ու հոետորական արվեստի կատարելագործմանը: Կինոբեմադրիչ, թատերագիր Եժի Կավալերովիչը 1950թ. և 1955թ. արժանացել է լեհական պետական մրցանակների: Կերպարվեստի բնագավառում զարգացած են եղել որմնանկարչությունը և մանրանկարչությունը: 16-րդ դ. ճանաչված մանրանկարիչներ են Մինաս Թոխաթեցին, Ղազար Թոխաթեցին, Ղազար Սուչավացին, Ղազար Բաբերդացին, Ղազար Իվաշկևիչը և ուրիշներ: Պավել Շիմոն և Յան Բոգուշևիչները, անցնելով հաստոցային նկարչությանը, վրձնում են լեհ թագավորների դիմանկարներ ու պատմական թեմաներով կտավներ: 19-րդ դ. ճանաչված են եղել իրապաշտական ուղղության հետևորդներ Ռաֆալ Հաձևիչը, Թեոդոր Աքսենտովիչը, իսկ 20-րդ դարում՝ Ստանիսլավ Բոբերը, Վլադիսլավ Ավգուստինովիչ-Դոմբրովսկան, Արուսյակ Կոզակևիչը: Քանդակագործության ասպարեզում աչքի է ընկել Թադեուշ Բարոնչը: Ճարտարապետներից նշանավոր են Յան դե Վիտտեն և Անտուան Ջախարիասևիչը: 1927-1934 և 1938-1939թթ. Լվովում լեհերեն հրատարակվել է «*Pos laniec S'w grezegorza*» (Սուրհանդակ Սբ. Գրիգորի) ամսագիրը, որը 1930 թվականից դարձել է Հայության արքեպիսկոպոսական միության պաշտոնական պարբերականը: 1935-1938թթ. Լվովում Հայության արքեպիսկոպոսական միության կողմից հրատարակվել է նաև «Gregoriana» հանդեսը, որտեղ հիմնականում տպագրվել են լեհահայ գաղութի պատմությանն ու եկեղեցական գործիչներին նվիրված հոդվածներ: 1993 թվականից Գլիվիցիում Լեհաստանի հայոց ընկերության («Ընկերություն Հայոց ի Լեհաստանի») կողմից հրատարակվում է «*Pos laniec S'w grezegorza*» (Սուրհանդակ Սբ. Գրիգոր Լուսավորչի) ամսագիրը: 1993

թվականից Կրակովում *պարբերաբար լույս է տեսնում «BIULETYN ORMIANS's kiego towarzystwa kulturalnego»*-ը (Հայ մշակութային ընկերության տեղեկագիրը), որտեղ տպագրվում են պատմական, մշակութային, հայության և Հայաստանի ժամանակակից հարցերին նվիրված հոդվածներ<sup>1</sup>:

Վերջին տասնամյակներին նկատվում է համայնքի որոշակի աշխուժացում: Ներկայում նույնպես լեհահայերի մտավոր ներուժը բավական պատկառելի է, որի դրսևորման և արդյունավետ գործադրման ուղղությամբ սկսել են իրականացվել որոշակի քայլեր:

2003թ. դրությամբ Լեհաստանում ապրում են իրենց հայկական ծագումն ընդունող 15-20 հազար հայեր, որոնց 90 տոկոսը բարձրագույն կրթություն ունի: Լեհ հասարակության մեջ նրանք բարձր դիրք են գրավում. գերազանցապես զբաղված են պետական կառույցներում, գիտության ու մշակույթի բնագավառներում: 1980թ. Կրակովի լեհ ազգագրական ընկերությանը կից հիմնադրվեց Հայ մշակույթի համակիրների շրջանակը (ընկերություն): Ընկերության նախագահն էր (1980-1988թթ.) պատմաբան, իրավաբան և թարգմանիչ Միխայ Բոհուսևիչը: 1981թ. նույնանուն ընկերություն է հիմնադրվել Վարշավայում, իսկ 1984թ.՝ Գդանսկում: Ընկերությունների նպատակն է համախմբել լեհահայերին, ներկայացնել գաղութի ու Հայաստանի պատմությունը և մշակույթը: 1980-1990-ական թթ. հատկապես ակտիվ աշխատել է Վարշավայի ընկերությունը,

---

<sup>1</sup> «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 288-289:

---

որի անդամների թիվը 1994թ. 240 էր: Ընկերության հիմնադիրը և խնամակալը (1980-2001թթ.) Վարշավայի համալսարանի դասախոս, թարգմանիչ Լևոն Տեր-Օհանյանն էր: 1980-1990-ական թթ. ընկերությունը լեհերեն հրատարակել է 30-ից ավելի գրքույկ, այդ թվում՝ Զբիգնև Կոշչովի «Լեհահայ երաժշտության ակնարկներ» (1980), Հակոբ Կրիկորի «Ճանաչված և ոչ ճանաչված հայերը» (1986), Բոգդան Գեմբարսկու «Նամակ վաղեմի թուրք ծանոթիս» (1987), Յալիուշ Գլոդկեի «Արցախ» (1989), Կատաժինա Ռաչովսկու և Լևոն Տեր-Օհանյանի «Մատենագիտություն. հայերը Լեհաստանում» (1990) և այլն: Հայ մշակութային ընկերություն է հիմնադրվել 1985թ. Կրակովում: Հիմնադիրն ու նախագահը լեհահայ Ադամ Տերլեցկին է: Ընկերությունը հրատարակում է ՀՄԸ Տեղեկագիր Լեհաստանի մշակույթի և արվեստի նախարարության ֆինանսական օգնությամբ: Տեղեկագրում հրապարակվում են լեհահայ գաղութի և Հայաստանի պատմությանը, մշակույթին, ինչպես նաև արդի խնդիրներին նվիրված գիտաճանաչողական հոդվածներ, կարծիքներ և այլն<sup>1</sup>:

Կարևոր նշանակություն ունեն հայ համայնքում տեղի ունեցող մշակութային միջոցառումները: Այսպես, օրինակ, 2010թ. ապրիլին Զամոչչ քաղաքի թանգարանում անցկացվեց միջազգային կոնֆերանս՝ «Միջուռքի հայ արվեստը» խորագրով: Կոնֆերանսին մասնակցեցին չորս տասնյակից ավելի արվեստաբաններ, պատմաբաններ, հուշարձանագետներ Հայաստանից, Լեհաստանից,

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 283, 285:

Ռումինիայից, Հունգարիայից, Բուլղարիայից և բազմաթիվ այլ երկրներից<sup>1</sup>:

### **Հունգարիա**

Հունգարիայի հայկական գաղթօջախներում գրվել և ընդօրինակվել են ձեռագրեր: 17-րդ դարում հայկական ձեռագրեր են գրվել Ջուրջովայում, 19-րդ դարում՝ Եղիսաբեթուպոլիսում, Արմենոպոլիսում (այժմ՝ Գեռլա, Ռումինիա), Բրաշովում, Մեքվիզում և Կլուժում: Հունգարահայ գիտնականները մեծ աշխատանք են կատարել հայ մշակույթը տեղացիներին ներկայացնելու, ինչպես և լատիներենից ու հունգարերենից հայերեն թարգմանություններ կատարելու գործում: Աչքի ընկնող թարգմանիչներ են եղել Բարսեղ ԼապովՖյանը, Վարդան Ագոնցը և Թեոդորոս Մեդիաշցին<sup>2</sup>:

19-րդ դ. երկրորդ կեսի – 20-րդ դ. սկզբի պատմագիտության առավել նշանավոր գործիչներից են Խաչիկ Սոնգոտյանը, Անտոն Մոլնարյանը, Ղուկաս Բադրուպանյանը, Լապո Գոպչան, Մորիկ (Մորից) Լուկաչը, Բելա Լուկաչը, Գրիգոր Գովրիկյանը, Լուքաշ Ավետիքը (Ղուկաս Ավետիքյան), Դյուլա Մերզան (Հուլիոս Միրզայանը), Յանոշ Կարաչոնին և այլք: Գրականագետներից աչքի է ընկնում Շանդոր Կոզոչայը:

Մանկավարժական գործունեությամբ հայտնի հայերից արժե առանձնացնել 19-րդ դարում գործած Ջաքարիա Կապրուշյանին և

---

<sup>1</sup> <http://ha.nt.am/newsday.php?p=0&c=0&t=0&r=0&year=2010&month=06&day=02&shownews=10784&p=0&c=0&t=0&r=0&year=2010&month=06&day=02&shownews=10785&LangID=4#10785>

<sup>2</sup> Արքահամյան Ա., նշվ. աշխ., հ. Բ, էջ 151:

---

Գրիգոր Ցեցյանին, իսկ 20-րդ դարում՝ Անահիտ Արգիրտպուլյին:

Հունգարահայ դիվանագետներից է Ապետիքը (Petrus Bedik-ը), որը մեծ հեղինակություն է ունեցել եվրոպական արքունիքներում: Իրավաբանության ասպարեզում է գործել Իգնաց Լուկաչը:

Հունգարահայերից բժշկության ասպարեզում հայտնի են եղել Ջակարիչ Դոնոգանը, Մարտոն Չաուշը, Ստեփան Մալիյանը, Կարոյ Ագոնցը, Գերգեյ Բադրուպանին, դեղագետ Բելա Իշեկուցը: Բուսաբանությամբ են զբաղվել Գաբրիել Վոլֆը, Անտոն Ցեցը, իսկ նավթագիտությամբ՝ Իմրե Կորբուլին:

19-րդ դարում իրենց ստեղծագործություններով աչքի են ընկել մի շարք հունգարահայ գրողներ՝ Լասլո Գորովեն, Ջաքարիա Կապրուշյանը, Գերգեյ Շիմային, Ռոբերտոնե Տաբորին (Աննա Տուչեկ), Իշտվան Պետելեյը, 20-րդ դարում՝ Ալադար Լասլոֆին:

Երաժիշտներից հանրահայտ են դիրիժոր Միկլոշ Լուկաչը, օպերային երգչուհի Ստեֆանիա Մոլդովանը, Հիլդա Ագոնցը, դաշնակահար Սևերին Վարդերեսովիչը, Մարիա Ֆլոնդորը: «Հունգարիայի սոխակ» են անվանել հայտնի երգչուհի, հայագգի Կորնելիա Հոլոշիին<sup>1</sup>: Ներկայում գործող հայ երաժիշտներից են երգեհոնահար Իշտվան Գարագույը, որը կատարում է հայկական երաժշտություն, Շտեֆանիա Մոլդովան: Դերասաններից նշանավոր են Յուլիշկա Լուկաչը, Գաբոր Ագարդին, Իլոնա Դայբուկատը, Գերյո Մալին, Շանդոր Տոմպան: Որպես թատերական քննադատ մեծ համարում են ունեցել Գրիգոր Չիքիյանը, թատերագետ Մ.Ակոբշան: Նկարիչներից նշանավոր են Շիմոն

---

<sup>1</sup> Հայ ժողովրդի պատմություն (ՀԳԱ հրատ.), հ. 6, էջ 689:



Հովոշին, Առնոլդ Գորոշը, Զուլտան Նուրիջանին, իսկ ճարտարապետներից՝ Միքայել Մալիյանը և Վաքար Տիպորին:

Հունգարիայում լույս տեսած պարբերականներից մեծարժեք է հատկապես «Արմենիա» հունգարերեն հայագիտական ամսագիրը, որը լույս է տեսել 1887-1907, 1912-1913թթ. Տրանսիլվանիայի Գեռլաքադաքում (այժմ՝ Ռումինիայում): «Արմենիան» խմբագրել են Խ.Սոնգոտյանը, Գ.Գովրիկյանը, Ս.Հերմանը, Գ.Պապը: Աշխատակցել են Յա. Յեցը, Ղ.Բադրուպանյանը, Հ.Չիլինգարյանը և ուրիշներ: 1992թ. թերթը վերահրատարակվել է Կլուժում (Ռումինիա): Հունգարիայի հայ համայնքում որոշակի աշխուժացում է նկատվում 1990-ական թթ. սկսած: 1993 թվականից գործող Հայ մշակութային միությունը լույս է ընծայել հայոց պատմությանը նվիրված աշխատություններ, հրատարակման է պատրաստել հայերեն-հունգարերեն, հունգարերեն-հայերեն բառարանները: «Արարատ» Հունգարիայի Հայ ազգային փոքրամասնության ինքնավարության պաշտոնաթերթը լույս է տեսնում 1995 թվականից, Բուդապեշտում, ամիսը մեկ անգամ՝ հունգարերեն և հայերեն: Մեծ տեղ է հատկացնում հունգարահայ գաղութի պատմության, հայ մշակույթի և ազգային ավանդույթների պահպանման ու տարածման, հայ-հունգարական կապերի ամրապնդման հարցերին, հաղորդում է լուրեր Հայաստանի իրադարձություններից: Թերթի պատասխանատու հրատարակիչն է Ալեքսան Ավանեսյանը<sup>1</sup>:

<sup>1</sup> «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 383:

---

## ***Ռուսինիա***

Ռուսինիայում նույնպես հայերն ակտիվ գիտական և մշակութային գործունեություն են ծավալել դարեր շարունակ:

16-17-րդ դդ. Ռուսինիայում գրված մի շարք ձեռագրեր են հասել մեզ, որոնց հեղինակներն են Սիմեոն եպիսկոպոսը, Հովհաննես քահանան, Սիմեոն, Անտոն, Խաչատուր գրիչները և այլք:

Ռուսինիայում հայագիտության զարգացման մեջ դեր են ունեցել Գրիգոր Պըրզգյանը (Բույուկլիու), Մկրտիչ Պոտուրյանը, Անայիս Ներսիսյանը, արևելագետ, գրող, գրականագետ է եղել Հակոբ Սիրունին:

Ռուսինիայում լրագրության ասպարեզում աչքի են ընկել Թեոդոր Պալասանը և Վարդան Մեշտուճյանը:

Հայկական առաջին տպարանը Ռուսինիայում հիմնվել է 1847թ. Յաշ քաղաքում: Այնուհետև հայկական տպարաններ են ստեղծվել Գալաց և Տուլչա քաղաքներում: Հրատարակչական արդյունավետ գործունեություն է ծավալել Գալացի հայկական հրատարակչությունը, որը կազմակերպել է Ջ.Ք. Փափազյանը: Այս տպարանը կոչվել է «Անի»: Փափազյանն առաջինն է հիմք դրել հայ պարբերականի հրատարակությանը Ռուսինիայի գաղթավայրում: Նա Գալացում 1895-1899թթ. հրատարակել է հայերեն և ռուսերեն «Հայկական տարեցույց», որը բավական հարուստ բովանդակություն է ունեցել<sup>1</sup>:

Ռուսինահայ մամուլի ավելի քան 115-ամյա պատմության ընթացքում լույս են տեսել մոտ 50 անուն հայերեն պարբերական-

---

<sup>1</sup> Աբրահամյան Ա., նշվ. աշխ., հ. Բ, էջ 140-141:

ներ: Բացի «Հայկական տարեցույցից», նշանավոր են նաև «Անի» հայագիտական հանդեսը, «Արագ» շաբաթաթերթը, «Արարատ» հայագիտական հանդեսը (ռուսիներեն), որը վերահրատարակվում է 1990 թվականից, «Աուրորա» («Արշալույս») հայագիտական կիսամյա հանդեսը, «Հայ հանրագիտակ» տեղեկատուն, «Նոր արշալույս» քաղաքական, գրական և մշակութային եռօրյան, «Նոր կյանք» հասարակական-քաղաքական, տնտեսական, մշակութային շաբաթաթերթը, «Շեփոր» գրական-պատմագիտական պատկերազարդ հանդեսը, «Պահակ» գրական, հասարակական-քաղաքական երկլեզվյա (հայերեն և ռուսիներեն) շաբաթաթերթը, «Սևան» պատկերազարդ ամսագիրը:

Ճարտարագետ, արտադրության կազմակերպիչ Վիրջիլ Աքթարյանը եղել է Ռուսիայի մեքենաշինական և էլեկտրատեխնիկական արդյունաբերության նախարար<sup>1</sup>: Մաթեմատիկայի ասպարեզում աչքի են ընկել Սպիրու Հարետը, Յոն Մելիքը, իսկ ֆիզիկայում՝ Էոնեստ Առուշանովը, աստղագիտությունում՝ Սպիրու Հարետը:

Բժշկության բնագավառում նշանակալի գործունեություն են ծավալել Սոկոր Գաբրիելը, Մարթա Տրանկուն, Բուխարեստի բժշկական ֆակուլտետի պրոֆեսոր Քրիստեա Բուիկլիուն (Բըյըկյան), Ռուսիայի դեղագործական միության նախագահի տեղակալ Անտոն Ալթընը, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յակոբ Յակոբովիչը, Ռուսիայում ծերաբանների և ծերաբույժների դպրոցի հիմնադիր Աննա Ասլանը, բժշկական

<sup>1</sup> «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 452:

---

գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լևոն Միրզախանյանը, Բոտոշանի քաղաքապետ Դիոնիսե Գոյլավը, Ռումինիայի բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Պերճ Աղճյանը, Ռումինիայի առողջապահության նախարար Դումիտրու Բագդասարը (1945-1946թթ., իսկ 1947թ. այդ պաշտոնը զբաղեցրել է Ֆլորենցիա Բագդասարը), Ասթմալոզիայի միջազգային ընկերության փոխնախագահ Երվանդ Սերոբյանը, Գրիգոր Փամբուքյանը<sup>1</sup>:

Հայերը նշանակալի դեր են ունեցել դիվանագիտության բնագավառում: 15-րդ դ. վերջին Վալախիայի Վետզաուլ իշխանի մոտ դիվանագետի պաշտոնով աշխատել է Պետր Գրիգորիչը կամ ռումինական գրականության մեջ ավելի ծանոթ՝ Արմեն Պետրը, որը եղել է ժամանակի ճանաչված գիտնականներից: Դիվանագետ է եղել նաև Վարդիկ անունով մի հայ, ինչպես նաև նրա որդին՝ Յուրաշկո Վարդիկովիչը: Ռումինիայում խոշոր դիվանագետ է եղել Մանուկ բեյը, որն ակնառու դեր է ունեցել ռումինաթուրքական և ռումինա-ռուսական հարաբերություններում<sup>2</sup>: Միջազգային իրավունքի հայազգի պրոֆեսոր էր Պետրե Թ. Միսիրը: Իրավաբաններից աչքի են ընկել Հյուրմյուզ Ազնավուրյանը, Ելենա Ներուզը: Իսկ տնտեսագետ Գրիգորի Տրանկու-Յաշը հիմնադրել և ղեկավարել է Ռումինիայի աշխատանքի նախարարությունը: Ականավոր փիլիսոփա Վասիլե Կոնտան 1880-1881թթ. մշակույթի և լուսավորության նախարարն էր: Փիլիսոփայությամբ են զբաղվել նաև Նիկոլայե Բագդասարը, Արամ Ֆրենկյանը:

---

<sup>1</sup> Տե՛ս Բախչինյան Ա., նշվ. աշխ., էջ 252, 254, 265, 267:

<sup>2</sup> Աբրահամյան Ա., նշվ. աշխ., հ. Ա, էջ 349:

Գրականության ասպարեզում աչքի են ընկել Կարապետ Իրրըիլեանուն, Գրիգոր Անուշյանը, Գեորգե Ասաքին, Լազար Ասաքիևիչը, Վիկտոր Կոզմինը, Հարություն Խնդիրյանը, Էդվարդ Գոլանճյանը, Շտեֆան Հակոբյանը, Էդգար Ասլանը, Հայկ և Արշավիր Աթթերյանները, Յոան Միսիրը, Անայիս Ներսեսյանը, Վարդան Առաքելյանը, Պետրոս Խորասանճյանը, Դան Դեշիլուն, Սիմեոն Դավիթյանը, Ալեքսանդրու Շահիկյանը: Երկրում հանրաճանաչ գրող է Տիգրան Բաբոյանը, որը Ռուսինիա-Հայաստան ընկերության հիմնադիրն ու փոխնախագահն է, Ռուսինիայի Ազատ լրագրողների ընկերության նախագահը, «Դիպլոմատ կլուբ» թերթի հիմնադիր տնօրենը: Ռուսինահայ հրապարակագիր Տիգրան Գրիգորյանը 1993թ. Բուխարեստում հրատարակել է «Հայ ժողովրդի պատմությունը և մշակույթը» ռումիներեն գիրքը, որն արժանացել է հայ և ռումին հասարակայնության գնահատանքին: Հեղինակը պարգևատրվել է Ռուսինիայի ակադեմիայի «Տիմիթրիե Օնչեուլ» մրցանակով: Հանրությանն է ներկայացվել ռումինահայ մտավորական Մելինե Փոլադյանի ռումիներեն լույս տեսած «Հայկական հեքիաթներ» գիրքը: Իրենց առաջին գրքերով գրականություն են մուտք գործել հայագրի Փաուլ Գրիգորյանը (ռումինական ռադիոյի տնօրենի տեղակալ) և երիտասարդ բանաստեղծ Մարիուս Դանիել Թևանյանը: Լույս են տեսել Պոկտան Քրուշի «Հայ դեմքեր Ռումանիո մեջ» գիրքը և Փոլ Թումանյանի «Ուրմա Սքափա Թուրմա» վեպը: Գրականագիտությամբ է զբաղվել Նիկոլայե Բալոտը: Ռումինահայ համայնքի հանրահայտ ներկայացուցիչներից է գրող Վարուժան Ոսկանյանը, որը եղել է Ռուսինիայի ֆինանսների նախարար, այժմ Ռումինահայոց միության նախագահն է:

---

Ռուսինահայերը նշանակալի ներդրում են ունեցել երկրի արվեստի զանազան ճյուղերի զարգացման մեջ:

Հայ համայնքի կյանքում կարևոր իրադարձություն էր նաև 1906թ. Ռուսինիայի Ազգային ընդհանուր ցուցահանդեսի հայկական բաժնի բացումը, ուր ցուցադրված հայկական արվեստի ու մշակույթի նմուշները մեծ տպավորություն են թողել<sup>1</sup>: Արվեստաբանության ասպարեզում արժեքավոր գործունեություն է ծավալել Ռուսինիայի ԳԱ թղթակից անդամ Գրիգոր Զամպաքճյանը:

Երաժշտարվեստում աչքի են ընկնում կոմպոզիտոր Միհայիլ Ժորան, Ռուսինիայի երգահանների միության նախագահ Մաթեյ Սոկորը, Բուխարեստի օպերայի և բալետի թատրոնի մեներգիչներ Կարպիս Զոպյանը, Դավիթ Հովհաննիսյանը, երգչուհիներ Արաքս Սվաճյանը, Շաքե Շիշմանյանը, Անահիտ Քերփիչյանը, Նեկտար Ֆլունդորը, ջութակահարներ Գրիգոր-Միհրդատ Բուիկլիուն, Արտաշես և Հովհաննես Պլոյանները, Թեոդոր Բուրադան, Կարպիս Ավագյանը, Դանիել-Վարուժան Կոզիկյանը, դաշնակահար Վիրջիլ Գեորգիուն, երգչուհի, դերասանուհի Անդա Կալուզարյանուն: Ներկայում ռուսինահայերից երաժշտության ասպարեզում հանրահայտ են Կորինա Կիրակը, Հարրի Դավիդյանը, Գաբրիել և Կարպիս Դեդեյան եղբայրները, Մադլեն Դամենիսկուն, Սիմոն Էդիտան, դաշնակահար Ժիրայր Գադեմջյանը, երաժշտագիտական աշխատանքների հեղինակներ են Միսիր Նիկոլայեն, Չոմակ Էմանուիլը և այլք:

---

<sup>1</sup> Հայ ժողովրդի պատմություն (ՀԳԱ հրատ.), հ. 6, էջ 679:

Ռուսինահայ թատրոնի կազմակերպման գործում նշանակալի ավանդ են ներդրել Լիպարիտ Ավետիսյանը, Թովմաս Ֆասուլաճյանը, Գ.Ավետյանինը, Տ.Նշանյանը, Պ.Կարապետյանը, Ե.Չափրաստը, ռեժիսորներ Տ.Կարժարյանը, Մ.Զաքարյանը, բեմադրիչ Յ.Շահիկյանը, Պերճ Տիրատուրյանը, դերասաններ Ա.Կիմենյանը, Ա.Մանուսյանը, Գ.Գրիգորյանը, Ա.Սայանը, Գ.Ոսկյանը Թ.Ծաղիկյանը, Հ.Աքթերյանը, Թ.Զաքարյանը և ուրիշներ: Աչքի է ընկնում թատերագիր Ի.Կ. Ասլանը: Նշանավոր են դերասաններ Յանկու Պետրեսկուն (Յոն Պետրոսյան), Ակոբը (Հակոբ Քյոլյանը), դերասանուհիներ Ջ.Գուանյանը, Ժենի Առնոտը, Անկա և Լիա Շահիկյանները, Լուիզա Տերտերյանը և ուրիշներ:

Ռուսինական կինոյի հիմնադիրներից է Յ.Շահիկյանը: Գեղարվեստական ֆիլմերում նկարահանվել են դերասաններ Յ.Պետրոսկուն, Գ.Պալքյանը, Ա.Վերդյանը, Դ.Աշթիկյանը, Մ.Կերակաշը, Դ.Գևորգյանը, երգիչներ Դ.Հովհաննիսյանը, Մ.Կալուգարյանուն: Ճանաչված են կինոռեժիսոր Ա.Թադոսը (Թադևոսյան), կինոքննադատ Յ.Սուրբյանուն (Սուրբիասյան), հնչյունային օպերատոր Ա.Սալամանյանը, արձակագիր, կինոգետ Պ.Խորեասանճյանը և ուրիշներ<sup>1</sup>:

Նկարիչներից նշանավոր են Թեոդոր Ամանը, Թեոդոր Աստվածատուր Պըլըզյանը (Բույուկլիու), Բ.Վարդանյանը, Ա.Ղարիբյանը, Աբգար Բալթագարը, Չիկ Դամատյանը, Մ.Թորոսյանը և Հրանտ Ավագյանը, Ն.Ագոնցը: Ռուսինիայում ճանաչված են նկարիչներ Օ.Սեխապոսյանը, Նիկոլայե Յակոբովիչը, բեմանկարիչներ Յոն

<sup>1</sup> «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 454:

---

Սավան, Պողոսին (Պողոսյան), քանդակագործներ Ա.Էբերվայնր (Մեմեզյան), Հ.Թորոսյանը, արվեստաբան և նկարիչ Ա.Բալաթյանը և ուրիշներ: Քանդակագործության բնագավառում աչքի է ընկնում Արմենուհի Էբերվայնր: Ճարտարապետներից նշանավոր են վանեցի Յակոբ Մելիքը, որը եղել է նաև Վալաքիայի խորհրդարանի անդամ, Քրիստոֆի Չերքեզը:

### **Չեխիա**

Չեխիայում գիտական և մշակութային գործունեություն ծավալած հայերից առաջինը հիշատակվում է դեռևս 18-րդ դարում: Չեխիայում է ապրել և ստեղծագործել հայ վաճառական, աստվածաբան, բարոյագետ Աստվածատուրի որդի Գևորգ Դամասկոսցին (*Georgius Deodatus Damascenus*, չեխական աղբյուրներում՝ *Jiri Deodat*): Վերջինս 1714թ. հիմնել է Պրահայի առաջին սրճարանը, որը գործում է մինչև օրս (*U Zlateho Hada*՝ «Ոսկե օձի մոտ» անվանմամբ): Գևորգ Դամասկոսցին կենդանության օրոք հրատարակել է կրոնաբարոյական թեմայով լատիներեն 5 և գերմաներեն 3 գիրք, թողել 6 ձեռագիր, որոնք պահվում են Պրահայի և Չեխիայի այլ քաղաքների արխիվներում<sup>1</sup>:

Ընդհանուր առմամբ, ինչպես նշում են հետազոտողները, զգալիորեն բարձր է հայերի մասնակցությունը Չեխիայի գիտական և մշակութային կյանքին, ինչն այնքան էլ սպասելի չէր՝ ելնելով հայ համայնքի փոքրաթիվ լինելուց: «Հայերի մասնակցությունը Չեխիայի մշակութային և հասարակական կյանքի ամենատարբեր

---

<sup>1</sup> Տե՛ս [http://noravank.am/arm/seminar/detail.php?ELEMENT\\_ID=3820&sphrase\\_id=1491](http://noravank.am/arm/seminar/detail.php?ELEMENT_ID=3820&sphrase_id=1491)



ուղորտներում բավական բազմազան է: Հայերը որպես կամավորներ աշխատում են հասարակական կազմակերպություններում, դասավանդում համալսարաններում և մասնակցում Չեխիայում անցկացվող մշակութային փառատոների մեծ մասին: Մոցիլոլոգիական հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ հայերը մեծ համառությամբ և հաջողությամբ պայքարում են այն բանի համար, որ իրենց բարձր կրթամակարդակն ընդունվի Չեխիայում, ինչպես նաև առաջին հնարավորության դեպքում պատրաստակամությամբ և խանդավառությամբ ուսանում են չեխական համալսարաններում»<sup>1</sup>:

Հայերը Չեխիայում աչքի են ընկնում գիտության տարբեր բնագավառներում: Չեխիայիում հայագիտության ասպարեզում նշանակալի աշխատանքներ է կատարել արևմտահայ Նշան Մարտիրոսյանը (1894-1966): Ն.Մարտիրոսյանը 1918թ. ընդունվել է Պրահայի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետ: 1926թ. նա ստացել է դոկտորի գիտական աստիճան և մեկ տարի անց անցել դասախոսական աշխատանքի Պրահայի համալսարանում: Նա կատարել է նշանակալի աշխատանք արևելագիտության մեջ, ունի մի շարք հայագիտական ուսումնասիրություններ<sup>2</sup>:

Տնտեսագիտության դոկտոր Անտոնին Տեր-Մանուելյանը ծնվել է 1924թ. Վելկա Մորժինայում: Նա մաթեմատիկա և արդի վիճակագրություն է դասավանդել Պրահայի պոլիտեխնիկ և

---

<sup>1</sup> Սումյունի Ս., Չեխիայի հայերը. փոքր համայնք, մեծ ներուժ, [http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT\\_ID=2375](http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=2375)

<sup>2</sup> Տե՛ս Բարսեղյան Լ., Նշան Մարտիրոսյան, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, N 4, էջ 301-302:

---

կառավարման ինստիտուտներում և Մասաչուսեթսի համալսարանում: Մշակել է տնտեսագիտական նոր մեթոդներ և համակարգեր, զեկուցումներով հանդես է եկել Ֆրանսիայում, Անգլիայում, Հայաստանում (1974-1975թթ.)<sup>1</sup>:

Բնականաբար, հայկական մտավոր ներուժի զարգացման գործում կարևոր դերակատարություն ունեն Չեխիայի հայկական շաբաթօրյա դպրոցները, որոնք, չնայած իրենց սահմանափակ հնարավորություններին, այնուամենայնիվ, նպաստում են հայկական ինքնության պահպանմանը, հետևաբար՝ ապագայում հայրենիքի հետ համայնքի անդամի համագործակցության ծավալման նախադրյալներ են ստեղծում:

Մշակույթի ոլորտներից չեխահայերն առանձնապես աչքի են ընկնում նկարչության ասպարեզում: 1990-ականներից Չեխիայում հաստատված հայերի թվում կան ավելի քան երկու տասնյակ նկարիչներ, որոնցից ոմանք արդեն սեփական շինարարական կազմակերպություններ կամ մասնավոր պատկերասրահներ ունեն<sup>2</sup>: Նկարիչներից հայտնի են Տիգրան Աբրահամյանի, Գոռ Ավետիսյանի, Հովիկ Մուրադյանի, Մուրազ Մարտիրոսյանի, Գագիկ Մանուկյանի, Գագիկ Տոնյանի և այլոց անունները: Մուրազ Մարտիրոսյանի անհատական ցուցահանդեսը՝ «Մուրազ Մարտիրոսյանի գույները» խորագրով, 2010թ. կայացել է Պրահայի *GH ART Gallery* ցուցասրահում: Արվեստաբանության ասպարեզում հետաքրքրական մոտեցում է ցուցաբերել չեխահայ նկարիչ Տիգրան Աբրահամյանը՝

---

<sup>1</sup> Բախչինյան Ա., նշվ. աշխ., էջ 248:

<sup>2</sup> <http://www.radio.cz/ru/statja/72241>

ներկայացնելով 20-րդ դարի Սփյուռքի և Հայաստանի քսանից ավելի նկարիչների՝ Մարտիրոս Սարյանից, Արշիլ Գորկուց, Լևոն Թութունջյանից, Երվանդ Քոչարից մինչև Ասատուր և Պոլ Սարգիսյան՝ սեղմագրային ոճով, շատ հակիրճ, բայց և շատ դիպուկ բնորոշելով նրանց արվեստը<sup>1</sup>:

Չեխահայ արվեստագետներն աչքի են ընկնում նաև ներհամայնքային կյանքում: Այսպես, օրինակ, 2010թ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցառումների շրջանակներում հանդես եկան մի խումբ չեխահայ երաժիշտներ, իսկ *GH ART Gallery* ցուցասրահում բացվեց Պրահայում բնակվող տասնյակից ավելի հայ նկարիչների աշխատանքների ցուցահանդես՝ «Ի հիշատակ՝ 95 տարի անց» խորագրով<sup>2</sup>: Հայտնի են նաև հայ երաժիշտներ և թատերական գործիչներ:

Հայագետ Նշան Մարտիրոսյանի որդին՝ Հայկ Մարտիրոսյանը, նշանավոր կինոբեմադրիչ և կինոգետ է: Աշխատել է Պրահայի հեռուստատեսությունում, նկարահանել «Ֆուգա սև դաշնամուրի վրա» (1965, Մարսելի կինոփառատոնի առաջին մրցանակ), «Սլավոնական բերդաքաղաքը» շարժանկարները: Գրել է հոդվածներ չեխական կինոյի մասին, կատարել թարգմանություններ հայերենից չեխերեն և հակառակը<sup>3</sup>:

Պրահայի Կառլի համալսարանի երգչախմբի ու նվագախմբի ղեկավարն է Հայկ Ութիջյանը: Պրահայաբնակ դաշնակահար է Վազգեն Վարդանյանը: Չեխահայ երիտասարդ բեմադրիչ Անդրան

<sup>1</sup> «Ազգ», 02.03.2010, <http://www.azgdaily.com/AR/2010030218>

<sup>2</sup> [http://www.prizma.am/main/lang\\_1/news\\_3255.html](http://www.prizma.am/main/lang_1/news_3255.html)

<sup>3</sup> Բախչինյան Ա., նշվ. աշխ., էջ 247-248:

---

Արբահամյանը բեմադրում է նաև հայկական ստեղծագործություններ: 2007թ. նա բեմադրել է Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսը<sup>1</sup>:

Չեխիայի հայ համայնքի մշակութային կյանքում կարևոր նշանակություն ունեն գանազան միջոցառումներ: Այդպիսին էր Վ.Սարոյանի 100-ամյակին նվիրված միջոցառումը: 2010թ. հոկտեմբերի 16-20-ը Պրահայում կայացել է «*Golden Prague*» մշակութային հեռուստաֆիլմերի միջազգային 47-րդ փառատոնը: Փառատոնին առաջին անգամ մասնակցել է նաև Հայաստանը՝ ներկայանալով «Արարատ» մշակութային հեռուստաալիքի միջոցով, իսկ փառատոնի գլխավոր հովանավորությունը ստանձնել է չեխահայ գործարար Գևորգ Ավետիսյանը:

Անշուշտ, Չեխիայի հայության մշակութային կյանքի զարգացմանը նպաստում են համայնքի տեղեկատվական ռեսուրսները և առանձնապես «Օրեր» ամսագիրը, որն ի թիվս այլ բնագավառների ներկայացնում է համայնքում տեղի ունեցող մշակութային իրադարձությունները: Իսկ ամսագրի գլխավոր խմբագիր Հակոբ Ասատրյանը համայնքի առավել ճանաչված մշակութային գործիչներից է:

Չեխահայերի ներդրումը գիտության և մշակույթի մեջ ակներև է և գնահատվում է նաև չեխական պետության կողմից: Այսպես, 2010թ. մայիսին Հայաստանում Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ հանդիպման ժամանակ Չեխիայի վարչապետ Յան Ֆիշերը բարձր

---

<sup>1</sup> <http://www.orer.cz/>

է գնահատել Չեխիայի հայ համայնքի դերը երկրի զարգացման գործում<sup>1</sup>:

Կարևոր նշանակություն ունի հայ-չեխական հարաբերությունների շարունակական զարգացումը: Ի նշանավորումն դրա՝ 2006թ. նոյեմբերին չեխական Յիհլավա քաղաքում հանդիսավորությամբ բացվել է հայ-չեխական բարեկամության հուշակոթողը, որի հեղինակն է հայաստանցի քանդակագործ Հարություն Ստեփանյանը:

### ***Մլովակիա***

Արևելյան Եվրոպայի մյուս հայկական համայնքների համեմատ Մլովակիայի հայ համայնքն առանձնանում է սակավաթվությամբ: Այնուամենայնիվ, այստեղ նույնպես գործում են նշանավոր հայ գործիչներ, կազմակերպվում են զանազան մշակութային միջոցառումներ:

Այստեղ հայկական համայնքը ներկայանում է հիմնականում արվեստի գործիչներով: Նրանցից աչքի է ընկնում Մլովակիայի ազգային օպերային թատրոնի մեներգիչ, տենոր Գուրգեն Հովսեփյանը: Նա հանդես է եկել եվրոպական բազմաթիվ հանրահայտ բեմերում: Նույն օպերային թատրոնում է աշխատում նաև Հայաստանի վաստակավոր արտիստ Ռաֆայել Ավետիքյանը: Վերջինս զբաղվում է նաև մանկավարժական գործունեությամբ:

Հատկանշական է, որ մտավորական գործիչներն ընդգրկված են համայնքային խորհրդի կազմում: Մլովակիայի հայ համայնքի խորհրդի կազմում են Մլովակիայի ազգային թատրոնի մեներգիչ

---

<sup>1</sup> <http://www.aysor.am/am/news/2010/05/19/katoghikos-fisher/>

---

Գ.Հովսեփյանը, դաշնակահարուհի Հ.Գաբրիելյանը, իրավաբան Ռ.Նորեկյանը<sup>1</sup>:

Սլովակիայի հայությունն ակտիվ համագործակցում է տարատեսակ կազմակերպությունների (տվյալ դեպքում՝ մշակութային) և այլ պետությունների հայկական համայնքների հետ: Այդպիսի համագործակցության հաստատումը մասնավորապես Արևելյան Եվրոպայի հայկական այլ համայնքների հետ, առավել ևս՝ մշակույթի ասպարեզում, միանգամայն իրատեսական է:

Այսպիսով, Արևելյան Եվրոպայի հայկական համայնքների ներկայացուցիչներն ունեցել են կարևոր դերակատարություն տեղի երկրների գիտության և մշակույթի տարբեր ճյուղերի զարգացման մեջ: Հատկանշական են նրանց զգալի մասի՝ այլ երկրների հայ համայնքների և Հայաստանի հետ կապերի դրսևորումները:

Արևելյան Եվրոպայում կարելի է առանձնացնել հայ համայնքների երկու խումբ՝ 1. դարերի պատմություն ունեցող հայկական համայնքներ՝ Բուլղարիա, Լեհաստան, Հունգարիա, Ռումինիա, 2. վերջին տասնամյակներին ձևավորված համայնքներ՝ Չեխիա, Սլովակիա: Սրանք ունեն բազմաթիվ յուրահատկություններ: Մասնավորապես, եթե խնդիրը դիտարկենք Հայության մտավոր ներուժի համատեքստում, ապա պետք է նշել, որ առաջին խմբում ընդգրկված համայնքներն ունեն հսկայական մշակութային ժառանգություն, որը կարիք ունի համակողմանի ուսումնասիրության և վերաբացահայտման: Սրան գուցահեռ՝ այս երկրներում գործող

---

<sup>1</sup> «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 535:

համայնքների ներկայացուցիչները շարունակում են ստեղծագործել՝ հարստացնելով այդ ժառանգությունը:

Երկրորդ խմբի հայ համայնքները ձևավորվել են նորագույն պատմության ընթացքում, ուստի այստեղ մոռացված ժառանգության նորովի հետազոտման խնդրի փոխարեն առկա է համայնքային կառույցների (այդ թվում՝ գիտական և մշակութային ոլորտներն ընդգրկող) ձևավորման և զարգացման անհրաժեշտություն:

Միաժամանակ պետք է ընդգծել, որ արդիական նշանակություն ունի Արևելյան Եվրոպայի հայկական համայնքների ներկայացուցիչների ակտիվ համագործակցությունը ոչ միայն ներհամայնքային, այլև միջհամայնքային մակարդակներում: Տվյալ պետության գիտական և մշակութային համակարգին ինտեգրվելուց բացի, կարևոր է անհատ մտավորականների համագործակցությունն ազգային շրջանակներում:

Վերոհիշյալ խնդիրների համատեքստում կարևոր նշանակություն ունեն Արևելյան Եվրոպայի հայկական համայնքների մտավոր ներուժի բացահայտումը, հետևողական ինտեգրումը հայկական իրականությանը (Հայաստան և Մփյուռք), դրանց ներգրավումը Հայության առջև կանգնած մարտահրավերների լուծմանը:

---

### 3. ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ. ՏԵՂԵԿԱՏՈՒ

#### ***Թվաքանակը և աշխարհագրական սփռվածությունը***

Բուլղարիայում հայերի թիվը, համաձայն երկրի Ազգային վիճակագրական ծառայության տվյալների, կազմում է 10.832<sup>1</sup>: Ոչ պաշտոնական աղբյուրները, որոնք հիմնականում հայկական են, նշում են անհամեմատ ավելի մեծ՝ մոտ 50 հազ.<sup>2</sup> թվաքանակ, որոնցից շուրջ 35 հազ.<sup>3</sup>՝ 1988-2000-ական թթ. Հայաստանից արտագաղթածներն են<sup>4</sup>:

Բուլղարիայի ամենահայաշատ բնակավայրերն են մայրաքաղաք Սոֆիան, Բուրգասը, Պլովդիվը, Ռուսեն և Վառնան: Հայերի սփռվածությունն ըստ քաղաքների ունի *Աղյուսակ 3.1*-ում ներկայացված պատկերը:

---

<sup>1</sup> <http://www.nsi.bg/Census/Ethnos.htm>

<sup>2</sup> «Հայ սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003թ., էջ 124: Մ. Մալխասյան, Հայերն աշխարհում, Երևան, 2007թ., էջ 22:

<sup>3</sup> «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 128: Մ.Մալխասյան, նշվ. աշխ., էջ 90:

<sup>4</sup> Այստեղ և այլուր պաշտոնական և ոչ պաշտոնական տվյալների տարբերությունը պայմանավորված է պաշտոնական աղբյուրների կողմից միայն տվյալ երկրի քաղաքացիություն ունեցող անձանց հաշվառման հանգամանքով, այնինչ ոչ պաշտոնական աղբյուրները ներառում են օտարերկրյա քաղաքացիությամբ, սակայն տվյալ երկրում բնակվող հայերին ևս:



**Աղյուսակ 3.1**

**Հայերի թվաքանակը և աշխարհագրական սփռվածությունը Բուլղարիայում<sup>1</sup>**

Բնակավայրը	Հայերի քանակը	
	ըստ պաշտոնական տվյալների	ըստ հայկական աղբյուրների
Սոֆիա	1672	մոտ 7 հազ.
Բուրգաս	904	մոտ 2 հազ.
Պլովդիվ	3140	մոտ 9 հազ.
Ռուսե	886	մոտ 2 հազ.
Վառնա	2240	մոտ 5 հազ.
Սյլ բնակավայրեր՝ Շումեն, Խասկովո, Սլիվեն, Պագարջիկ և այլն	մոտ 2000	մոտ 25 հազ.
Ընդհանուր	10832	մոտ 50 հազ.

**Պատմական ակնարկ**

Բուլղարիայի հայ համայնքն ունի դարերի պատմություն, որը ձևավորվել է հայերի՝ այդ երկիր գաղթի արդյունքում: Դեպի Բուլղարիա գաղթի մի քանի խոշոր ալիքներից կարելի է մատնանշել հետևյալները.

**8-9-րդ դարեր:** Հայերի առաջին զանգվածային գաղթը Բուլղարիա 9-րդ դարում կապված էր միջնադարյան Հայաստանում ծավալվող Պավլիկյան և Թոնդրակյան շարժումների հետ: Քանի որ այդ երկու աղանդավորական շարժումներն ունեին նաև հակաքրիստոնեական ուղղվածություն, բյուզանդական կայսրերը, դաժանաբար ճնշելով դրանք, դրանց հետևորդներին զանգվածաբար բռնագաղթեցրել են Բուլղարիա: Բռնագաղթի արդյունքում Բուլղարիայում հաստատված հայերը հիմնեցին ծաղկուն բնակավայրեր, որոնց հայկական

<sup>1</sup> <http://www.nsi.bg/Census/Ethnos.htm>; Մ.Մալխասյան, նշվ. աշխ., էջ 22: «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 128-130:

---

անվանումները, ինչպիսիք են, օրինակ, Պավլիկենի, Գոռնո Պավլիկենի, Դոլնո Պավլիկենի, Թորոս, Կալինիկ, Արմենոխոր, Արմենիցա, Էրմենլի, Էրմենսկա և այլն, պահպանվել են երկար ժամանակ<sup>1</sup>:

*Ուշ միջնադար:* Թեև 14-րդ դարի վերջին Բուլղարիան հայտնվեց Օսմանյան կայսրության տիրապետության տակ և այնտեղ էլ քրիստոնյաների (ինչպես բուլղարների, այնպես էլ հայերի) նկատմամբ վարվում էր ազգային և կրոնական հալածանքների ու բռնաճնշումների քաղաքականություն, այնուամենայնիվ, տարբեր գործոնների ազդեցությամբ ուշ միջնադարում տարբեր վայրերից, այդ թվում նաև Հայաստանից (թե՛ արևելյան, թե՛ արևմտյան) Բուլղարիա են գաղթել բազմահազար հայեր: Այս շրջանում են ձևավորվել Ռուսեի, Վառնայի, Բուրգասի, Շումենի և այլ բնակավայրերի հայ համայնքները: Միջնադարյան Բուլղարիայում հայկական հետքի վկայությունն է նաև 2009թ. երկրում հայտնաբերված 17-րդ դարի հայկական եկեղեցին<sup>2</sup>:

*19-րդ դարի վերջ:* Հայերի երրորդ զանգվածային գաղթի ալիքը դեպի Բուլղարիա պայմանավորված էր 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Բուլղարիայի ազատագրմամբ: Անկախացման արդյունքում Բուլղարիայում կյանքի համար ստեղծված բարենպաստ պայմանները դրդեցին Օսմանյան կայսրության տիրապետության տակ կեղեքվող բազմաթիվ հայերի

---

<sup>1</sup> «Հայ սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003թ., էջ 125:

<sup>2</sup> Բուլղարիայում 17-րդ դարի հայկական եկեղեցի է հայտնաբերվել, «Ազգ», № 234, 22.12.2009:

գաղթել այդ երկիր, ինչը մեն չափերի հասավ հատկապես 1894-96թթ. համիդյան ջարդերի ընթացքում (մոտ 20 հազ.):

*Հայոց ցեղասպանության տարիներ՝ 1915-23թթ.:* Հայերի չորրորդ զանգվածային գաղթի ալիքը դեպի Բուլղարիա կապված է 1915-23թթ. իրականացված Հայոց ցեղասպանության հետ, որի հետևանքով կոտորածից փրկված տասնյակ հազարավոր հայեր ապաստանեցին այդ երկրում: Այս ալիքի մեջ են ընդգրկվում նաև 1919-22թթ. հույն-թուրքական պատերազմի հետևանքով 1922թ. Բուլղարիա գաղթած հայերը:

*1990-ական թթ.:* Հայերի վերջին՝ հինգերորդ զանգվածային գաղթի ալիքը դեպի Բուլղարիա սկիզբ է առնում 1990-ական թվականների սկզբից՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետության ծանր սոցիալ-տնտեսական դրությամբ:

Այսպիսով, ներկայիս Բուլղարիայի հայ համայնքն ամփոփում է ինչպես ավանդական հայկական սփյուռքի ներկայացուցիչներին՝ Ցեղասպանությունից առաջ և դրա արդյունքում Բուլղարիայում հաստատված հայերին, այնպես էլ «ժամանակակից» կամ «տնտեսական» կոչվող սփյուռքի ներկայացուցիչներին:

Պետք է նշել, որ ժամանակի ընթացքում տեղի է ունեցել նաև հայերի արտագաղթ Բուլղարիայից, ինչը հանգեցրել է երկրում համայնքի թվաքանակի նվազմանը: Այսպես, օրինակ, 1946-48թթ. հայրենադարձության ընթացքում 5 հազ. բուլղարահայեր հայրենադարձվեցին Խորհրդային Հայաստան: Իսկ ներկայում, Բուլղարիայի տնտեսական դրությամբ պայմանավորված, առկա է Եվրամիության անդամ Բուլղարիայից հայերի արտագաղթի և Արևմտյան Եվրոպայի երկրներում և ԱՄՆ-ում հաստատվելու միտումը:

---

Պատմության ընթացքում հայերը ոչ միայն բնակություն են հաստատել Բուլղարիայում, այլև նշանակալի ներգրավվածություն և դեր են ունեցել երկրի հասարակական-մշակութային, տնտեսական և քաղաքական կյանքում: Դրա վկայությունն են Բուլղարիայում բարձր հասարակական դիրքի հասած հայ նշանավոր գործիչները, որոնցից կարելի է առանձնացնել երկրի բարձրագույն դատարանի փոխնախագահ Մելքոն Մելքոնյանին, վաստակավոր բժիշկ Հակոբ Չաքրբովին, գրողներ Սևդա Սևանին, Հակոբ Մելքոնյանին, ճարտարապետ Լևոն Ֆիլիպովին, օպերային ռեժիսոր Պողոս Աֆեյանին, թատերական ռեժիսոր Գրիգոր Ազարյանին, երգահան Հայկաշոտ Աղասյանին, 1993-ին Բուլղարիայի ազգային հեռուստատեսության գլխավոր տնօրեն նշանակված Խաչո Բոյաջինին, դաշնակահարուհի Ջուլիա Գանևային, օպերային երգչուհի Մարի Գրիգորյանին, օլիմպիական չեմպիոն, ծանրորդ Նորայր Նուրիկյանին և այլն<sup>1</sup>:

Հատկանշական է Բալկանյան պատերազմին 1912-13թթ. հայկական վաշտի մասնակցությունը բուլղարական բանակի կազմում՝ Անդրանիկի և Գ.Նժդեհի հրամանատարությամբ: Բուլղար հասարակությունն արժանիորեն է գնահատել հայ ժողովրդի զավակների ներդրումը Բուլղարիայի կայացման և զարգացման գործում՝ արժանացնելով նրանց մեծ պարգևների ու գնահատականների: Բալկանյան պատերազմին մասնակցած հայկական վաշտի հրամանատարներ Անդրանիկն ու Գ.Նժդեհը բուլղարա-

---

<sup>1</sup> Հայերը Բուլղարիայում

<http://www.hayernaysor.am/newsday.php?p=0&c=0&t=0&r=0&year=2009&month=07&day=22&shownews=2333&LangID=4>

կան պետության կողմից արժանացել են զինվորական կոչումների, պարգևների և այլ պատիվների:

20-րդ դարից սկսած՝ Բուլղարիայի հայ համայնքի պատմությունը կարելի է բաժանել միմյանց հաջորդող հետևյալ երեք փուլերի.

*Նախակոմունիստական (մինչև 1944թ.) փուլ:* Այս ընթացքում ակտիվ գործունեություն են ծավալել Բուլղարիայի հայ համայնքի ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ կառույցները: Հայ Առաքելական եկեղեցու հետ միասին համայնքային կյանքը կազմակերպում և դրան աշխուժություն էին հաղորդում նաև հայկական ավանդական կուսակցությունները՝ ՀՅԴ-ն (Հայ հեղափոխական դաշնակցություն), ՄԴՀԿ-ն (Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն), ՌԱԿ-ը (Ռամկավար-ազատական կուսակցություն), որոնք ունեին իրենց թերթերը: Հասարակական ակտիվ գործունեություն է ծավալել նաև Բուլղարիայի կոմկուսի հայ անդամների խումբը<sup>1</sup>: Կուսակցական մամուլի կողքին համայնքում մեծ դեր էին խաղում նաև ոչ կուսակցական տեղեկատվական ռեսուրսները: Համայնքային կյանքին աշխուժություն էր հաղորդում նաև բազմաթիվ մշակութային և կրթական հաստատությունների գործունեությունը:

*Կոմունիստական (1944-1989թթ.) շրջան:* Բուլղարիայում կոմունիստական վարչակարգի տարիներին փակվել են հայկական ավանդական կուսակցությունները (ՄԴՀԿ, ՀՅԴ, ՌԱԿ) և նրանց լրատվամիջոցները: Տիրող աթեիստական մթնոլորտի պայմաններում հայկական հոգևոր-եկեղեցական կառույցները ևս գործելու

---

<sup>1</sup> «Հայ սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003թ., էջ 134:

---

հնարավորություն չեն ունեցել: Այս ժամանակահատվածում Բուլղարիայում գործող միակ գրանցված հայկական կառույցը 1944թ. հիմնված Հայկական կրթամշակութային կազմակերպությունների «Երևան» միությունն էր, որին անդամագրվեցին նախկինում գործող հայկական կառույցների, այդ թվում նաև ավանդական կուսակցությունների շատ ներկայացուցիչներ: Միությունը հրատարակում էր համանուն՝ «Երևան» շաբաթաթերթը, հայ համայնքին ապահովում ակտիվ մշակութային կյանքով:

*Արդի (1989-ից սկսած) փուլ:* Արդի փուլում Բուլղարիայի հայերի համայնքային կյանքի վերակազմավորման գործընթաց տեղի ունեցավ՝ կապված հետևյալ գործոնների հետ.

- *Կոմունիստական վարչակարգի անկումը:* 1989թ. հասարակական-քաղաքական մթնոլորտի ազատականացումը, ինչպես նաև պարտադրված աթեիստական մթնոլորտի հաղթահարումը Բուլղարիայում նպաստավոր պայմաններ ստեղծեցին համայնքային կյանքի վերազարթոնքի համար: Գործունեությունը շարունակող «Երևան» միության կողքին ստեղծվեցին և գործունեություն ծավալեցին նոր հասարակական, մշակութային և այլ կառույցներ: Բուլղարիայում գործունեությունը վերսկսեցին նաև համազգային կառույցները՝ ՀԲԸՄ-ն (Հայկական բարեգործական ընդհանուր միություն), ՀՄԸՄ-ն (Հայ մարմնակրթական ընդհանուր միություն), ՀՕՄ-ը (Հայ օգնության միություն) և Համազգային հայ կրթական և մշակութային միությունը: Վերսկսվեց նաև Հայ Առաքելական եկեղեցու, ինչպես նաև Հայ Ավետարանական եկեղեցու գործունեությունը:

● *Հայերի նոր գաղթը Բուլղարիա*: Հետխորհրդային շրջանում ՀՀ-ից որոշակի թվաքանակով հայերի (մոտ 35 հազ.<sup>1</sup>) գաղթը Բուլղարիա որոշակի լիցք հաղորդեց համայնքային կյանքին՝ սովաբացնելով հայ համայնքն այդ երկրում:

● *Հայ-բուլղարական դիվանագիտական հարաբերությունների հաստատումը*: 1992թ. ՀՀ-ի և Բուլղարիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը, մասնավորապես՝ Բուլղարիայում ՀՀ դեսպանության կողմից կազմակերպվող մշակութային միջոցառումները ևս նպաստում են բուլղարահայերի համայնքային կյանքի աշխուժացմանը: Այսպես, 2010թ. Բուլղարիայում Հայաստանի մշակութային տարվա շրջանակներում ՀՀ դեսպանատան, Բուլղարիայի մշակութի նախարարության և բուլղարահայ համայնքի ջանքերով կազմակերպվեցին այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են «Հայերի առօրյան և տոները» ցուցահանդեսը (նոյեմբեր)<sup>2</sup> և հայկական ու բուլղարական գրական ստեղծագործությունների (Վահագն Կրբեկյանի «Հայերի մասնակցությունը ռուս-թուրքական պատերազմին», Հրանտ Մաթևոսյանի «Աստված, էս ինչ սիրուն աշխարհ է», Վանյա Պետկովայի «Հայկական երգեր», «Սասունցի Դավիթ» և «Կրալի Մարկո»<sup>3</sup>) բուլղարերեն և հայերեն թարգմանությունների շնորհանդեսը (դեկտեմբեր)<sup>4</sup>: Նմանատիպ

<sup>1</sup> Մ.Մալխասյան, նշվ. աշխ., էջ 90:07&day=22&shownews=2333&LangID=4

<sup>2</sup> Բուլղարիայում բացվել է Յուլյան Անգելովի «Հայերի առօրյան և տոները» խորագրով լուսանկարչական ցուցահանդեսը.

<http://news.am/arm/news/37182.html>

<sup>3</sup> Բուլղարական էպոսը:

<sup>4</sup> Բուլղարիայում տեղի է ունեցել հայկական գրքերի շնորհանդես. <http://www.armor.am/?p=58011>

---

միջոցառումները մի կողմից ակտիվացնում են հայության համայնքային կյանքը Բուլղարիայում, նպաստում ազգային ինքնագիտակցության վերելքին ու հայապահպանությանը, մյուս կողմից դառնում արտերկրում հայաճանաչության կարևորագույն գործիք:

Ներկայում Բուլղարիայի հայ համայնքի ակտիվությունը դրսևորվում է նաև հասարակական-քաղաքական ոլորտում: Տեղի հայությունը հիմնականում նպատակաուղղված է համազգային խնդիրների (Հայոց ցեղասպանության ճանաչում, Արցախյան հիմնահարց և այլն) լուծմանը նպաստելուն: Այս ոլորտում հայ համայնքը որոշակի հաջողությունների է հասել մասնավորապես Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման հարցում: Ցեղասպանությունը ճանաչել և դատապարտել են մի շարք քաղաքների (Մոֆիա, Վառնա, Բուրգաս և այլն) քաղաքային խորհուրդներն ու Բուլղարիայի Ուղղափառ եկեղեցու Սինոդը (2007թ.)<sup>1</sup>:

Բուլղարահայերի և ողջ Հայության համար նշանակալի միջոցառումները հաճախ կազմակերպվում են Բուլղարիայի պետական աջակցությամբ: Այսպես, օրինակ, Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունները Բուլղարիայում (2001թ.) պատշաճ մակարդակով անցկացնելու համար Բուլղարիայի փոխնախագահ Թոդոր Կավալչիևի հովանավորությամբ ստեղծվեց պետական հանձնաժողով, որում ընդգրկված էին ինչպես հայ համայնքի ներկայացու-

---

<sup>1</sup> Բուլղարիայի Եկեղեցական Սինոդն առաջին անգամ ցեղասպանություն անվանեց 1915 թվականի իրադարձությունները.

<http://www.panarmenian.net/arm/world/news/24214/>



ցիչներ, այնպես էլ բուլղարացի գործիչներ<sup>1</sup>: Իսկ 2011թ. հուլիսին Վառնա քաղաքում քաղաքային իշխանությունների հովանավորությամբ և մասնակցությամբ տեղի ունեցավ Ջորավար Անդրանիկի հրապարակի բացման և հուշարձանի տեղադրման միջոցառումը:

### ***Վազմակերպչական կառույցները***

Բուլղարահայ համայնքի կողմից կազմավորած բազմաթիվ տեղական կառույցներն ակտիվ գործունեություն են ծավալում *հասարակական, հոգևոր-եկեղեցական և կրթամշակութային* ոլորտներում (Բուլղարիայի հայկական կառույցների մասին տե՛ս *Աղյուսակ 3.2*):

- *Հասարակական* ոլորտում գործունեություն է ծավալում «Բուլղարիայի հայ համայնք» կազմակերպությունը, որի գրասենյակը գտնվում է Սոֆիայում: Այն կարելի դիտարկել որպես բուլղարահայ համայնքը համակարգող կառույց: Բացի դրանից, գործում են նաև Սոֆիայի հայկական կազմակերպությունները համակարգող խորհուրդը և Վառնայի հայերի միությունը:

- *Հոգևոր-եկեղեցական*: Բուլղարահայ համայնքի հոգևոր-եկեղեցական կառույցը Սոֆիայում գտնվող Հայ Առաքելական եկեղեցու թեմական խորհուրդն է, որն ընդգրկում է Բուլղարիայի հայկական 10 եկեղեցիների և 2 մատուռների առաջնորդներին<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս <http://armenians.orionbg.net/en/index.php>

<sup>2</sup> Նույն տեղում:

**Բուլղարիայի ծախսերի կազմակերպությունները**

N	Քաղաքը	Կառույցի անվանումը	Ղեկավարը	Կոնտակտային տվյալները	Գործունեությունը
1	Բուրգաս, Պլովդիվ, Սոֆիա Վարնա (Դոբրիչ, Ռոսե, Սիլիստրա, Միլևեն, Յամբոլ)	ՀԲԸՄ (Հայկական բարեգործական ընդհանուր փոլություն)		Բուրգաս 8000, Լերմոստովի 11 հեռ./ֆաքս +359 56 843766 agbu_burgas@armenia.com  Պլովդիվ 4001, Մեդալենիերի 6-ի ծառուղի 158, բն. 16 հեռ. +359 32 621310 հեռ./ֆաքս +359 32 267673 agbu.plovdiv@namag.com  Սոֆիա 1080, Նիշկայի 31, հեռ./ֆաքս +359 2 987 1445 agbu@omega.bg  Վարնա 9000, Հան Մապարուխի 15	բարեգործական
2	Դոբրիչ Պլովդիվ Ռոսե Սոֆիա Վարնա Շումեն	ՀԸՄՄ (Հայ մարմնակրթական ընդհանուր փոլություն)		Սոֆիա 1000, Թոդոր Ալեքսանդրովի ծառուղի 31  Վարնա 9000, Հան Մապարուխի 15 homenetmen_varna@mail.bg	մարզական
3	Պլովդիվ, Սոֆիա, Վարնա	ՀՕՄ (Հայ օգնության փոլություն)	Նախագահ՝ Մանիկ Շամալյան	Պլովդիվ 4000, Հայր Պալիսիի 29 հեռ./ֆաքս (+359 32) 637777 hom_bg@mail.bg  Սոֆիա 1000, Թոդոր Ալեքսանդրովի ծառուղի 31  Վարնա 9000, Հան Մապարուխի փ.	բարեգործական

N	Քաղաքը	Կառույցի անվանումը	Ղեկավարը	Կանոնակարգի անվանումը	Գործունեությունը
4	Պրովինիլ, Ռուսե, Մոսկիւս, Վառնա	Հայկական միջամշակութային կազմակերպությունների «Շրևան» միություն	Նախագահ Հակոբ Կարապետյան Կրոնիկ Կարամուզյան	Պրովինիլ 4000, Հայր Պայլիսի փող. 29  Ռուսե 7000, Դոկտորով-Կոլոսակով փող. 34 +359 (0)82 22 20 96  Մոսկիւս 1000, Թոյր Ալեքսանդրովի ծառուղի 31 (+359 2) 9877128  Վառնա 9000, Բոլիս Իշխան ծառուղի 24 (+359 52) 222924  4025, h.e. Starichen, Turist str.: 2	կրթամշակութային
5	Պրովինիլ	Համագրային հայ կրթական և մշակութային միություն			կրթամշակութային
6	Պրովինիլ	Հայկական մշակութային և արվեստի միություն			
7	Պրովինիլ	Մեհրուպ Մաշտոց միություն			կրթամշակութային
8	Մոսկիւս	Բուլղարիայի հայ համայնք	Նախագահներ՝ Արթուրյան Տարտիկյան Ռուբեն Գրիգորյան Պրոտր	1000, Թոյր Ալեքսանդրովի ծառուղի 31 +359 (0)2 988 02 08 http://armenians.orionbg.net/en	հասարակական
9	Մոսկիւս	Մոսկիւսի հայկական կազմակերպությունները համակարգող խորհուրդ	Նախագահ Ռուբեն Գրիգորյան	1000, Թոյր Ալեքսանդրովի ծառուղի 31 հեռ./ֆաքս՝ (+359 2) 9880208 Էլ. փոստ՝ Երարհարմ@mail.bg	հասարակական
10	Մոսկիւս	Հայ Առաքելական եկեղեցու թեմական խորհուրդ	ատենապետ Օնիկ Քրիստյան	1000, Թոյր Ալեքսանդրովի ծառուղի 31 +359 (0)2 988 02 08 Երարհարմ@mail.bg	հոգևոր- էկեղեցական
11	Մոսկիւս	«Մուրը Հովազմիւսյան» հայկական դպրոցական միություն		1000, Թոյր Ալեքսանդրովի ծառուղի 31 +359 (0)2 980 40 69 Երարհարմ@mail.bg	կրթամշակութային

N	Քաղաքը	Կառույցի անվանումը	Ղեկավարը	Կոնտակտային տվյալները	Գործունեությունը
12	Սոֆիա	Հայոց նորագույն պատմության «Հայ դատ» ակումբ			կրթամշակութային
13	Վարձա	Վարձնայի հայերի միություն	Նավագահ՝ Հարություն Հովսեփյան	9000, Գեներալ Կոլիկի 76, 1 շենք, 1 գրասենյակ +359 52 919-947, +359 52 919- 937 hovsepyan-sons.com, lord7hg@abv.bg	հասարակական

Բուլղարիայում գերակշիռ մեծամասնություն կազմող հայ առաքելականների կողքին կան նաև փոքրաթիվ հայ ավետարանականներ: Նրանք նույնպես սփռված են Բուլղարիայի հայաշատ կենտրոններում և ունեն իրենց հոգևոր-եկեղեցական կառույցները:

- *Կրթամշակութային* ոլորտում ներկայում էլ ակտիվ է դեռևս 1944թ. ստեղծված և կոմունիստական վարչակարգի ողջ ընթացքում (1944-1989թթ.) միակ հայկական գրանցված կազմակերպությունը հանդիսացող Հայկական կրթամշակութային կազմակերպությունների «Երևան» միությունը, որի կենտրոնական վարչությունը գտնվում է Սոֆիայում, մասնաճյուղեր ունի Բլագոգրադում, Վառնայում, Դոբրիչում, Պագարջիկում, Պլովդիվում, Ռուսեում, Սիլիստրայում, Ստարա Զագորայում, Խասկովոյում, Շումենում, Յամբոլում<sup>1</sup>:

Բացի «Երևան» միությունից, կրթամշակութային ոլորտում նշանավոր դեր ունեն նաև «Սուրբ Հովագիմյան» հայկական դպրոցական միությունը (Սոֆիա), Հայոց նորագույն պատմության «Հայ դաս» ակումբը (Սոֆիա), Հայկական մշակույթի և արվեստի միությունը (Պլովդիվ) և Մեսրոպ Մաշտոց միությունը (Պլովդիվ)<sup>2</sup>:

Ներկայում Բուլղարիայի հայ համայնքի կազմակերպչական կառույցների թվում տեղական համայնքային կառույցներից գատ գործում են նաև համազգային կառույցների բուլղարական մասնաճյուղեր: Բուլղարիայում այդպիսի մասնաճյուղեր ունեն՝

---

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում:

---

1. Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԼՄ)՝ Սոֆիայում, Վառնայում, Պլովդիվում և Բուրգասում: Պլովդիվի մասնաճյուղը ենթամասնաճյուղեր ունի Դոբրիչում, Ռուսեում, Սիլիստրայում, Սլիվենում և Յամբոլում:

2. Հայ մարմնակրթական ընդհանուր միությունը (ՀՄԸՄ)՝ Սոֆիայում, Վառնայում, Դոբրիչում, Պլովդիվում, Ռուսեում, Շումենում:

3. Հայ օգնության միությունը (ՀՕՄ)՝ Սոֆիայում, Վառնայում և Պլովդիվում:

4. Համազգային հայ կրթական և մշակութային միությունը՝ Պլովդիվում<sup>1</sup>:

### ***Տեղեկատվական ռեսուրսները***

Ներկայում Բուլղարիայի հայ համայնքի տեղեկատվական ռեսուրսները 5-ն են՝ 4 տպագիր և 1 էլեկտրոնային (համացանցային) լրատվամիջոց: Տպագիր լրատվամիջոցներն են Հայկական կրթամշակութային կազմակերպությունների «Երևան» միության համանուն «Երևան» շաբաթաթերթը (Սոֆիա, 1944-ից), Համազգայինի «Վահան» շաբաթաթերթը (Պլովդիվ, 1991-ից), «Հայեր» երկշաբաթաթերթը (Բուրգաս, 1993-ից) և «Բարեգործականի ձայն» ամսաթերթը: Իսկ որպես էլեկտրոնային (համացանցային) ռեսուրս հանդես է գալիս «Բուլղարիայի հայ համայնք»-ի (Սոֆիա) պաշտոնական վեբկայքը (<http://armenians.orionbg.net>) (Բուլղարիայի հայկական լրատվամիջոցների մասին տե՛ս *Աղյուսակ 3.3*):

---

<sup>1</sup> <http://armenians.orionbg.net/en/index.php>

## Բուլդոջերի խաչակալան քրատվամիջոցները

N	Քաղաքը	Անվանումը (ցայքը)	Ղեկավարը	Կոնտակտային տվյալները
1	Բուլդոջա	«Հայեր» Էրիշարթթաթթթթթթթթ	Խմբագիր Գևորգ Սարաֆյան	8000, Դոկտոր Նիկոլ 4 Tel./fax +359 56 464 03 hayec@abv.bg
2	Պլովդիվ	«Վահան» շարթթթթթթթթ	Խմբագիր Հարի Նիկողոսյան	4000, Հարթ Պալմիլի 29 հեռ. +359 32 / 62 40 40, 62 26 48, ֆաքս +359 32 62 07 20 vahan@mboc.digys.bg
3	Պլովդիվ	«Բարեգործականի ձայն» սմսաթերթ		4000, Հարթ Պալմիլի 29, 1-ին հարկ հեռ. (+359 32) 262396 հեռ./ֆաքս (+359 32) 267673 agbu.voice@mail.bg
4	Սոֆիա	«Երևան» շարթթթթթթթթ	Խմբագիր Վարդանուշ Թովաթթթթթ	1080 Նիշիալի 31 հեռ. +359 2 987 71 27, հեռ./ֆաքս +359 2 987 14 45 erevest@abv.bg
5	Սոֆիա	Բուլդոջերի խաչ իսմայելի պաշտոնական վեբ-կայք <a href="http://armenians.orionbg.net">http://armenians.orionbg.net</a>		1000, Թորթր Ալեքսանդրովի ծառուղի 31 +359 (0)2 988 02 08

---

#### 4. ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

##### *Պատմական ակնարկ*

Համաձայն որոշ տեսակետների, բողոքականությունը հայոց մեջ միջնադարյան աղանդավորության՝ պավլիկյան և թոնդրակյան շարժումների ժառանգորդն է հանդիսանում: Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ կարելի է ասել, որ հայ բողոքականները Բուլղարիայում հաստատվել են դեռևս միջնադարում, երբ Հայաստանում տարածում գտած պավլիկյանականության և թոնդրակյանականության հետևորդները 8-9-րդ դարերում զանգվածաբար բնագաղթեցին Բուլղարիա: Պավլիկյանների ուսմունքը մեծ ազդեցություն ունեցավ Բուլղարիայում Բոգոմիլյան աղանդի առաջացման վրա, որն էլ իր հերթին հետագայում իր ազդեցությունը թողեց բողոքականության վրա:

Բուլղարիա արտագաղթած պավլիկյաններն ու թոնդրակյանները հիմնեցին ծաղկուն համայնքներ, որոնցից շատերի անվանումները՝ Պավլիկենի, Գոռնո Պավլիկենի, Դոլնո Պավլիկենի, Թորոս, Կալինիկ, Արմենոխոր, Արմենիցա, Էրմենլի, Էրմենսկա և այլն, պահպանվել են երկար ժամանակ<sup>1</sup>, նույնիսկ մինչև մեր օրերը:

19-րդ դարում Օսմանյան կայսրությունում, որի կազմի մեջ էր մտնում նաև Բուլղարիան, լայն թափով սկսեց ծավալվել բողոքական միսիոներների գործունեությունը, որը հանգեցրեց բողոքական համայնքների ձևավորմանը: Բուլղարիայում բողոքական

---

<sup>1</sup> «Հայ սփյուռք» հանրագիտարան, Երևան, «Հայկական հանրագիտարան» հրատարակչություն, 2003թ., էջ 124-125:



համայնք ձևավորվել է 1857թ.: Ինչ վերաբերում է հայերին, ապա 1846թ. Կ.Պոլսում ձևավորված հայ ավետարանականների առաջին համայնքը, աստիճանաբար ստվարանալով, տարածվեց նաև Օսմանյան կայսրության այլ վայրերում, այդ թվում նաև Բուլղարիայում բնակվող հայերի շրջանում: Բուլղարիայում հայ ավետարանական համայնքի ստվարացմանը նպաստել է Օսմանյան կայսրության այլ բնակավայրերից հայերի (այդ թվում նաև ավետարանականների) Բուլղարիա գաղթի շարունակական միտումը:

1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Բուլղարիայի ազատագրումն օսմանյան տիրապետությունից ավելի բարենպաստ պայմաններ ստեղծեց այդ երկիր հայերի գաղթի համար: Հայ գաղթականների մեծ խմբեր հայտնվեցին Բուլղարիայում 1904-06թթ. հայկական կոտորածների, Առաջին աշխարհամարտի տարիներին իրագործված Հայոց ցեղասպանության և 1919-22թթ. հույն-թուրքական պատերազմի հետևանքով: Արդյունքում՝ Բուլղարիայում հայերի ընդհանուր թվաքանակի հետ միասին մեծացավ նաև հայ ավետարանականների թիվը:

1944թ. Բուլղարիայում կոմունիստական վարչակարգի հաստատումից հետո պետական մակարդակով վարվող աթեիզմի քաղաքականությունը, արտագաղթը, բուլղարական իշխանությունների ձուլման քաղաքականությունը ծանր հետևանքներ ունեցան բողոքական հայերի և Հայ Ավետարանական եկեղեցու՝ որպես հոգևոր կառույցի վրա: Կոմունիստական համակարգի վերափոխումով ավարտվեց պետության կողմից վարվող կրոնական ճնշումների քաղաքականությունը,

---

սակայն անցյալից ժառանգված որոշ խնդիրներ դեռևս պահպանվում են:

### ***Կազմակերպչական կառույցները***

Ներկայում Բուլղարիայի հայ ավետարանական համայնքի կազմակերպչական կառույցները 7-ն են, ինչը բավական պատկառելի ցուցանիշ է՝ հաշվի առնելով հայ ավետարանականների փոքր տեսակարար կշիռն ինչպես բուլղարական հասարակության, այնպես էլ բուլղարահայ համայնքի մեջ (Բուլղարիայի Հայ Ավետարանական համայնքի կազմակերպչական կառույցների մասին տե՛ս *Աղյուսակ 4.1*):

Բուլղարիայի հայ ավետարանական համայնքի կազմակերպչական կառույցները սփռված են երկրի հայաշատ վայրերում՝ մայրաքաղաք Սոֆիայում (2 հատ), ինչպես նաև Բուրգասում, Շումենում, Պլովդիվում, Ռուսեում, Վառնայում (1-ական հատ)<sup>1</sup>:

Ի տարբերություն Մերձավոր Արևելքի (Լիբանան, Սիրիա, Իրան) հայ ավետարանական համայնքների՝ Բուլղարիայի հայ ավետարանական համայնքի կազմակերպչական կառույցներն աչքի չեն ընկնում տիպային բազմազանությամբ: Դրանք բաժանվում են երկու խմբի.

---

<sup>1</sup> Տե՛ս AMAA Directory 2010: Armenian Evangelical Churches, Institutions, Organizations, Pastors and Christian Workers Worldwide, p. 8-9 <http://www.amaa.org/Directory%20for%20website.pdf>

- *Եկեղեցիներ*, որոնց թիվը չորսն է: Գտնվում են Պլովդիվում, Վառնայում, Սոֆիայում և Ռուսեում (1-ական) :

- *Ավետարանական եղբայրություններ*, որոնց թիվը երեքն է: Գտնվում են Սոֆիայում, Բուրգասում և Շումենում (1-ական):

Սոֆիան Բուլղարիայի հայ ավետարանական համայնքների մեջ առանձնանում է նրանով, որ ունի և՛ եկեղեցի, և՛ ավետարանական եղբայրություն: Մյուս համայնքներից Պլովդիվում և Ռուսեում գործում են միայն եկեղեցիներ, իսկ Բուրգասում և Շումենում՝ ավետարանական եղբայրություններ:

Բազմազանության առումով Բուլղարիայի հայ ավետարանական համայնքի կազմակերպական կառույցների սակավությունը՝ կրթական, սոցիալական և այլ տեսակի կառույցների բացակայությունը, կարելի է բացատրել հետևյալ պատճառներով.

1. *Եվրոպայում հոգևոր և աշխարհիկ ոլորտների միջև հստակ տարանջատվածությունը*: Ի տարբերություն Մերձավոր Արևելքի հայ ավետարանական համայնքների, որոնցում կրթական, սոցիալական և այլ ոլորտները նույնպես գտնվում են կրոնական համայնքների իրավասության ներքո, Եվրոպայում դրանք գտնվում են աշխարհիկ ոլորտում՝ տնօրինվելով աշխարհիկ իշխանությունների կամ համայնքային կառույցների կողմից:

2. *Կոմունիստական անցյալի ժառանգությունը*: Կոմունիստական շրջանի աթեիստական քաղաքականության մթնոլորտում սահմանափակվում էին կրոնական իշխանությունների գործունեության ոլորտները:

3. *Բուլղարիայի Ուղղափառ եկեղեցու արտոնյալ դիրքը մյուս եկեղեցիների համեմատ*: Կրոնի ոլորտում վարվող պետական քաղաքականության արդյունքում Բուլղարիայում գործող այլ

---

եկեղեցիները չունեն այն արտոնությունները, ինչ Բուլղար Ուղղափառ եկեղեցին<sup>1</sup>:

### ***Միջդավանական հարաբերությունները հայ համայնքում***

Չնայած իրենց դավանանքային յուրահատկությանը՝ հայ ավետարանականները մշտապես ունեցել են բարձր *ազգային ինքնագիտակցություն* և իրենց համարել Հայության անբաժան մասը<sup>2</sup>: Բուլղարիայի հայ ավետարանականները ևս տեղի հայության մի մասն են: Երկրի հայաշատ բնակավայրերում՝ Պլովդիվում, Սոֆիայում, Վառնայում և այլն, հայ առաքելականներն ու ավետարանականները միմյանց հետ ապրում և գործում են կողք կողքի: Հայ Առաքելական եկեղեցիների կողքին գործում են Հայ Ավետարանական եկեղեցիները: Ներկայում դավանական խմբերի միջև չկան հակասությունների հանգեցնող պատճառներ: Առաքելական-ավետարանական տարբերակումների մթազնմանը մեծապես նպաստել է կոմունիստական շրջանի աթեիստական մթնոլորտը<sup>3</sup>, ինչպես նաև ներկայում Եվրոպայում տիրող աշ-

---

<sup>1</sup> St' u, օրինակ, США не одобряют "привилегированного" положения Болгарской церкви <http://www.newsru.com/religy/29apr2010/privileg.html>

<sup>2</sup> St u Վ.Հովյան, Բողոքական հայերը՝ տարադավան Հայության շերտ, «Գլոբուս. Ազգային անվտանգություն», 2010թ., թիվ 1, էջ 15-20:

<sup>3</sup> Խորհրդային շրջանում իրականացված հետազոտությունները ցույց են տվել, որ 1962թ. դրությամբ հավատացյալ էր բուլղարական հասարակության ընդամենը 35%-ը, իսկ 1980-ական թթ. կանոնավոր կերպով եկեղեցական արարողություններին հաճախողները կազմում էին 6%: Настольная книга атеиста / С.Ф. Анисимов, Н.А. Аширов, М.С. Беленький и др.; Под общ. ред. С.Д. Сказкина. - 9-е изд., испр. и доп. - М.: Политиздат, 1987. - Религия в современном мире // Зарубежная Европа <http://religion.historic.ru/books/item/f00/s00/z00000000/st006.shtml>

խարհիկությունը, որոնք ջնջել են հոգեբանական անջրպետները  
Հայության տարբեր դավանանքային շերտերի միջև:

Ըստ բուլղարահայության ներկայացուցիչների՝ հայ համայնքն  
այնքան փոքր է, որ չի կարող թույլ տալ իր ներուժի ջլատման  
շռայլությունը: Ընդհակառակը՝ պետք է համախմբել առանց այն էլ  
սակավ ռեսուրսները՝ առկա մարտահրավերներին (ուճացում,  
արտագաղթ և այլն) դիմագրավելու համար:

**Բուլղարիայի Հայ ավետարանական համայնքի կազմակերպչական կառույցները<sup>1</sup>**

Քաղաքը	Կառույցի անվանումը	Ղեկավարը	Հասցեն	Կոնտակտային տվյալները
Բուրգաս	Հայ ավետարանական մեթոդիստական եղբայրություն			
Շումեն	Հայ ավետարանական մեթոդիստական եղբայրություն	Մարիամ Ալթունյան	Rue Shoumenska Krepost, 6 9700 Shoumen, Bulgaria	Հեռ. (359-54) 82-74-41
Պլովդիվ	Հայ ավետարանական կոնգրեգացիոնալ եկեղեցի	քարոզիչներ՝ եղբայրներ Հրանտ և Ժոզեֆ Քեշիշյաններ պաշտոնաթող քարոզիչ Ժոզեֆինա Քեշիշյան	Bogomil 7, App 15 4000 Plovdiv, Bulgaria	Բջջ. (359-895) 37-68-97 Էլ. փոստ harykesh2009@hotmail.com
Ռուսե	Հայ ավետարանական մեթոդիստական եկեղեցի			
Սոֆիա	Սոֆիայի Հայ Ավետարանական եկեղեցի	հոգևոր հովիվ՝ վերապատվելի Սարգիս Փարավազյան	Rue Tsar Samouil No. 11 1463 Sofia, Bulgaria	Հեռ./ֆաքս (359-2) 851-76-61
Սոֆիա	Հայ ավետարանական եղբայրություն	քարոզիչ՝ եղբայր Սարգիս Օվանեսյան	Petko Todorov str. bl.3 vh.A ap.6 Sofia 1404, Bulgaria	Հեռ. (359-2) 858-27-64 Բջջ. (359-888) 562-706 Էլ. փոստ sarkis_o@yahoo.com
Վարնա	Հայ ավետարանական մեթոդիստական եկեղեցի	հոգևոր հովիվ՝ եղբայր Ներսես Կետիկյան պաշտոնաթող հովիվ՝ վերապատվելի Երվանդ Կազապյան	BOX 70 9001 Varna, Bulgaria	Հեռ. (359-52) 918-983 Բջջ. (359-897) 212-553 Ֆաքս (359-52) 601-906 Էլ. փոստ ketikian@abv.bg

<sup>1</sup> Աղբյուրը՝ AMAA Directory 2010: Armenian Evangelical Churches, Institutions, Organizations, Pastors and Christian Workers Worldwide, p. 8-9 <http://www.amaa.org/Directory%20for%20website.pdf>

## 5. ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ. ՏԵՂԵԿԱՏՈՒ

### *Թվաքանակը և աշխարհագրական սփռվածությունը*

Հայերի թիվը Լեհաստանում 2001թ. տվյալներով (ոչ պաշտոնական) կազմում է 100-120 հազար<sup>1</sup>: 2009թ. դրությամբ Լեհաստանում բնակվում է 25-30 հազար հայ<sup>2</sup>: Հիմնականում բնակվում են մայրաքաղաք Վարշավայում, Կրակով, Գլիվիցի, Գդանսկ, Պոզնան, Լոձ և այլ քաղաքներում:

### *Պատմական ակնարկ*

Լեհաստանի գաղութի պատմությունը սկիզբ է առնում 14-րդ դարից: 15-16-րդ դդ. հայերի թիվը Լեհաստանում ստվարացել է: Հայերի հոսքը պայմանավորված էր Լեհաստանի կենտրոնական իշխանությունների և առանձին լեհ մագնատների կողմից հայ արհեստավորներին և առևտրականներին տրված արտոնություններով: Սակայն արդեն 16-րդ դ. երկրորդ կեսից տարածվել են ինչպես տնտեսական, այնպես էլ կրոնական հալածանքներ, և, ի վերջո, 1699թ. լեհահայերին պարտադրվել է կաթոլիկություն ընդունել, ինչն արագացրել է լեհահայության ձուլման

---

<sup>1</sup> Միքայել Մալխասյան, «Հայերն աշխարհում», Երևան, 2007թ., «Հայկական սփյուռք», Երևան, 2003:

<sup>2</sup> Հայերի մեծ հոսքի հետևանքով Լեհաստանի իշխանությունները ՀՀ քաղաքացիների նկատմամբ 1998-ից կիրառում են մուտքի արտոնագրման խստացված կարգ: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ հնարավոր ենք համարում հայերի թվի նվազումը, որը կարող է պայմանավորված լինել Լեհաստանում անօրինական հիմունքներով բնակվող հայերի արտաքսմամբ:

---

ընթացքը: Հայ համայնքի քայքայման պատճառը, սակայն, եղել է Լեհաստանի անկախության կորուստը<sup>1</sup>:

18-րդ դ. Լեհաստանի համար միաժամանակ մեծ լուսավորության և մեծ անկման դարաշրջան էր, որից անմասն չմնացին նաև լեհահայերը, նրանք զրկվեցին մինչ այդ ունեցած արտոնություններից. փակվեցին հայկական եկեղեցիները, վանքերը, դպրոցները, 1787թ. փակվեց նաև չորս հարյուրամյակ գործող հայկական դատարանը: Հայ համայնքները գրեթե դադարեցին գոյություն ունենալ: Սակայն Լեհաստանի պետականության վերականգնումից հետո (1918թ.) հայ համայնքային կյանքում որոշակի վերելք նկատվեց. հիմնադրվեցին նոր լեհահայ ընկերություններ, հրատարակվեցին ամսագրեր:

1939թ., երբ Խորհրդային Միությունը, համաձայն ֆաշիստական Գերմանիայի հետ կնքված համաձայնագրի, զորքեր մտցրեց Լեհաստանի արևելյան շրջաններ, շուրջ վեց դար գոյություն ունեցող հայկական համայնքի հայության միայն մի փոքր մասը կարողացավ հարմարվել խորհրդային կարգերին. հիմնական մասը տեղափոխվեց արևմուտք և բնակություն հաստատեց բուն լեհական քաղաքներում (Կրակով, Գլիվիցի, Վարշավա, Գդանսկ, Լոձ, Պոզնան և այլն):

Չնայած բոլոր խոչընդոտներին, Լեհաստանի հայկական համայնքին հաջողվել է վերականգնվել: 1991 թվականից տեղի են ունեցել լեհահայության համալեհաստանյան համագումարներ

---

<sup>1</sup> 1772թ. տեղի է ունեցել քաղաքականապես և տնտեսապես թուլացած Ռեչ Պոսպոլիտայի առաջին բաժանումը, իսկ 1793թ. և 1795թ. երկրորդ և երրորդ վերաբաժանումները Ավստրիայի, Պրուսիայի և Ռուսաստանի միջև:



(առաջինը Կրակովում՝ 1991թ., հաջորդը Գլիվիցիում՝ 1992թ., ապա՝ 1994թ. և 1998թ.):

Ներկայում Լեհաստանում բնակվող հայերին ընդունված է պայմանականորեն բաժանել հին և նոր սերունդների: 17-րդ դ. հայ համայնքի կաթոլիկացումից հետո գրեթե ամբողջությամբ ձուլվեց, մոռացվեց մայրենի լեզուն: Հետագայում միայն շատ լեհեր, ի զարմանս իրենց, հայտնաբերեցին իրենց հայկական արմատները: Այժմ արդեն Լեհաստանում ակտիվ գործունեություն են ծավալում լեհահայ հին սերնդին միավորող մի շարք կազմակերպություններ, ինչպիսին է, օրինակ, լեհական ազգագրական ընկերությունը, որը ոչ պաշտոնապես վերածվեց լեհահայերի միության:

Նոր սերնդի հայերը (100 հազարից ավելի) Լեհաստան են տեղափոխվել Խորհրդային Միության փլուզումից հետո, ինչպես Հայաստանից, այնպես էլ նախկին խորհրդային հանրապետություններից, որոնց փոքր մասն է միայն երկրում բնակվելու օրինական կարգավիճակ ստացել:

Վարչավայում և Կրակովում գործում են հայկական դպրոցներ (Լեհաստանի հայկական դպրոցների մասին տե՛ս *Աղյուսակ 5.1*):

### ***Վազմակերպչական կառույցները***

Լեհաստանում գործում են Վարչավայի, Լոձի, Էրլոնգի, Գլիվիցիի հայկական միությունները (Լեհաստանի հայկական կառույցների մասին տե՛ս *Աղյուսակ 5.2*): 2009թ. օգոստոսին տեղի ունեցավ «Լեհաստանի հայերի համագումարի» հիմնադիր նիստը: Ընտրվեց համայնքի խորհուրդ, որի ղեկավար նշանակվեց ձեռներեց Կարեն Հովսեփյանը:

Լեհաստանում գործում են նաև հայ-լեհական կառույցներ,

---

որոնցից կարելի է հիշատակել «Անի» լեհ-հայկական կազմակերպությունը, որին կից գործում է նաև կրթական կենտրոն: Մյուսը Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնադրամն է, որի նախաձեռնությամբ երեք տարի շարունակ Վարշավայում լույս է տեսնում «Լեհահայոց ընտանիքները անցյալի նկարներում» օրացույցը: 2010թ. լույս տեսած օրացույցը, ի տարբերություն նախորդ երկու տարիների հրատարակումների, լույս է տեսել լեհերեն և հայերեն: Նոր օրացույցում հին սերնդի ընտանիքների կողքին տեղ են գտել Լեհաստանի հայկական համայնքի նոր սերունդը ներկայացնող՝ 1990-ական թթ. Լեհաստան տեղափոխված ընտանիքների լուսանկարներ և պատմություններ<sup>1</sup>:

### ***Տեղեկատվական ռեսուրսները***

Հետպատերազմյան Լեհաստանում առաջին հայկական հասարակական-քաղաքական տպագիր թերթը՝ «Ավետիս» («*Awetis*») անվանումով, լույս է տեսնում 2009թ. հոկտեմբերի 17-ից: Գլխավոր խմբագիրն է Արմեն Արտվիչը:

---

<sup>1</sup> <http://www.hayernaysor.am/newsday.php?p=0&c=0&t=0&r=0&year=2010&month=04&day=08&shownews=8946&LangID=4#8946>

*Լեհաստանի հայկական դպրոցները*

	<b>Դպրոցը (կայքը)</b>	<b>Տնօրենը</b>	<b>Կոնտակտային տվյալները</b>
1.	Վարշավայի հայկական դպրոց	մագլիստորու Մարգարիտա Էրեմյան	<p><b>Հասցե`</b> ք. Վարշավա, Կարոմեյիցկա փող. 1300-163 (միջնակարգ դպրոց թիվ 210)</p> <p><b>Հեռ.`</b> 601 068 368</p> <p><b>Էլ. փոստ`</b> mag379@wp.pl</p>
2.	Կրակովի հայկական դպրոց szkola.armenia.pl	դոկտոր Գոհար Խաչատրյան	<p><b>Հասցե`</b> ք. Կրակով, Ռայսկա փող. 1, Էրկրորդ հարկ 31-124 (Վոյեվոդային հասարակական գրադարան)</p> <p><b>Հեռ.`</b> 600 402 169</p> <p><b>Էլ. փոստ`</b> gohar@armenia.pl, gohar.khachatryan@gmail.com</p>

Լեհաստանի հայկական կառույցները

N	Քաղաքը	Կառույցի անվանումը	Ղեկավարը	Կոնտակտային տվյալները
1.	Վարշավա	ՀՄՀՄ հայկական հիմնադրամ fundacjaormianska.pl	-	<b>Հասցե՝</b> ք. Վարշավա, Ֆիլարովի փող. 83 <b>հեռ./ֆաքս՝</b> (+48 22) 696586108, (+48 22) 8234075 <b>Էլ. փոստ՝</b> marta@fundacjaormianska.pl; secretariat@fundacjaormianska.pl
2.	Վարշավա	Լեհաստանի նոր հայ համայնքների ընկերակցություն	Նախագահ՝ Ժորա Օհանջանյան	<b>Հասցե՝</b> ք. Վարշավա , 03-879, Պրոմսլսկի փող. 4 <b>հեռ./ֆաքս՝</b> 4822-678-5120, <b>Էլ. փոստ՝</b> 4822-678-6110
3.	Լեռնցին	Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնադրություն heritage.ormianie.pl	Նախագահ՝ Եվա Աբգարովիչ	<b>Հասցե՝</b> ք. Լեռնցին, Օշկևի փող. 6ա, 05-155 <b>Հեռ.՝</b> 0048 (022) 7948080, 0048 606 784 928 <b>Էլ. փոստ՝</b> fundacja@ormianie.pl
4.	Կրակով	Կրակովի հայ մշակութային ընկերություն otk.armenia.pl	Նախագահ՝ Ադամ Տերլեցկի	<b>Հասցե՝</b> ք. Կրակով, 30-547, Բոհատերով Գետտա փող. 16/10 <b>Հեռ.՝</b> (+48 12) 6565607 <b>Էլ. փոստ՝</b> otk@kki.net.pl
5.	Թրբուն	Հայերի ուսումնասիրության կենտրոն centrum-armenia.umk.pl	-	<b>Հասցե՝</b> ք. Թրբուն, 87-100, Ֆոսա Ստարոմեյսկա փող. 1ա (Նիկոլաուս Կոպերնիկոս համալսարանի Սոցիոլոգիայի ինստիտուտ) <b>հեռ./ֆաքս՝</b> (+48 56) 3113655 <b>Էլ. փոստ՝</b> secretary@centrum-armenia.uni.torun.pl
6.	Գլիվիցի	Լեհաստանի հայերի միություն	Նախագահ՝ Աննա Օլաշանսկա	<b>Հասցե՝</b> ք. Գլիվիցի, Կոնստիտուցիայի փող. 7/2 <b>Հեռ.՝</b> 0048 32 231 78 24 <b>Ֆաքս՝</b> 0048 32 282 64 22
7.	Լոճ	Լոճի հայերի միություն	Նախագահ՝ Մարտին Գասպարյան	<b>Հասցե՝</b> ք. Լոճ, 321 Բրուխնիկի փող. 1, <b>Հեռ.՝</b> 0048 506025610
8.	Էբրնգ	Էբրնգի հայերի միություն	Նախագահ՝ Գենարի Մարտիրոսյան	<b>Հասցե՝</b> ք. Էբրնգ, 82-300, Դարկայի փող. 67/61 <b>Էլ. փոստ՝</b> genadiarm@wp.pl
9.		Լեհաստանի հայկական համագումար	Նախագահ՝ Կարեն Հովսեփյան	<b>Էլ. փոստ՝</b> karen@hbinvestment.pl
10.		«ԱՍԲ» լեհ-հայկական կազմակերպություն	Նախագահ՝ Մարգարիտա Երեմյան- Վոլկիսկովսկա	<b>Հասցե՝</b> Ժան Բրիստի փող. 8 <b>Հեռ.՝</b> 0048 601 068 368 <b>Էլ. փոստ՝</b> mag3279@wp.pl

## 6. ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՒԿՆԵՐԸ ԿԱՍ «ՀԻՆ» ՀԱՄԱՅՆՔԸ

Եվրոպական, մասնավորապես՝ արևելաեվրոպական երկրներում՝ Ռուսիայի, Հունգարիա, Լեհաստան, այսօր բնակվում են հայերի հին սերունդներ, որոնք հարյուրամյակների ընթացքում ենթարկվել են դավանափոխության: Հատկապես Լեհաստանի դավանափոխ հայերի սերունդների մեծ մասը՝ պայմանավորված տարբեր գործոններով, կորցրել էր նաև ազգային ինքնագիտակցությունը, իսկ կապերը Հայաստանի և Հայության հետ: Պետք չէ ենթադրել, թե Հայության այս տարադավան խմբում վերջնականապես մարել է հայկական ինքնագիտակցությունը. բազում «լեհացած» հայեր որոշակիորեն պահպանում են հայ լինելու հիշողությունը, ինչը ժառանգաբար փոխանցվում էր ընտանիքներում: Դրա խոստուն վկայությունն է այն, որ վերջին 30 տարիներից Լեհաստանում նկատվում է հին համայնքի՝ կաթոլիկ հայերի աշխուժացում (հայկական կաթոլիկ կրոնական համայնքների մասին տե՛ս *Աղյուսակ 6.1*), որն ինքնակազմակերպվեց նրանց անմիջական նախաձեռնությամբ: Մեր ժամանակներում ծագումով հայ կաթոլիկները հետադարձ հայացք են նետում անցյալին, փնտրում իրենց արմատները, փորձում կապվել այն ամենին, ինչը հայկական է:

### *Պատմական ակնարկ*

Լեհաստան հայերի մուտքը սկսվում է միջնադարից մինչև 17-րդ դարը: Սա այն ժամանակաշրջանն է (առաջին փուլ), երբ հայերի բավական ստվար մի զանգված աստիճանաբար բռնի դավանափոխության է ենթարկվում՝ Վատիկանի կողմից նախաձեռնված

---

եկեղեցական ունիայի արդյունքում, որն այսպես կոչված «կրոնական հերձվածքի» դեմ լեհական ռեակցիայի և ճիզվիտների սուր պայքարի հետևանք էր՝ ուղղված այլադավան (հայ առաքելական և ուղղափառ) եկեղեցիների դեմ:

Փաստորեն, հայերի լեհացման գործընթացը սկսեց արագանալ կաթոլիկություն ընդունելուց հետո՝ 17-րդ դ. 30-ական թվականներից: Այս իրողության հետևանքով հայերն արագ ասիմիլացվեցին լեհական կաթոլիկ հասարակությանը: Իր հերթին, 1664թ. Վատիկանը հանձն առավ զբաղվել հայ նորադարձ կաթոլիկների կրթական խնդիրներով: Նույն թվականին Լեհաստան են ուղարկվում իտալացի վանականներ, որոնք հայերի համար ստեղծում են դպրոցներ, համայնքի անդամներից ընտրում նոր սերնդի ապագա հոգևորականներին:

Հակառակ այս իրողությանը, բռնի դավանափոխման քաղաքականությունը միանշանակորեն դրական չգնահատվեց լեհահայերի կողմից: Շուրջ քսան տարի հայ առաքելականները պայքարում էին այս նոր երևույթի դեմ, սակայն հայ մեծահարուստ վաճառականների կապիտալը խարսխված էր լեհ կաթոլիկ հասարակության վրա, որոնք չսատարեցին համայնքին: Նրանց մեծ մասն արտագաղթեց Բուլղարիա, Ռումինիա, Մոլդովա:

Հետագոտող Վ.Կիրակոսյանի կարծիքով՝ եկեղեցական ունիան պարզապես արագացրեց լեհահայ համայնքի քայքայման ու ձուլման ընթացքը. նախկին ծաղկուն գաղութը դավանափոխության, ինչպես նաև Ռեչ Պոսպոլիտայի տնտեսական և քաղաքական անկման պատճառով սկսեց նոսրանալ, իսկ շատերն էլ, ընդունելով կաթոլիկություն, հեռացան ազգային արմատներից, մոռացան մայրենի լեզուն: Աստիճանաբար փակվեցին նաև

հայկական դպրոցները, ինչը ևս հայերի լեհացմանն ուղղված քաղաքականությանը նպաստող գործոն էր: Կաթոլիկացումից հետո գրեթե ամբողջությամբ մոռացվեց, կիրառությունից դուրս եկավ առանց այդ էլ սահմանափակ անձանց կողմից կիրառվող հայերենը, որը մնաց միայն որպես եկեղեցական ծիսակատարության լեզու:

Վ.Գիրակոսյանը, «Մի էջ լեհահայոց հոգևոր կյանքի պատմությունից» հոդվածում անդրադառնալով լեհահայերի վաղ անցյալին և մեջբերելով Ֆ.Զախարիաշևիչին՝ Լեհաստանում հայոց լեզվի անհետացման, հայերի դավանափոխության վերաբերյալ, գրում է. «Խզելով կապերը Էջմիածնի հետ՝ այստեղի հոգևորականները Հայաստանի հետ հայերեն լեզվով գրագրության կարիք այլևս չէին զգում և չէին ստանում Էջմիածնի կաթողիկոսի որոշումները: Թորոսովիչը իր կարգադրությունները, կարծեմ, անում էր լեհերենով: Իսկ հայերին ստիպում էին միանալ լատինական կասսոյովին, և ժողովուրդը հաճախում էր այդ կասսոյովները՝ ավելի շուտ սովորելով տեղական լեզուն և մոռանալով իր լեզուն... Այսպիսով, հայերենի օգտագործումը դադարեցվեց, և այդ լեզուն գրեթե լիովին անհետացավ»<sup>1</sup>:

Լեհացման գործընթացներն աստիճանաբար արագանում էին: Հատկապես Լվովի հայ կաթոլիկների թվաքանակը նվազեց և հասավ 100 ընտանիքի, շատերն արդեն իրենց հայկական ծագմամբ լեհ էին համարում:

---

<sup>1</sup> Վ.Գիրակոսյան, Մի էջ լեհահայոց հոգևոր կյանքի պատմությունից, [http://www.lusamut.net/level2\\_.php?id=35&id\\_2=663&cat\\_=2&s=19](http://www.lusamut.net/level2_.php?id=35&id_2=663&cat_=2&s=19).

---

Թեև ժամանակ առ ժամանակ լեհահայ քաղաքային համայնքներն աշխուժանում էին, բայց այդ աշխուժությունը զարմանալիորեն արագ կերպով մարում էր: 19-րդ դարավերջին և մինչև Երկրորդ աշխարհամարտը որոշ քաղաքներում հայկական ծագումով կաթոլիկների մեջ նկատվում է ազգային զարթոնքի նոր բռնկում, որի նախաձեռնողներն էին մի շարք կրոնական գործիչներ: Սակայն այս գործընթացն ընդհատվեց Երկրորդ համաշխարհային պատճառով, որը մեծ հարված հասցրեց աշխուժացման նոր փուլում գտնվող լեհահայերի ճակատագրին:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին բազմաթիվ լեհահայեր արժանացան լեհերի ճակատագրին՝ ենթարկվելով բռնի տեղահանման: Գաղթի ճանապարհին շատերը սպանվեցին կամ կորցրին իրենց ունեցվածքը: 1939թ., երբ Լեհաստանի արևելյան հատվածն անցավ ԽՍՀՄ-ին (Ուկրաինա), կաթոլիկ հայերը տեղափոխվեցին ներկայիս Լեհաստանի տարածք՝ հաստատվելով Վարշավայում, Գլիվիցիում, Օբորնի Շլոնսկում, Օլավայում, Գդանսկում, Կրակովում:

1940թ., երբ Լվովի հայ կաթոլիկ մետրոպոլիան հայտնվեց խորհրդային բանակի վերահսկողության տակ, եկեղեցու հետևորդ հայերի գրեթե կեսը՝ 2500 մարդ, արտորվեց Սիբիր: Նրանց ղեկավար հայր Դիոնիսի Կատետանովիչը ձերբակալվեց և մահկանացուն կնքեց արքորում՝ 1954թ.: Լվովի, Իվանո-Ֆրանկովսկի, Տիսմենիցայի, Լիսեցի Մյասոինի, Բերեժանիի, Գորոդենկայի, Կուտի Հայ Կաթողիկե եկեղեցիների գույքի մեծ մասն ազգայնացվեց: Այս ամենը բացասական ներգործություն ունեցավ էթնիկ հայերի վրա. շատերը լինելով կալվածատերեր՝ թաքցրել են իրենց հայկական ինքնությունը, քանի որ փաստի արձանագրման դեպքում



նրանց մեծ մասն ընդհուպ մինչև 1950թ. աքսորվում էր Սիբիր:

Փաստի առնչությամբ կարելի է եզրակացնել, որ նման քաղաքական բռնաճնշումներն ազդեցիկ են եղել Հայության որոշ հատվածի համար՝ առաջ բերելով հեռացում արմատներից և էլ ավելի խորացնելով «Ժառանգական հիշողության» վերականգնման հետագա հնարավոր փորձերը:

### **«Հին համայնքի» վերածնունդը**

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո լեհահայության ուժացման միտումներն ավելի սաստկացան: Այս գործընթացները համեմատաբար դանդաղեցին 1950-ականների վերջին, երբ լեհահայ կաթոլիկների համար ստեղծվեց Հյուսիսային թեմը (կենտրոնը՝ Գդանսկ), 1980-ական թթ. Հարավային թեմը (կենտրոնը՝ Գլիվիցի), որոնք էլ դարձան լեհահայությունը համախմբող կենտրոններ: Մյուս կողմից՝ սա չէր նշանակում, որ լեհական իշխանություններն ընդունում էին, որ երկրի ներսում բնակվում են ազգային փոքրամասնություններ, մինչև անգամ 1956թ. «ազգային փոքրամասնություն» եզրը քաղաքական դիսկուրսում բացակայում էր: Սակայն 1980-ական թվականներին էթնիկ փոքրամասնություններին առնչվող թեման գերակա էր թե՛ գիտական և՛ թե՛ քաղաքական քննարկումներում:

Այդուհանդերձ, լեհական կառավարությունն ընդհուպ մինչև 1990 թվականը էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ իրականացնում էր երկակի ստանդարտների քաղաքականություն: Հատկապես այն փոքրամասնությունների հանդեպ, որոնք համարվում էին բնիկ կամ վաղուց Լեհաստանում հաստատված. բելոռուսները, չեխերը, լիտվացիները, գերմանացիները, սլովակ-

---

ները, ուկրաինացիներն ու լեմկերը (որոնք իրենց համարում են առանձին էթնիկ խումբ, երբեմն էլ ուկրաինական ենթաէթնիկ խումբ) համարվեցին էթնիկ փոքրամասնություններ, մինչդեռ հարյուրավոր տարիներ լեհական հողում բնակվող հրեաներն ու գնչուները, ինչպես նաև հայերը, թաթարներն ու կարաիմները, որոնք իրենց ավելի շատ լեհ էին ճանաչում կամ երկակի (և՛ լեհ, և՛ հայ) էթնիկ գիտակցությամբ էին առաջնորդվում, փոքրամասնության կարգավիճակից դուրս էին մնում:

Այս ամենը հիմնված էր մեկ ընդհանուր մետաֆորիկ բանաձևի վրա, որն ընդունվեց Լեհաստանում 1989թ. «Ես այն եմ, ինչ ինձ համարում եմ»<sup>1</sup>: Թերևս, այս տրամաբանությամբ էլ առաջնորդվեցին լեհական իշխանությունները՝ առանձնակի կարգավիճակ և նշանակություն տալով այն խմբերին, որոնք ունեին ազգային ինքնագիտակցություն և թվաքանակի որոշակի տարբերություն՝ մյուսների համեմատ: Սակայն սոցճամբարի փլուզումը, ինչպես նաև լեհահայ հին համայնքի ներսում տեղի ունեցող հասարակական, մշակութային և այլ գործընթացները, այդ թվում՝ Լեհաստանում 1980-ականներին ազգային փոքրամասնությունների վերաբերյալ տարբեր մակարդակներում ընթացող քննարկումները խթանեցին հայության կորսված ձեռքբերումների նորովի ներկայացումն ու համայնքի վերածնունդը:

Ըստ այդմ, Լեհաստանի հին հայկական համայնքը վերածնունդ ապրեց անցյալ դարի 1980-ական թվականներին: 1980-ականները

---

<sup>1</sup> Михал Ягелло, Национальные меньшинства в Польше, "Новая Польша", № 6, 2001, с. 35:

լեհահայերի համար նշանավոր էին նրանով, որ Կրակովում կազմակերպվեց նստաշրջան, որից հետո ոչ պաշտոնական հանդիպման ընթացքում առաջարկություն արվեց անդամակցել լեհական ազգագրական ընկերությանը՝ ստեղծել Հայ մշակույթով հետաքրքրվողների ընկերություն, որը ոչ պաշտոնապես վերածվեց լեհահայերի միության<sup>1</sup>: Առաջին նիստն իսկական «հեղափոխություն» էր լեհահայերի կյանքում, որով կրկին վերածնվեց համայնքի ընդհատված կյանքը: Հատկանշական է, որ այս իրադարձությունից հետո Լեհաստանում սկսեցին ստեղծվել հին սերնդին միավորող կազմակերպություններ:

Ներկայում Լեհաստանի հին հայկական համայնքի ներկայացուցիչները հանդիսանում են Հայ Կաթողիկե եկեղեցու հետևորդներ և մոտ 8-15 հազար հոգի են (ոչ պաշտոնական տվյալներով): Իհարկե, այն հատվածն է իրեն համարում Հայ Կաթողիկե եկեղեցու հետևորդ, որը հարյուրամյակների ընթացքում չի կորցրել ազգային ինքնագիտակցությունը և ինչ-որ առումով կապված է հայկականության հետ: Դավանափոխ հայերի այս սերունդներն իրենց հիմնականում համարում են «հայկական ծագումով լեհեր» կամ «Լեհաստանի՝ հայկական արմատներ ունեցող հայեր»: Սրան զուգահեռ՝ մի սովոր գանգված, հակառակ նրան, որ ազգանվան մեջ պահպանել է հայկական հետքեր (օր.՝ Թորոսովիչ, Բոգոսովիչ և այլն), շատ դեպքերում չի ընդունում իր

---

<sup>1</sup> Վարշավայում լույս է տեսել «Լեհահայոց ընտանիքները անցեալի նկարներում 2010» օրացույցը,

<http://ha.nt.am/news.php?p=11&h=4&l=11&p=11&c=0&t=0&r=0&year=2010&month=04&day=08&shownews=8946&LangID=9#8946>

---

բուն ծագումը և առանձնապես չի մոտենում հայկական համայնքին: Մա սկզբունքային հարց է. գերմանական օկուպացիայի ժամանակաշրջանում Լեհաստանի տարածքում բնակվող բազմաթիվ հրեաներ, դիմելով հայ կաթոլիկ քահանաներին, հնարավորություն են ունեցել ընդունել հայկական անուն-ազգանուններ և այդպիսով փրկվել<sup>1</sup>: Նույնիսկ այսօր նրանցից շատերը կրում են լեհական վերջավորությամբ հայկական ազգանուններ: Ժառանգական ծագման որոնման ժամանակ սույն փաստը երբեմն շփոթմունքի և հակասությունների պատճառ է դառնում:

Ի տարբերություն այլ տարիների գոյություն ունեցող պարտադրված սահմանափակ հնարավորության, այսօր հայադարձության գործընթացն ավելի ազատական երանգներ է ստացել, որից էլ օգտվում են խնդրով զբաղվող կառույցները: Մասնավորապես, լեհահայ կաթոլիկների անցյալ և ներկա խնդիրների լուսաբանման համար ստեղծվել են հասարակական, գիտական հիմնադրամներ և կենտրոններ, որոնք նպատակային աշխատանք են տանում նրանց շրջանում, հիշեցնում նրանց ներդրումը Լեհաստանի պետական և հասարակական կյանքում: Հիշատակման է արժանի հատկապես Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնարկությունը, որը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում «հին» ու «նոր» համայնքների կյանքում տեղի ունեցող իրադարձությունները: Ընդ որում, այս հիմնադրամը հովանավորվում է կարդինալ Յուզեֆ Գլեմպի կողմից:

Վերջինիս ջանքերով հին հայերի պատմական և մշակութային

---

<sup>1</sup> Армен Хечоян, Наш человек в Варшаве, Анив №14, 2007, <http://aniv.ru/view.php?numer=14&st=13>:

Ժառանգության, հավաքական հիշողության վերականգնման համար արդեն չորս տարի Վարշավայում լույս է տեսնում «Լեհահայոց ընտանիքներն անցյալի նկարներում» օրացույցը: Օրացույցը լույս է տեսնում հայերեն և լեհերեն, բաժանվում նրանց, ովքեր հետաքրքրվում են իրենց արմատներով: Համաձայն օրացույցի, այսօր բազմաթիվ լեհեր, ի գարմանս իրենց, պարզում են, որ հայկական արմատներ ունեն, անկախ հետազոտություններ են կատարում՝ պարզելու իրենց ծագումը, փնտրում են լեհահայ ազգականների, առհասարակ հետաքրքրվում են իրենց ընտանիքի պատմությամբ<sup>1</sup>:

### ***Հոգևոր-եկեղեցական կյանքը***

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ լեհական մի շարք տարածքներ միացվեցին ԽՍՀՄ-ին, հայ կաթոլիկները, չհամակերպվելով հոգևորականության և համայնքի դեմ իրականացվող բռնաճնշումներին և ուկրաինական ազգայնամուլների հանցագործություններին, տեղափոխվեցին Լեհաստան: Արտագաղթած հայերը բնակություն հաստատեցին երկրի արևմուտքում և հարավում գտնվող գյուղերում և փոքրիկ քաղաքներում, մնացյալ հատվածն իր ապագան տեսնում էր մեզապոլիսներում՝ Վարշավայում, Գդանսկում, Պոզնանում, Լոձում, Գլիվիցիում և այլուր: Մեծ քաղաքներում հաստատված

---

<sup>1</sup> Վարշավայում լույս է տեսել «Լեհահայոց ընտանիքները անցյալի նկարներում 2010» օրացույցը,

<http://ha.nt.am/news.php?p=11&h=4&l=11&p=11&c=0&t=0&r=0&year=2010&mont h=04&day=08&shownews=8946&LangID=9#8946h=04&day=08&shownews=894>

---

հայերի մեջ բացակայում էր հոգևոր-եկեղեցական կյանքը: Ընդհանուր հոգևոր կենտրոնի բացակայությունը որոշ չափով վնասաբեր էր համայնքի կյանքի համար, քանի որ համախմբվածության հիմնական կենտրոն համարվում էր Հայ Կաթոլիկ եկեղեցին: Լեհաստանի քաղաքական հանգամանքները թույլ չէին տալիս վերականգնել համայնքապատկան եկեղեցու իրավունքները, ինչը հնարավորություն կտար վերածնել համայնքը: Նման անմիջապես վիճակը խորացնում էր մեծ քաղաքներում հաստատված հայերի ուժացման միտումները:

Ավելի ուշ՝ 50-ականներին, հարցը դրական ընթացք ստացավ, երբ ստեղծվեցին հայ կաթոլիկ թեմերը: Ժամանակի ընթացքում Հայ Կաթոլիկ եկեղեցին, ինչպես նշում է հետազոտող Բորիս Սերովը, դարձավ Լեհաստանի հայերի «սեփականությունը»<sup>1</sup>: Պատահական չէ, որ առաջին հայկական կազմակերպությունները և ընդհանրապես ազգային զարթոնքն անմիջականորեն կապված էին եկեղեցու ակտիվ գործունեության հետ:

Գալով մեր ժամանակներին՝ նշենք, որ կաթոլիկ դավանանքի հետևորդ հայերը կենտրոնացված են երեք հիմնական քաղաքներում՝ Գլիվիցիում, Գդանսկում և Կրակովում, որոնց համախմբման գործին զգալի ավանդ են բերում տարբեր քաղաքներում գործող կաթոլիկ ծխական համայնքների հոգևորականները: Մասնավորապես, Լեհաստանում հայկական կաթոլիկ առաջնորդ, կարդինալ Յուզեֆ Գլեմպն այն եզակի հոգևորականներից է, որի շուրջ համախմբվել են Վարշավայի, Կրակովի և Գդանսկի հայ կաթոլիկներն ու նրանց

---

<sup>1</sup> Борис Серов, Польские армяне, Армения Завтра, 2007, <http://www.armeniaza-vtra.ru/print.aspx?id=215>

հոգևոր հովիվները: Կարդինալի շնորհիվ բազում հայկական հին ձեռագրեր են փրկվել, նա մեծ ներդրում ունի Լեհաստանում հին հայկական մշակույթի պահպանման գործում: Տարբեր քաղաքներում բնակվող հայ կաթոլիկներին սպասարկող հոգևորականների թվում հոգևոր ծառայություն են մատուցում ինչպես հայեր, այնպես էլ հայկական ծագում ունեցող լեհեր, օտարազգիներ:

Հայ կաթոլիկների հովիվ լեհ քահանաների հոգևոր-եկեղեցական կապերը չեն սահմանափակվում միայն Լեհաստանի տարածքով: Մասնավորապես Վրաստանում նրանց գործունեությունն առնչվում է ոչ միայն հոգևոր, այլև հասարակական և մշակութային ոլորտներին: Այդ կապերի շնորհիվ է, որ Լեհաստանի հյուսիսային Գդանսկ և Շեցինա քաղաքների հայ կաթոլիկ համայնքի հոգևորական է դարձել վիրահայ Արթուր Ավդայանը: Որոշակի առումով սա նման է փոխլրացման քաղաքականության. մի կողմից՝ Մամխուե-Ջավախքի հայ կաթոլիկ գյուղերում հաստատվում են լեհ հոգևորականներ, մյուս կողմից՝ հայ կաթոլիկ հոգևորականները, ստանալով աստվածաբանական կրթություն, աշխատում են համախմբել լեհահայ հին ու նոր համայնքների ներկայացուցիչներին և հատկապես հայերենին չտիրապետող առաջին խմբին:

Լեհաստանի հայ կաթոլիկ եկեղեցին, այնուամենայնիվ, ընդհանուր թեմի կարգավիճակ չունի, տրոհված է թեմերի և Հայ Կաթոլիկ եկեղեցու թեմերի մաս չի կազմում: Այն անմիջականորեն ենթարկվում է պապական իշխանությանը, և համայնքի ներսում տեղի ունեցող ցանկացած վիճելի հարց լուծվում է Վատիկանի կամ լեհական կաթոլիկ եկեղեցու միջոցով: Նրանց կայացրած որոշումները երբեմն անընդունելի են լեհահայ

---

կաթոլիկների համար: Այսպես, 2006թ. Լեհաստանի հայերը պատրաստվում էին անջատվել կաթոլիկ եկեղեցուց՝ համայնքի հովիվ քահանա Թադեուշ Բասահակովիչ-Չալեսկուն պաշտոնից զրկելու եկեղեցական խորհրդի (լեհական) կայացրած որոշման հետևանքով: Հայերեն և լատիներեն լեզուներով ծիսական արարողություններ անցկացնող, հին համայնքից սերող հայր Թադեուշին եկեղեցական իշխանությունները մեղադրում էին կոմունիստական կարգերի ժամանակ ազգային անվտանգության ուժերի հետ համագործակցելու մեջ: Լեհաստանի հայկական մշակութային ընկերակցության ներկայացուցիչ Ադամ Թերլիցկու կարծիքով՝ կաթոլիկ եկեղեցին կարող է կանխել հայերի հեռացումը՝ քահանային հետ բերելով իր պաշտոնին: Ինչպես և սպասվում էր, հայկական կողմի ճնշումները փոխեցին կաթոլիկ եկեղեցու որոշումը<sup>1</sup>:

Կրոնի դերը հին և նոր համայնքների կյանքում տարբեր կերպ է արտահայտվում: «Հին» հայերը կրոնի հարցում ավելի ավանդական մոտեցում ունեն, ավելի շատ են կապված եկեղեցուն: Հայաստանից արտագաղթած հայերի մեջ կրոնական հարցերում երկու բնեռացում կա: Նախ՝ առաքելական եկեղեցու բացակայությունը մեծ ազդեցություն է ունենում հայության այս հատվածի վրա, նրանք այցելում են Լեհական կամ Հայ Կաթոլիկ եկեղեցի, նույնիսկ ներգրավված են աղանդավորական խմբերում: Աղանդավորական խմբեր հիմնականում ներթափանցում են անօրինական կարգավիճակում գտնվողները, որոնց մեծ մասը նաև

---

<sup>1</sup> Польские армяне намерены покинуть лоно Католической Церкви, 26.10.2006, <http://www.pcseba.org/news/index.php?id=29410>:



սոցիալական ծանր դրության մեջ է և փորձում է կենցաղային հարցերը լուծել նրանց միջոցով:

Երկրորդ՝ նոր համայնքի մի զգալի հատված, որի համար եկեղեցի այցելելն այնքան էլ կարևոր չէ, խորհրդային ժամանակներին բնորոշ աթեիստական դիրքորոշումներ ունի<sup>1</sup>:

Ինչ-որ առումով նոր համայնքի առաքելականների առջև ծառայած կրոնական խնդիրները ևս լուծվում են: Այսպես, վերջին 200 տարիների ընթացքում Հայ Առաքելական եկեղեցու գործունեությունը Լեհաստանում արգելված էր, սակայն 2007թ. վերջապես լեհական իշխանությունները որոշում կայացրին գրանցել Հայ Առաքելական եկեղեցին Լեհաստանում:

### ***Հին և նոր համայնքների հարաբերությունները***

Հետաքրքիր են հին հայկական համայնքի և ԽՍՀՄ փլուզումից հետո, 1990-1996թթ., Հայաստանից Լեհաստան արտագաղթածների հաստատման արդյունքում ձևավորված նոր համայնքի հարաբերությունները: Թե այդ հարաբերություններն ինչպես են ընթացել նախկինում և այսօր՝ իմանում ենք լեհ առանձին հետազոտողներից:

Լեհ ուսումնասիրող Մաչեյ Զոնբեկը, որը խորամուխ է եղել Լեհաստանի հին և նոր հայերի ներկայիս փոխհարաբերությունների հարցում, նշում է. «Լեհաստանում նրանք ցանկանում են ընդունված լինել որպես ազգային փոքրամասնության ներ-

---

<sup>1</sup> Krystyna Iglicka, Active Civic Participation of Third Country Immigrants – Poland, Centrum Stosunków Międzynarodowych Center for International Relations, Reports & Analyses, 4/05, Warszawa, 2004, p. 23:

---

կայացուցիչներ (հին համայնքը - *խմբ.*): Նրանց առաջնորդները Լեհաստանում հայերի պատմության և մշակույթի տարածման գործում մեծ ներդրում ունեն և կապեր են հաստատում Հայաստանից վերջին ժամանակաշրջանում տեղափոխված հայերի հետ: Դա նկատվում է համատեղ կազմակերպված հավաքույթների ժամանակ, բիզնես համագործակցության, ինչպես նաև նոր ներգաղթածների երեխաների համար կիրականօրյա դպրոցների ստեղծման մեջ: Հաճախ նաև իրավական օգնություն են ցույց տալիս Հայաստանից արտագաղթածներին, որոնք Լեհաստանում իրենց բնակությունն օրինականացնելու խնդիրներ ունեն»<sup>1</sup>:

Հայկական հին և նոր համայնքների հարաբերություններում որոշակի դրական միտումներ դրսևորվում են ազգային նշանակության և կրոնական միջոցառումների համատեղ իրականացման շրջանակներում՝ լինի Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը, մշակութային և հասարակական որևէ նախաձեռնություն, որոնք նպաստում են երկու շերտերի համակեցությանը:

Օրինակ, Լեհաստանի հայկական կազմակերպությունների դաշնության ղեկավար Մաչեյ Բոգոսևիչը, որը սերում է «հին» հայերից, հարցազրույցներից մեկում նշում է, որ իրենց հաջողվել է Լեհաստանում ծավալել լոբբիստական գործունեություն՝ կապված Հայոց ցեղասպանության հետ. «Հայոց մեծ եղեռնի 90-ամյակի կապակցությամբ 5 օր շարունակ մեզ հաջողվեց

---

<sup>1</sup> Մաչեյ Զոնբեկ, Հայերը Լեհաստանում. նոր համայնք (1990-2007թթ.), Բանբեր Երևանի համալսարանի, Հայագիտություն, 130.1, Երևան, 2010, էջ 71:

լեհական սեյմում 1915թ. առնչվող վավերագրական ֆիլմեր ցուցադրել, կատարել նաև որոշակի քարոզչական աշխատանք: Սա մեծ իրադարձություն էր, որի շնորհիվ ողջ հայությունը՝ «հին» ու «նոր» համայնքներից, հանդես եկավ միասնական կեցվածքով, այստեղ հասկացան, որ մեր տեսակետներն այս առնչությամբ *ընդհանրական են* (ընդգծումը մերն է- *խմբ.*): «Հին» հայերի մեծամասնությունը չի կրել ցեղասպանության արհավիրքները, սակայն ես գտնում եմ, որ սա ընդհանուրիս է վերաբերում»<sup>1</sup>:

Հայկական հին ու նոր համայնքների միջև հարաբերությունների ժամանակակից փուլի մասին ուշագրավ դիտարկումներ է արել նաև Իվոնա Կալիշևսկայան՝ նշելով, թե ինչպիսին էր հայերի հանդիպումը 1990-ական թվականներին և ինչպես այն դրսևորվեց հետագայում:

Ըստ հեղինակի, հին համայնքի ներկայացուցիչները, որոնք հիմնականում բարձրագույն կրթություն ունեցող մարդիկ են, հայերեն չգիտեն (դրանով էլ նրանք տարբերվում են ուրիշ երկրներում ապրող իրենց հայրենակիցներից, որոնց մեծ մասը հրաշալի տիրապետում է հայերենին) և հաճախ իրենց անվանում են հայկական ծագմամբ լեհեր: Նրանք նոր գաղթած հայերի աչքին «պակաս հայկական» են թվում: Եկածներն, իրենց հերթին, հին համայնքի հայերի կողմից համարվում էին չափից ավելի հասարակ, որոնք չէին համապատասխանում հայի մասին իրենց պատկերացմանը: Մյուս կողմից՝ նոր եկածները

---

<sup>1</sup> Армен Хечоян, Наш человек в Варшаве, Анив, №14, 2007, <http://aniv.ru/view.php?numer=14&st=13>:

---

հետաքրքրություն առաջացրին լեհահայերի շրջանում: Վերջիններս նրանցից իմացան ժամանակակից Հայաստանի փաստացի իրավիճակի և երկրի առջև ծառայած խնդիրների մասին: Դա օգնեց նրանց ավելի լավ հասկանալ գաղթի պատճառները: Նախկին համայնքի անդամները նոր եկածներին օգնեցին փաստաթղթային, ինչպես նաև աշխատանք գտնելու և բիզնեսի հարցերում<sup>1</sup>:

Ըստ էության, համայնքների միջև հարաբերությունները սկզբնական շրջանում ընթանում էին դրական հունով, որոնք, սակայն, մասամբ խարխլվեցին, և դա կապված էր քրեական իրավիճակի հետ, ինչը բազմիցս շեշտվել է «հին» համայնքի անդամների կողմից:

Այսպես, երկու տարբեր աշխարհների՝ Հայաստանից եկած հայերի և իրենց հայրենակիցներին օգնել ցանկացող՝ հայկական ծագում ունեցող լեհերի հանդիպումը հաճախ հիասթափություն էր առաջացնում: Հին համայնքն անհանգստացած էր 90-ական թվականներին եկածների «ոչ այնքան դրական» վարքով՝ կապված ռուսական մաֆիայի հանցագործությունների հետ: Նրանք այսպես էին արտահայտվում այդ կապակցությամբ. «Նրանք մեր հանդեպ լեհերի ունեցած վերաբերմունքը փչացնում են<sup>2</sup>»:

Հատկանշական է, որ հին համայնքի ներկայացուցիչները հնարավորինս փորձել են օգնել Լեհաստանում հաստատված

---

<sup>1</sup> Իվոնա Կալիշևսկա, Լեհաստանում հայերի ադապտացիայի ռազմավարությունները, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 2009, էջ 197:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 197:

հայերին՝ անձնագրային և փաստաթղթային, կրթական և այլ հարցերում: Ոմանք անմիջական օգնություն են ցուցաբերել, մյուսները նրանց վերաբերվել են այնպես, ինչպես Հայաստանով հետաքրքրվող լեհերը՝ մտածելով, որ կենտրոնն ինչ-որ որոշում կկայացնի կամ ինչ-որ կազմակերպություններ կընդառաջեն նրանց: Ինչ-որ չափով նրանք նոր հայերին ծանոթացրել են լեհական հասարակության «գաղտնիքներին»<sup>1</sup>:

Ակնհայտ է, որ նման հարաբերությունները որոշակի խթան կհանդիսանային հարաբերություններն այլ մակարդակի հասցնելու համար, քանի որ Լեհաստանում նոր հաստատված հայերը հին համայնքի հայերի կողմից դիտվում են նաև որպես իրենց հայեցիությունը վերականգնելու և համայնքն աշխուժացնելու գործոն<sup>2</sup>: Պատահական չէ, որ ներհամայնքային խնդիրներին, ինչպես նաև Հայաստանի մշակութային և այլ ոլորտներին նրանց հաղորդակից դարձնելու համար 2009թ. հոկտեմբերի 17-ին լույս տեսավ «Ավետիս» («*Awetis*») թերթը (գլխավոր խմբագիրն է Արմեն Արտվիչը), որն առաջին հասարակական-քաղաքական տպագիր թերթն է հետպատերազմյան Լեհաստանում:

Միջհամայնքային կապերի և առհասարակ Լեհաստանի հայության աշխուժացման առումով հատկանշական է նաև սույն թվականին «Հաշվառվենք. լեհահայերը 2011թ. համընդհանուր մարդահամարում» նախաձեռնությունը, որը պատկերացում կտա Լեհաստանում բնակվող ընդհանուր հայության (հին ու նոր

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 197:

<sup>2</sup> Մաչեյ Զոնբեկ, Հայերը Լեհաստանում. նոր համայնք (1990-2007թթ.), Բանբեր Երևանի համալսարանի, Հայագիտություն, 130.1, Երևան, 2010, էջ 71:

---

համայնքների) թվաքանակի մասին<sup>1</sup>: Այս կարևոր նախաձեռնությունն իրականացվում է հայկական և լեհական տարբեր կազմակերպությունների և մարդահամար անցկացնող պետական գերատեսչության կողմից: Ստորև ներկայացնում ենք հայությանը ներկայացված կոչ-դիմումի տեքստը և մարդահամարը կազմակերպող կառույցների ցանկը.

### ***Հաշվառվենք.***

#### ***լեհահայերը 2011թ. համընդհանուր մարդահամարում***

Ընձեռվել է բացառիկ հնարավորություն՝ պարզելու *հայկական ծագումով լեհերի և Լեհաստանում բնակվող հայերի* մոտավոր թիվը: 2011թ. ապրիլի 1-ից հունիսի 30-ը Լեհաստանում տեղի կունենա Ազգային համընդհանուր մարդահամար և բնակահամար (ԱՀՄԲ): Հրավիրում ենք բոլոր հայերին կամ նրանց, ովքեր զգում են իրենց հայկական ծագումը (ինչպես Լեհաստանի քաղաքացիներին, այնպես էլ նրանց, ովքեր մշտական կամ ժամանակավոր ապրում են Լեհաստանում), մասնակցել 2011թ. մարդահամարին և հատկապես ուշադրություն դարձնել հարցաթերթիկի՝ ազգային կամ էթնիկ պատկանելությանը վերաբերող հարցերին: Անհրաժեշտ է 2011թ. ապրիլի 1-ից հունիսի 30-ը այցելել ***www.spis.gov.pl*** էլեկտրոնային կայքէջ և իրականացնել համացանցային ինքնագրանցում: Սա հույժ կարևոր է, քանի որ նախորդ մարդահամարի համեմատ, հարցավարները կայցելեն բնակարանների՝ պատահականությամբ ընտրված 20%-ը:

---

<sup>1</sup> Ցավոք, ներկայում չենք կարող հաղորդել մարդահամարի տվյալները, որովհետև դրանք հրատարակվելու են տարեվերջին:

**Հարցաթերթիկում, ի թիվս այլ հարցերի,  
կան նաև հետևյալ հարցերը.**

Ա) Ո՞ր ազգության եք պատկանում: (Ազգություն ասելով պետք է հասկանալ ազգային կամ էթնիկ պատկանելությունը: Չպետք է այն շփոթել քաղաքացիության հետ):

Խնդրում ենք խորհել հարցաթերթիկի տվյալ հարցադրման կապակցությամբ: Հանուն մեր ազգի բարօրության՝ հորդորում ենք բոլորին

**առաջին հարցադրման մեջ նշել հայկական ծագումը:**

Ազգություն ասելով (ազգային կամ էթնիկ պատկանելություն) 2011թ. ԱՀՄ դրույթը ենթադրում է. «*հայտագրված, հիմնված ենթակայական (սուբյեկտիվ) ինքնազգացողության վրա, յուրաքանչյուր մարդու անհատական բնույթ, որն արտահայտում է նրա զգացական, մշակութային կապը կամ կապված է ծնողների ծագման, նշված ազգի կամ էթնիկ խմբի հետ*»:

Բ) Արդյոք նաև ազգային կամ էթնիկ այլ խմբի պատկանելություն զգո՞ւմ եք:

Երկրորդ հարցադրումը պարտադիր չէ, ինչը նշանակում է, որ մարդահամարի արդյունքներն ամփոփելու ժամանակ հնարավոր է, որ այն հաշվի չառնվի: Կարծում ենք, որ պարտավոր ենք ինքներս մեզ պատասխանել այն հարցին, թե Լեհաստանում որքան հայ կամ ազգությամբ հայ լեհ է բնակվում: Նախորդ՝ 2002թ. համընդհանուր մարդահամարի համաձայն,

---

ամբողջ Լեհաստանում բնակվում է ազգությամբ հայ միայն 1082 լեհ, որից 262-ը՝ Լեհաստանի քաղաքացի: 2011թ. մարդահամարում ազգային որևէ փոքրամասնության իրենց պատկանելությունը նշող մարդկանց թիվը, անշուշտ, կավելանա, քանի որ այս անգամ հարցերն ավելի լավ են ձևակերպված:

*Ստորև ներկայացնում ենք երեք փաստարկ, թե ինչու է անհրաժեշտ մասնակցել 2011թ. ԱՀՄ-ին և ուշադիր լինել ազգային պատկանելությանը վերաբերող հարցադրմանը.*

*Ա) Հայ հասարակության ձայնն այսուհետ առավել լսելի կլինի և հաշվի կառնվի: Պետական հիմնարկությունները հիմնվում են մարդահամարի ժամանակ հավաքված վիճակագրական տվյալների վրա, ուստի մինչ այս ընդունված և նշված էր Լեհաստանի՝ ազգությամբ հայ հազիվ 262 քաղաքացի:*

*Բ) Պակաս կարևոր հանգամանք չէ, որ ինքներս չգիտենք, թե որքան է լեհահայերի թվաքանակը և Լեհաստանի հատկապես որ շրջաններում են բնակվում նրանք:*

*Գ) Հաճախ մեզ չեն դիտարկում որպես Սփյուռքի մաս, քանի որ ինքներս չենք կարող ասել, թե որքան հայ է բնակվում Լեհաստանում:*

Թե որքան կարևոր է հայերի և ազգությամբ հայ անձանց թվաքանակի մոտավոր պարզումը, կարող է փաստել այն հանգամանքը, որ դիմում-կոչի տակ ստորագրել են Լեհաստանում եռանդուն գործող հայկական բոլոր կազմակերպությունները.

Քին Թադեուշ Իսակովիչ-Չալեսկի – Կառավարության և ազգային



ու էթնիկ փոքրամասնությունների միացյալ հանձնաժողովի ներկայացուցիչ

Արի Արի հիմնարկություն, Բիդզջ

Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնարկություն, Վարշավա

Հայկական հիմնարկություն KZKO, Վարշավա

Հայ-լեհական հիմնարկություն, Վարշավա

Գղանսկում Լեհական ազգագրական ընկերությանը կից հայկական մշակույթով հետաքրքրվողների ընկերություն

Կրակովում Լեհական ազգագրական ընկերությանը կից հայկական մշակույթով հետաքրքրվողների ընկերություն

Վարշավայում Լեհական ազգագրական ընկերությանը կից հայկական մշակույթով հետաքրքրվողների ընկերություն

Լեհաստանում հայերի համագումար, Վարշավա

Լեհահայոց մշակութային ընկերություն, Կրակով

Շլոնսկի հայերի միություն, Ջարժե

Լեհաստանի հայերի միություն, Էրլոնգ

Լեհաստանի հայերի միություն, Լոձ

Լեհահայոց ընկերություն, Վրոցլավ

«Անի» հայ-լեհական միություն, Վարշավա

Արքեպ. Յուզեֆ Թեոդորովիչի անվ. Լեհաստանի հայերի միություն, Գլիվիցի<sup>1</sup>

---

<sup>1</sup> Հաշվառվենք. Լեհահայերը 2011թ. համընդհանուր մարդահամարում, <http://www.dziedzictwo.ormianie.pl/en/Hashvarrenkh>

---

Լեհաստանի հայ հասարակության շահերի ներկայացման նպատակով կատարվում են այլ քայլեր՝ ևս, և դրանում մեծ ներդրում ունի Վարչավայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան, պրոֆ. Աշոտ Գալոյանը: Վերջինիս ջանքերով ս.թ. տարեսկզբին տեղի ունեցավ հավաք հայկական կազմակերպությունների և խմբերի ներկայացուցիչների հետ: Հավաքվածների թվում էին ինչպես վերջերս Լեհաստան ժամանածներ, այնպես էլ լեհահայ հին ընտանիքների ժառանգներ՝ սենատոր Լուկաս Աբգարովիչը և Հայ մշակութային ընկերության նախագահ Ադամ Տերլեցկին: Հանդիպման ընթացքում որոշվեց ստեղծել Լեհաստանում հայերի կոնգրես կազմակերպությունը: Նրա նպատակը պետք է լինեն հայ հասարակության միասնության կառուցումն ու նրա շահերի ներկայացումը: Կազմակերպության նախագահ ընտրվեց Գլիվիցիից հայ գործարար Կարեն Հովսեփյանը, որը խոստացավ կազմակերպության կառույցների դինամիկ զարգացումներ<sup>1</sup>:

Ահա այսպիսի զարգացումներից հետո կարելի է փաստել, որ երկու հայկական շերտերի սերտ շփումները հեռանկարային են և նպաստավոր «ժառանգական հիշողության» վերականգնման համար: Սա էլ ավելի կիրթանի նաև հայ-լեհական կապերը: Գուցեն լեհահայերի սերունդների այցելությունները Հայաստան (իսկ այդպիսի նախաձեռնությամբ հանդես գալն անհրաժեշտություն է) հնարավորինս նպաստեն, որպեսզի նրանց շրջանում

---

<sup>1</sup> Լեհաստանում հայերի կոնգրեսը,  
<http://www.dziedzictwo.ormianie.pl/am/:նուր մարդահամարում>,  
<http://www.dziedzictwo.ormianie.pl/en/Hashvarrenkh>

հայադարձությունը կանգ չառնի: Հարկ է անդրադառնալ մի շատ կարևոր փաստի եւ. Լեհաստանի իշխանությունները ներկայումս միանշանակորեն չեն խոչընդոտում հայադարձությանը, մյուս կողմից՝ հայ կաթոլիկների մեծամասնությունն ունի բարձրագույն կրթություն, շատերը պետական ծառայողներ են, գիտության ու մշակույթի բնագավառի աշխատողներ:

Լեհաստանի հայկական կաթոլիկ կրոնական հասնայքները

	Միական համայնքը (վայքը)	Քահանայի անունը	Կոնտակտային տվյալները
1.	Մուրբ Պոդոս-Պեստոսի հռոմեակաթոլիկ ծխական համայնքի Գդանսկի հայկական կաթոլիկ ծխական համայնք piotrpawel.diecezja.gda.pl	Գդանսկի հայկական կաթոլիկ ծխական համայնքի քահանա Ցեզարի Անտունիչ	<b>Հասցե՝</b> ք. Գդանսկ, Մաքի Կրոսկ փող.3 80-822 <b>Հեռ.</b> ՝ 58 301 99 77 <b>Էլ. փոստ</b> ՝ spgda@diecezja.gda.pl
2.	Վարշավայի սուրբ Ավգուստինի հռոմեակաթոլիկ ծխական համայնքի Գլիվիցիի հայկական կաթոլիկ ծխական համայնք	Հյուսիսային Լեհաստանի ծխական համայնքի հոգևոր հովիվ, Գլիվիցիի հայկական կաթոլիկ ծխական համայնքի քահանա Ալբյորտ Ավրայան	<b>Հասցե՝</b> ք. Վարշավա, Նովոլիսկայի 18 01-019 <b>Հեռ.</b> ՝ 22 838 30 95 <b>Էլ. փոստ</b> ՝ arturrm@wp.pl
3.	Հարավային Լեհաստանի ծխական համայնք isakowicz.pl	Հարավային Լեհաստանի հայերի հոգևոր հովիվ, կաթոլիկաբարոյաբան ազգային և էթնիկ փոքրամասնությունների միացյալ հանձնաժողովի ներկայացուցիչ՝ քահ. Թադեուշ Բասկովիչ-Ջալեակի	<b>Հասցե՝</b> ք. Ռուրովա, Ռարյանովցե 1, 32-064 <b>Հեռ.</b> ՝ 12 283 90 80 <b>Էլ. փոստ</b> ՝ tadeusz@isakowicz.pl

## 7. ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ. ՏԵՂԵԿԱՏՈՒ

### ***Թվաքանակը և աշխարհագրական սփռվածությունը***

Հունգարիայում հայերի թիվը 1991թ. տվյալներով կազմում էր 8000, 2003թ.՝ շուրջ 15 հազար, իսկ 2010թ. տվյալներով բնակվում է մոտ 6000 հայ, որոնցից 3500-ն ունեն քաղաքացիություն: Նրանց մոտ երկու երրորդը բնակվում է մայրաքաղաք Բուդապեշտում և հարևան Պեշտ երկրամասում: Հունգարիայի կառավարությունը հայերին ճանաչում է գրանցված 13՝ պետության հիմնադիր համարվող ազգերի շարքում:

Հունգարիայի հայերի գերակշիռ մասը մտավորականներ են: Ներկայում հունգարահայերը զբաղվում են առևտրով, կան բժիշկներ, երաժիշտներ: Համայնքի ակտիվ գործիչներից են հեռուստաբեմադրիչ, Բուդապեշտի 5-րդ շրջանի նախագահ-ղեկավար Ալեքս Ավանեսյանը, լեզվաբան Ինգրիդ Հուտտերերը, Երմոնե Զաբել Մարթայանը: Հին հունգարահայերից սերած երիտասարդ բեմադրիչ Կինգա Կալին 1999-ին նկարահանել է «Հայր մեր» (*Hayr Mehr*) ֆիլմը՝ նվիրված Տրանսիլվանիայի բնակչության մեջ հայկական ինքնության վերարթնացմանը<sup>1</sup>:

### ***Կազմակերպչական կառույցները***

Հայերը Հունգարիայում հիմնադրել են 31 ինքնավարություն, որոնց նպատակն է պահպանել հայոց լեզուն և մշակույթը

---

<sup>1</sup> <http://www.hayernaysor.am/newsday.php?p=0&c=0&t=0&r=0&year=2009&month=05&day=18&shownews=835&LangID=4#835>

---

(Հունգարիայի հայկական որոշ կառույցների մասին տե՛ս *Աղյուսակ 7.1*): Հունգարահայերի մոտ կեսն է հայախոս: Տեղական ինքնակառավարման մարմինները կազմակերպում են հայերենի դասընթացներ, որոնց, սակայն, մասնակցում են սահմանափակ թվով հայ երեխաներ, հիմնականում՝ տրանսիլվանահայեր<sup>1</sup>: Իսկ Հայաստանից նոր գաղթածների զավակներն իրենց ծնողներից են սովորում հայերեն:

### ***Տեղեկատվական ռեսուրսները***

Հայ ազգային փոքրամասնության ինքնավարություն միությունը Բուդապեշտում լույս է ընծայում «Արարատ» հայերեն-հունգարերեն պարբերաթերթը: Մայրաքաղաքում է թողարկվում նաև «Արմենիա» ամսագիրը (Հունգարիայի հայկական լրատվամիջոցների մասին տե՛ս *Աղյուսակ 7.2*):

---

<sup>1</sup> [http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=2366&spphrase\\_id=1431](http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2366&spphrase_id=1431)

*Հոնկոնգիայի հայկական կառույցները*

*Աղյուսակ 7.1*

<b>Քաղաքը</b>	<b>Կառույցի անվանումը</b>	<b>Ղեկավարը</b>	<b>Կոնտակտային տվյալները</b>
1. Բուրյակեշտ	Հոնկոնգիայի հայ ազգային ինքնավարություն	Ադամ Սարգսյան	<b>Հասցե`</b> ք. Բուրյակեշտ, 1025, Պարլամենտի փող. 4 <b>Հեռ.</b> (+36 1) 4205279, (+36 70) 2165576 <b>Էլ. փոստ.</b> szarkeszear@freemail.hu
2.	Բուրյակեշտ հայկական միություն	Ադամ Սարգսյան	<b>Հասցե`</b> ք. Բուրյակեշտ, 1211, Կապիտոլան Յանոս փող. 8/ա <b>Հեռ.</b> (+36 1) 4205279 <b>Էլ. փոստ.</b> szarkeszear@freemail.hu
3.	Վեսպրեմ	Նիկոլոս Հակոբյան	<b>Հասցե`</b> ք. Վեսպրեմ, Յոթանի փող. 57 <b>Հեռ.</b> (+36 70) 204991 <b>Էլ. փոստ.</b> nekogosz@vnet.hu

**Հունգարիայի հայկական լրատվամիջոցները**

	<b>Քաղաքը</b>	<b>Անվանումը (լրացրել)</b>	<b>Ղեկավարը</b>	<b>Կոնտակտային տվյալները</b>
<b>1.</b>	Բուդապեշտ	«Արմենիա» ամսագիրը	Գլխ. խմբագիր՝ Գազիկ Ջոթյան	<b>Հասցե՝</b> ք. Բուդապեշտ, 1138, Նեփթուրդոյի փող. 15/ա <b>հեռ./ֆաքս՝</b> ( +36 1) 2390146 <b>Էլ. փոստ՝</b> kornetas@chello.hu
<b>2.</b>	Բուդապեշտ	«Արարատ» ամսաթերթ	Գլխ. խմբագիր՝ Ալեքսան Ավանեսյան	<b>Հասցե՝</b> ք. Բուդապեշտ, 1051, Դիկ Ֆերենցի փող. 17 <b>Հեռ.՝</b> (361) 267 62 03 <b>Ֆաքս՝</b> (361) 267 31 81 <b>Էլ. փոստ՝</b> info@ararat.hu



## 8. ՀԱՅԵՐԸ ՀՈՒՆԳԱՐԻԱՅՈՒՄ

### Էդվարդ Բաղայանի դիտարկումները

#### *Պատմական կապեր, իրադարձություններ*

Հայության պատմական շփումները հունգարացիների հետ ավելի քան մի հազարամյակի պատմություն ունեն: Պատմությանը հայտնի առաջին արժանահավատ գրավոր նշումները հունգարական ցեղերի մասին պատկանում են վաղ միջնադարի (8-9-րդ դար) հայ պատմաբաններին՝ Մ.Կաղանկատվացուն և Կ.Գանձակեցուն: Հայ պատմիչները հայտնում են, որ Հայաստանի հյուսիսային սահմաններում հայտնվել են նոր քոչվոր ցեղեր՝ «մաջար» ինքնանունով, որոնց հայերը վերանվանել են «սևորդի»: Այս ցեղերի մի փոքր մասը, ընդունելով քրիստոնեություն, բնակություն է հաստատել Հայաստանի հյուսիսարևելյան տարածքներում, իսկ մեծամասնությունը շարունակել է ճանապարհը:

Անցնելով Կարպատները և գրավելով ավազանի տարածքը՝ հունգարական ցեղախմբերը նորից հանդիպեցին հայերին: 12-րդ դարից մեզ հասած եկեղեցական լատիներեն նշումները պատմում են, որ նվաճված տարածքում՝ այսօրվա Էստերգոմ քաղաքի շրջակայքում, գոյություն ունեին հայաբնակ ավաններ:

Հունգարացիներ Կեզայի և Տուրոցիի ժամանակագրությունները հայտնում են, որ հայերը մասնակցել են նաև այժմյան Հունգարիայի տարածքի նվաճմանը և բնակություն են հաստատել այստեղ: Ժամանակակից Հունգարիայի տարածքում հայերի ներկայության մասին վկայում են նաև ավելի հին ժամանակների

---

գրավոր աղբյուրները: Օրինակ, մ.թ. 173թ. Հռոմի կայսր Ավրելիոսի ղեկավարությամբ հայերից կազմված լեգեոնը պարտության մատնեց կվադերին Դիոշենոի լճի մոտ: Հունգարական սկզբնաղբյուրներում հայերի ներկայությունը հաստատվում է սկսած 10-11-րդ դարերից: 13-րդ դարում խաչակիրների արշավանքի մասնակից Հունգարիայի թագավոր Էնդրե II-ը Լևոն Բ-ի օրոք հյուրընկալվեց Կիլիկիայի հայկական թագավորությունում, որտեղ արքաների միջև բարեկամության պայմանագիր կնքվեց: Էնդրե II-ը ցանկություն հայտնեց ամուսնացնել որդուն՝ Անդրաշին, Լևոն Բ թագավորի դստեր՝ Ջաբելի հետ: Վերադարձին նրա հետ Հունգարիա մեկնեցին բավական թվով հայեր, որոնք բնակություն հաստատեցին այն ժամանակվա մայրաքաղաք Էստերգոմում: Էստերգոմի հայկական թաղամասի բնակչությունը 1240-1241թթ. հունգարացիների հետ կռվել է մոնղոլ-թաթար նվաճողների դեմ: 1243 թվականի փաստաթղթերը վկայում են, որ Հունգարիայում գոյություն է ունեցել բնակավայր՝ «*Terra Armenium*»: Այս փաստն ապացուցում է նաև Բելա IV թագավորի գրությունը, որով նա հայկական գաղութին մաքսային արտոնություն է շնորհում:

Հայերի նոր հոսքը դեպի Հունգարիա և, մասնավորապես, նաև հայաշատ Տրանսիլվանիա սկսվել է 15-16-րդ դարերում: 17-րդ դարում Սև ծովի հյուսիսային ափը շրջանցելով, Մոլդովայի և այն ժամանակվա Լեհաստանի միջով հայերը եկան այստեղ՝ խույս տալով զանազան զավթիչներից տառապող Մայր հայրենիքից:

Աշխույժ առևտրական գործունեություն ծավալած հայերը 17-րդ դարից սկսած սերտ կապեր էին պահպանում Տրանսիլվանիայի իշխանության հետ: Իշխան Ապաֆի Միհայը 1672թ. հայերին բնակություն հաստատելու իրավունք և այլ արտոնություններ

շնորհեց: Գաղթականների մեծամասնությունն արհեստավորներ էին: Տրանսիլվանիայի հայերի մեծ մասը բնակվում էր չորս քաղաքներում՝ Ջյորձյուսենտմիկլոշում, Չիկսեպվիգում, Էրժիբետվարոշում (Էրժիբետպոլիս), Սամոշույվարում (Արմենոպոլիս): Հայերին շնորհված արտոնությունները պահպանվեցին նաև այն ժամանակ, երբ Հունգարիան դարձավ Ավստրիական կայսրության մաս, ավելին, նրանց նոր արտոնություններ շնորհվեցին:

Հայկական քաղաքները ստացան նոր իրավունքներ՝ առևտրական, դատական, մահապատժի իրականացման, իսկ քաղաքներում բնակության իրավունք տրվեց միայն հայերին: Այս վերջին հանգամանքը հետագայում բացասական դեր խաղաց գաղութի կյանքում: Քանի որ Տրանսիլվանիա գաղթած հայերի ընդհանուր թվաքանակը մոտ 3000 հոգի էր, իսկ մայր ժողովրդի հետ կապը հեռավորության պատճառով պատահական բնույթ էր կրում, կարճ ժամանակ անց բացահայտվեցին գաղութի լիովին փակ կյանքի «արտոնության» հետևանքները: Պահանջվում էր թարմ արյուն: Արտոնությունները ձգողական ուժ ունեին, և գաղութի ղեկավարությունը հայությանը պատկանելությունն առևտրի առարկա դարձրեց: Բոլոր նրանք, ովքեր ցանկանում էին բնակվել հայկական քաղաքներում, պարտադիր պետք է մկրտվեին հայկական ծեսով և ընդունեին հայկական ազգանուն: Սակայն հենց այստեղ տեղի ունեցավ «սահմանազատումը»: Բոլոր «նոր հայերին» տրվեցին ծաղրական անուններ՝ Անասուն (հետագայում կոմս դարձան), Եզան գլուխ, Ժանգոտ... և այլ շատ ավելի կոպիտ անվանումներ: Այս ամենի մասին վկայում են եկեղեցական գրքերում և գերեզմանաքարերի վրա արված գրառումները, որտեղ հանդիպում ենք մի ուրիշ առանձնահատկության ևս: Մինչև 19-րդ դարի կեսերն

---

իսկապես հայկական ընտանիքների վերաբերյալ բոլոր գրանցումները հայերենով են, իսկ օտարազգիներինը՝ կամ լատիներենով, կամ էլ հունգարերենով: Հետագայում համարյա բոլոր գրանցումները հունգարերենով են, ինչը բացահայտում է ձուլման մակարդակը: Քանի որ Ավստրիական կայսրությունը հաճույքով արտոնություններ և ազնվականի կոչումներ էր վաճառում համարյա բոլորին, բացի հրեաներից, վերջիններս օգտվեցին հայկական քաղաքների կողմից առաջարկված հնարավորություններից:

Տրանսիլվանիայում, բացի հյուսիս-արևելքից եկած հայերից, ապաստան գտան նաև Օսմանյան կայսրության այլ տարածքներից փախած հայ գաղթականները: 18-րդ դարում առևտրի կարգավորման ձևերը փոխվեցին, և հայերը սկսեցին կորցնել տնտեսությունում նվաճած դիրքերը, ինչը փոխարինեցին նոր ժամանակներին ավելի համապատասխանող քաղաքական, մշակութային գործունեությամբ: Սակայն ձուլումը տեղական հասարակությանն այնքան էր խորացել, որ մայրենի լեզուն արդեն փոխարինվել էր հունգարերենով: Մեծահարուստ հայերը փորձում էին դիմակայել սրան՝ հիմնելով որբանոցներ, հայկական դպրոցներ, ընդունակ երիտասարդներին ուսման ուղարկելով Եվրոպայում հայտնի հայկական ուսումնական հաստատություններ: Սակայն ընթացքն արդեն անդառնալի էր, և հայերը ձուլվեցին հունգարական հասարակության մեջ:

Նկատվում է մի հետաքրքիր օրինաչափություն. Եվրոպայի հայկական բոլոր գաղութներում, մայրենի լեզվի ազգապահպան գործոնի վերացման հետ մեկտեղ, սկսվում է հասարակության քայքայումը, տնտեսական և քաղաքական անկումը: Փաստորեն, հայերի հարստության և քաղաքական դիրքի հիմքը հայ

գաղութների միջև գործող տեղեկատվական, տնտեսական, առևտրական ցանցն էր, իսկ ցանցն աշխատեցնող ուժն ազգային պատկանելությունն էր, որի կարևորագույն հատկանիշն է մայրենի լեզուն: Առանց մայրենի լեզվի կարճ ժամանակ անց կորսվեցին ազգային հավատքը, մշակույթը, ընտանեկան կապերը, մնացին միայն հուշեր ինչ-որ առասպելական նախնիների մասին:

Մինչև 1848թ. հեղափոխությունը 57 հայ ընտանիք կամ ձեռք բերեց, կամ ծառայությունների համար կայսեր կողմից ստացավ ազնվականի կոչում, որոնք էլ 19-րդ դարավերջին դարձան հունգար ազնվականության անբաժանելի մասը: 1848-49թթ. ազատամարտին հայկական ծագում ունեցող ավելի քան 70 սպա և 1200 կամավորական զինվորներ կանգնեցին հունգարացիների կողմը: Նրանց թվում էին նաև գորավարներ Էրնյո Կիշը և Վիլյամոշ Լազարը, որոնք ազատամարտի ձախողումից հետո մահապատժի ենթարկվեցին Արադում: Ազատամարտի տապալմանը հաջորդած հալածանքները հայ ազնվականները վերապրեցին ճիշտ նույն կերպ, ինչ և բուն հունգարական ազնվականությունը:

19-րդ դարավերջին, տեղի հայության ձուլման հետ մեկտեղ, բազմացավ հայկական ծագում ունեցող քաղաքական գործիչների, խորհրդարանի անդամների թվաքանակը: 1887-ին հիմնվեց «Արմենիա» հունգարերեն ամսաթերթը՝ համայնքի եռանդուն գործիչ, ուսուցիչ, Գեոլայի Հայկական թանգարանի տնօրեն Խաչիկ Մոնգոտյանի ջանքերով՝ հունգարախոս հայերի ազգային ինքնությունը վառ պահելու, ինչպես նաև հունգարացիներին հայ մշակույթը ներկայացնելու համար: Այս ժամանակաշրջանի հունգարահայերից աչքի են ընկել պատմաբան, քաղաքական գործիչ Անտոն Մոլնարը (Մոլնարյան), իրավաբան Լասլո Գոպչան

---

(Գոպչայան), թատերագիր Գերգեյ Չիկին (Չիկիյան), արձակագիր Լասլո Գորովեն, «հունգարական Տուրգենև» անվանված Իշտովան Պետելեյին, նկարիչ Շիմոն Հոլոշին, «Հունգարիայի սոխակ» անվանված երգչուհի Կոռնելիա Հոլոշին (Ագոստյան) և այլք:

### ***Հունգարահայ նոր գաղութը***

Հունգարահայ նոր գաղութը կազմավորվել է 1911-ին: Առաջին հայերը եղել են գորգավաճառներ Հաճի Ղազարը և Հարություն Հակոբյանը, նաև պրոֆեսոր Հակոբ Չիլինկիրյանը, որը դասախոս էր և արտասահմանյան թերթերի թղթակից: 1915թ. Մեծ եղեռնի հետևանքով հայ փախստականների մեծաթիվ խմբեր ապաստան էին որոնում Եվրոպայում: Հունգարիան ևս հայ գաղթականներին հնարավորություն տվեց բնակվելու երկրում:

Առաջին համաշխարհային պատերազմին հետևած Տրիանոնի պայմանագրի որոշումները մասնատեցին նաև երկրի հայությունը: Հողատերերի ունեցվածքը մեծ մասամբ անցավ Ռումինիային և Հարավսլավիային: Սահմանից այն կողմ հայտնված հունգարամետ միջին խավերը, որոնց հասարակական և տնտեսական հետաքրքրությունները կապված էին Հունգարիայի հետ, ստիպված եղան տեղափոխվել Հունգարիային վերապահված տարածքներ (առաջին հերթին՝ Բուդապեշտ)՝ այդպիսով կորցնելով իրենց հասարակական դիրքերը: Նրանք, ովքեր մնացին այդ տարածքներում, նույնպես ստիպված էին հաշտվել կորուստների հետ: Մի կողմից՝ 1921թ. Ռումինիայի հողային ռեֆորմը գրկեց նրանց իրենց տիրույթներից, մյուս կողմից՝ ձևափոխվեցին քաղաքային կյանքի հիմքերը, ժողովրդագրական վիճակը: Հայկական քաղաքներում բնակություն հաստատեցին բազմաթիվ

ռումինացիներ, և հայկական քաղաքները վերջնականապես կորցրին իրենց հայկականությունը:

Բուդապեշտը դարձավ նախկին Հունգարիայի տարածքում ապրող հայության հավաքական կենտրոնը՝ առաջին հերթին շնորհիվ Մեծ եղեռնից փրկված հայերի: 1920թ. հիմնվեց հունգարահայերի «Մասիս» միությունը: Հայերեն լեզվով լույս տեսավ «Նոր դար» ամսագիրը:

1924թ. Բուդապեշտում հիմնվեց Հայ Կաթողիկե եկեղեցի, իսկ առևտրական կապերն աշխուժացնելու նպատակով՝ հայ-հունգարական բաժնետիրական ընկերություն: 1946-ին ստեղծվեց միայն հունգարացիներից կազմված Հայասերների միությունը: 1947-ին կայացավ Հունգարիայի հայերի համաժողովը, որի ժամանակ կազմավորվեց Հունգարիո հայ միությունը: Այդ թվականին Բուդապեշտում ապրում էր 25-30 հայ ընտանիք, մեծ մասամբ գորգավաճառներ և արհեստավորներ: Գործել է հայկական մատուռ: Հայտնի է եղել Արա Երեցյանը, որը 1944-ին նացիստական ռեժիմի ժամանակ եղել է մի հիվանդանոցի ղեկավար, որտեղ 350-ի մոտ հրեաներ են եղել: Երեցյանը, վտանգելով կյանքը, փրկել է նրանց կյանքը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում և դրանից հետո ձևավորված նոր կարգերը խարխուլեցին հայերի հասարակական դիրքերը: Ոմանց արտաբնակեցրին, իսկ Հունգարահայերի միությունը վերացվեց 1952թ.: Տիրող քաղաքական կարգերն արգելում էին ազգային հիմքով խմբավորումները, բոլոր տեսակի ուղղակի կապերը սփյուռքի և Մայր հայրենիքի հետ: Սակայն այդ ժամանակներում սկսեցին գործել եղբայրական քաղաքների ծրագրերը, որոնք, ցավոք, պաշտոնական բնույթ էին կրում:

---

Քաղաքացիական նախաձեռնությունները տեղի էին ունենում միայն անձնական կապերի մակարդակով:

Սոցիալիստական Հունգարիայում բնակվել են փոքրաթիվ հայեր, հիմնականում Բուդապեշտում: Այստեղ գործել է Հայկական ակումբ, որը ղեկավարել է Անահիտ Արգիրոպուլու-Գլյըջյանը: Հին հունգարահայերի մեջ եղել են բավական թվով գիտության և մշակութային գործիչներ, որոնցից հիշատակելի են դեղագործ Բելա Իշեկուցը, գրող Ալադար Լաալոֆին, դերասան և սրբանկարիչ Գաբոր Ագարդին, դերասանուհի Իլոնա Դայբուկատը, օպերային երգչուհի Շտեֆանիա Մոլդովանը (Անգելեսյան), նոր հունգարահայերից՝ դաշնակահարուհի Նոյեմի Փիշմիշյանը, նկարիչ Լևոն Ազնավորանը և այլք:

1980-ականների վերջից որոշ աշխուժություն է սկսվել հունգարահայերի մեջ՝ կապված, մի կողմից, երկրում ընթացող ժողովրդավարական գործընթացների, մյուս կողմից՝ երկրում Հայաստանից տեղափոխված ընտանիքների առկայության հետ: 1983թ. Հունգարիայում ընդունվեց «Միությունների օրենք», որի համաձայն՝ քաղաքացիական ինքնակազմակերպության հնարավորություն ստեղծվեց: 1987-ին հիմնվեց «Արմենիա-հունգարահայ ընկերական շրջան»-ը, որը հետագայում՝ 1992-ին, վերափոխվեց «Հայ ազգ Հունգարիայի հայերի մշակութային միության»: 1990թ. կարգերի փոփոխությունը որակական առաջընթաց բերեց Հունգարիայում ապրող հայության համար: 1993-ին տեղի հայությունը, 13 այլ ազգերի շարքում, կանոնադրությունով ճանաչվեց որպես պետության հիմնադիր ազգ:

1995թ. փետրվարի 19-ին ընտրվեց 17 հոգուց բաղկացած առաջին Հայ ազգային ինքնավարությունը: 1997-ի հոկտեմբերին



դոները բացեց Բուդապեշտի Հայկական մշակութային կենտրոնը: Բացման արարողությանը Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում էր փոխարտգործնախարար Վ.Օսկանյանը, իսկ Հունգարիան՝ մշակույթի նախարար Բ.Մադյարը: Նույն օրերին տեղի ունեցավ Եվրոպայի հայ կազմակերպությունների ներկայացուցիչների հավաքը, որի մասնակիցները մշակութային և քաղաքական համագործակցության մտադրություն հայտնեցին:

1998-ին, այս նախաձեռնության հիման վրա Շվեյցարիայում ստեղծվեց և պաշտոնապես գրանցվեց Եվրոպայի հայկական միությունների ֆորում կազմակերպությունը:

***Ժամանակակից շրջան. Հունգարիայի ազգային  
փոքրամասնությունների օրենքը՝ որպես արտաքին և ներքին  
քաղաքականության գործոն***

1993թ. ընդունված Հունգարիայի ազգային փոքրամասնությունների օրենքը հասկանալու համար անհրաժեշտ է անդրադառնալ պատմական նախապայմաններին, այսինքն՝ պարզաբանել, թե ինչպես է կազմվել հունգար ազգը:

Մակավաթիվ հունգարական ցեղերը, անցնելով Կարպատի լեռնաշղթան, հայտնվել են մի տարածքում, որն արդեն գրավել էին հողագործ սլավոնները: Քանի որ սլավ ցեղային խմբերի քաղաքացիական զարգացման մակարդակը դեռ չէր հասել համախմբման աստիճանի, տարածքը նվաճող քոչվոր հունգարացիները, օգտվելով քոչվոր ազգերին բնորոշ ռազմական կազմակերպչական նիստուկացի առավելություններից, առանց որևէ դիմադրության տիրացան «անտեր» հողերին և հիմնեցին իրենց պետությունը: Օսմանյան տիրապետությունից ազատվելուց հետո

---

տարածքն այնքան անմարդաբնակ էր դարձել, որ հունգար թագավորները ստիպված էին օժանդակել հարևան պետություններից կատարվող ներգաղթին: Այսպիսով, բացի սլավ ժողովուրդների նոր ալիքից, Հունգարիայում հայտնվեցին նաև արևմուտքից եկած գերմանական ազգերը, հրեաները... Նույն միտումը պահպանվեց նաև Ավստրիական կայսրության օրոք: Կայսրությունն ինչ-որ չափով, իշխանության շահերից ելնելով (բաժանիր, որ տիրես սկզբունքով), հովանավորում էր փոքրամասնությունների ինքնության պահպանման ձգտումները: Սակայն Առաջին համաշխարհային պատերազմից հետո, կայսրության փլուզման հետևանքով առանձնացած անկախ Հունգարիայում ուժեղացան ազգայնամոլական միտումները: Ստիպողաբար փոխվում էին փոքրամասնությունների ներկայացուցիչների ազգանունները, վերացվում էին ազգային դպրոցները, հասարակական կազմակերպությունները, և ստեղծվում էր մի մթնոլորտ, որտեղ այլազգիներին տեղ չկար, իսկ ժողովրդի մեջ սերմանվում էր ազգային մեծամասնության պատկանելության պահանջ: Երկրորդ համաշխարհայինի իրադարձություններն ավելի նպաստեցին ձուլման հակումներին:

Սոցիալիստական կարգերի օրոք իշխանությունները չէին հովանավորում փոքրամասնություններին, սակայն միևնույն ժամանակ ազգայնամոլությունն էլ գտնվում էր արգելքի տակ: 1990թ. պետական կարգի փոփոխությունը և նոր ժողովրդավարական իշխանությունների՝ Եվրամիությանն անդամության ձգտումը դրդեցին իշխանություններին զբաղվել հասարակության «առողջացմամբ»: Պետական կանոնադրության մեջ հայտնվեց «պետության հիմնադիր ազգեր» սահմանումը, որին արժանացան այն

ազգերը, որոնք առնվազն հարյուր տարի ապրել են Հունգարիայում և հունգարացիների հետ ընդհանուր պատմություն ունեն: Կանոնադրության ազգային փոքրամասնությունների մասին հոդվածը պարտադրում է բոլոր ժամանակների իշխանություններին աջակցել և ֆինանսավորել Հունգարիայի ազգային կազմակերպությունների գործունեությունը:

Սահմանմանը համապատասխանում էր 14 ազգ, սակայն հրեական կազմակերպությունները հրաժարվեցին շնորհվող արտոնություններից՝ պատճառաբանելով, որ «հրեա»՝ նշանակում է կրոնական պատկանելություն և ոչ թե ազգություն, որ իրենք իրենց հունգարացի են համարում՝ հիշատակելով Երկրորդ համաշխարհային պատերազմի հայտնի իրադարձությունները: 1993թ., համաձայն կանոնադրության, ծնվեց Ազգային փոքրամասնությունների պետական օրենքը, որը պաշտոնապես թարգմանվեց ազգային լեզուներով (հայերեն թարգմանության հեղինակն է Էդվարդ Բադայանը- *իսր.*):

Առերևույթ օրենքը գեղեցիկ է: Փոքրամասնություններին իրավունք տրվեց զբաղվել ազգի և ազգային սովորությունների պահպանմամբ, մայրենի լեզվի դասավանդմամբ, մշակութային հաստատությունների ստեղծմամբ և այլն: Ազգային փոքրամասնություններն իրավունք ստացան ընտրել և կազմել տեղական ինքնավարություններ, որոնց գործունեությունը ֆինանսավորվում է երկու աղբյուրից՝ պարտադիր պետական նպաստ և հնարավոր, տվյալ տեղական մարմինների ֆինանսական վիճակից կախված՝ տեղական: Այսպիսով, ընտրված տեղական ինքնավարություններն ընտրում են Ազգային (Հանրապետական) ինքնավարության (փոփոխական թվով) կազմը, որի ֆինանսավորումը կատարվում

---

է պետական բյուջեից: Ընտրություններից հետո ազգային և տեղական ինքնավարությունների միջև ոչ մի տեսակի պարտադիր, հետադարձ կապ օրենքը չի նախատեսում, իսկ անկախ ֆինանսավորումը փաստորեն կանխում և տվյալ տեղական ինքնավարության ղեկավարության քմահաճույքի առարկա է դարձնում ընդհանուր ազգային հարցերի լուծումը՝ մասնատելով ազգային կազմակերպությունները: Տեսականորեն տեղական՝ 5 հոգուց բաղկացած ինքնավարությունները պետք է զբաղվեն ազգային հարցերով, սակայն իրականում ֆինանսական սուղ պայմանները տեղական ինքնավարությունների գործունեությունը վերածեցին ձևականության (լավագույն դեպքում տարեկան մեկերկու խնջույք է կազմակերպվում):

Տեղական ինքնավարության կազմի կարևոր նպատակը դարձավ պետական նպաստների յուրացումը, իսկ հարցերի լուծման պատասխանատվությունը լավագույն դեպքում դրվեց Ազգային ինքնավարության վրա: Իհարկե, այս վիճակը վերաբերում է այն ինքնավարություններին, որտեղ կամ ընդհանրապես չկա տվյալ ազգի ներկայացուցիչ, կամ էլ մեծամասնությունն այլազգիների ձեռքին է: Այն ինքնավարությունները, որոնցում ղեկավարությունն ազգային հայրենասերների ձեռքին է, քիչ թե շատ ինչ-որ գործեր կատարում են: Բանն այն է, որ Փոքրամասնությունների օրենքը չի պարունակում ազգի պատկանելության սահմանում, և հասարակությունը ղեկավարվում է լիբերալ «մարդկային իրավունքների» սկզբունքներով՝ ամեն ոք ինքն է ընտրում իր ազգությունը, ոչ ոք պարտական չէ ապացուցել իր ծագումը և ազգային պատկանելությունը: Հետաքրքիր ձևով այս ամենը չի վերաբերում հունգարական սփյուռքին:

Արտասահմանում ապրող հունգարացիները հունգարական քաղաքացիություն կամ անձնագիր ստանալու համար պետական օրենքով պարտադիր պետք է տիրապետեն մայրենի լեզվին, փաստաթղթերով ապացուցեն իրենց ծագումը: Սրանով Ազգային փոքրամասնությունների օրենքը, որը կոչված էր պաշտպանել և պահպանել ազգային փոքրամասնությունները, իրականում ձուլման օրենք է: Այս պարագան, իհարկե, աննկատ չմնաց: Կարճ ժամանակ անց կտրուկ ավելացավ, օրինակ, հայերի թիվը: Եթե 2001թ. մարդահամարի տվյալներով հայախոս քաղաքացիների թվաքանակը կազմում էր 298 հոգի, իսկ իրեն հայ համարում էր մոտ 600 մարդ, 2002թ. հայկական ինքնավարությունների ընտրություններին որպես հայ գրանցվեց և ընտրություններին մասնակցեց մոտ 2500 հոգի: Հունգարացիները շատ շուտ հասկացան, որ եթե պետությունը չի պարզաբանում այս հարցը և գումարներ է բաժանում, ինչու չանվանվել հայ, հույն, լեհ... Եթե հնարավոր է այդ կերպ լրացնել ընտանեկան բյուջեն: Կարճ ժամանակ անց այս հոսանքի հետևանքները սկսեցին զգալ ոչ միայն փոքրաթիվ ազգությունները, այլ նաև գնչուները և գերմանացիները: Մամուլն այս երևույթը կնքեց «Էթնոբիզնես» անունով: Ծիծաղի առարկա դարձավ լեհերի ազգային ինքնավարության նախագահը, որից լեհ լրագրողները, թարգմանչի միջոցով, փորձեցին իմանալ՝ գիտե՞ արդյոք պարոն նախագահը, թե որ գետի ափին է գտնվում Լեհաստանի մայրաքաղաքը: Գերմանացիները, լեհերը և Մայր հայրենիք ունեցող այլ փոքրամասնություններն ուղղակի և անուղղակի պետական աջակցությամբ շտկեցին այս հարցերը, և միայն մենք՝ հայերս, չկարողացանք լուծել խնդիրը:

---

Հայաստանի պաշտոնական անձինք չկարողացան կամ ավելի շուտ՝ չուզեցին հասկանալ երևույթի վտանգը: Արտասահմանցի ամեն ոք, ով ցանկանում է բազմապատկել հայերի հյուրասիրությունը կամ օգտվել հայերի հնարավորություններից, հայտարարում է, որ ինքն էլ է հայ՝ զմայլելով հայերին, իսկ վերադառնալով տուն՝ մի կուշտ ծիծաղում է նրանց վրա: Այսօր կարճ վերելքից հետո հունգարահայ գաղութը ճգնաժամ է ապրում: Մենք քիչ ենք մեծամասնության դեմ պայքարելու և աննշան՝ Մայր հայրենիքի օժանդակության համար: Մենք ի սկզբանե գիտակցում էինք, որ Փոքրամասնությունների օրենքն ընդունվեց ոչ թե տեղական փոքրամասնությունների կյանքը բարելավելու համար, այլ որպես քաղաքական ճնշման միջոց՝ հօգուտ հարևան պետություններում գտնվող հունգարացիների: Ինչևէ, որոշեցինք որքան հնարավոր է օգտվել ընձեռված հնարավորությունից: 1998-2005թթ. տպագրվեցին հայկական մշակույթին նվիրված բազմաթիվ թարգմանություններ, գրքեր, կանգնեցվեց առաջին խաչքարը Բուդապեշտում, հայությանը չպատկանող տարածքում, երկար տարիներ մեծ հաջողությամբ բեմադրվում էին պրոֆեսիոնալ «Հայկական առասպել» պարային կանտատը և Վիվալդիի «Տիգրան Մեծ» օպերան, կազմակերպվեց Հայաստանի պատմության պետական թանգարանի ցուցահանդեսը, հրատարակվեց հայ-հունգարերեն առաջին բառարանը, Բուդապեշտը դարձավ Եվրոպայի հայությանը համախմբող կենտրոններից մեկը...

Վերածնունդ և անկում, հաղթանակներ և պարտություն: Պատմությունը ցույց է տալիս, որ հայկական գաղութների կյանքը մեծ չափով կախված է տվյալ ժամանակի գաղութի ղեկավարությունից, այն սակավաթիվ մարդկանցից, որոնք, անտեսելով անձնական

շահերը, պատրաստ են գործել հոգուտ համայնքի և հեռավոր Հայրենիքի: Հաջողությունը կախված է այդ մարդկանց պատրաստվածության մակարդակից, հայրենասիրությունից: Առաջնակարգ դեր է խաղում կապը Մայր հայրենիքի հետ: Առանց Մայր հայրենիքի հետ սերտ կապի Սփյուռքը գոյատևել չի կարող, սակայն Մայր հայրենիքն էլ առանց Սփյուռքի թերի է, և միայն միասին, համաձայնեցված քայլերով կարող ենք իրականացնել մեր ընդհանուր նպատակները:

---

## 9. ՉԵԽԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ. ՏԵՂԵԿԱՏՈՒ

### *Թվաքանակը և աշխարհագրական սփռվածությունը*

Ըստ պաշտոնական տվյալների՝ Չեխիայում բնակվում է ավելի քան 1000 հայ (2005թ. տվյալներով՝ 1046<sup>1</sup>): Սակայն որոշ այլ աղբյուրների համաձայն, այստեղի հայության թիվը տատանվում է 6-12 հազարի միջև: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ պաշտոնական վիճակագրությունում հաշվառումը կատարվում է ըստ քաղաքացիության, ապա պարզ կդառնա պաշտոնական թվի նվազ լինելու հանգամանքը, քանի որ Չեխիայում են հաստատվել նաև բազմաթիվ այլ պետությունների քաղաքացի հանդիսացող հայեր:

Չեխիայի հայությունը, ինչպես նաև այստեղի մյուս ազգային փոքրամասնությունների գերակշիռ մասը, գլխավորապես կենտրոնացած է մայրաքաղաք Պրահայում: Մոտավոր հաշվարկներով Պրահայում բնակվում է Չեխիայի հայերի 80%-ը<sup>2</sup>: Երկրորդ տեղը զբաղեցնում է Բոնոն: Հայեր են բնակվում նաև Մլադա Բոլեսլավ, Օստրավա, Յիհլավա, Լիբերեց, Կարլովի Վարի, Լաբեի Ուստի քաղաքներում:

### *Պատմական ակնարկ*

Չեխիան այն երկրներից է, որտեղ գոյություն չի ունեցել ավանդական սփյուռք, և հայ համայնքը սկսել է ձևավորվել

---

<sup>1</sup> Մումյոննի Ս., Չեխիայի հայերը. փոքր համայնք, մեծ ներուժ, [http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT\\_ID=2375](http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=2375)

<sup>2</sup> Նույն տեղում:



հետխորհրդային շրջանում: Մինչև 1980-ականի վերջերն ընդամենը մեկ հնաբնակ հայ ընտանիք է բնակվել Պրահայում<sup>1</sup>: Այնուամենայնիվ, Չեխիայի հետ հայերի առնչության մասին հայտնի է դեռևս 18-րդ դարից. Չեխիայում է ապրել և ստեղծագործել հայ վաճառական Աստվածատուրի որդի Գևորգ Դամասկոսցին (*Georgius Deodatus Damascenus*, չեխական աղբյուրներում՝ *Jiri Deodat*): Վերջինս 1714թ. հիմնել է Պրահայի առաջին սրճարանը, որը գործում է մինչև օրս (*U Zlateho Hada*՝ «Ոսկե օձի մոտ» անվանմամբ): Գևորգ Դամասկոսցին կենդանության օրոք հրատարակել է կրոնաբարոյական թեմայով լատիներեն 5 և գերմաներեն 3 գիրք, թողել 6 ձեռագիր, որոնք պահվում են Պրահայի և Չեխիայի այլ քաղաքների արխիվներում<sup>2</sup>:

Այսպիսով, նոր ժամանակներում Չեխիայում հայերը սկսեցին հաստատվել 1980-ական թթ. սկսած: Չեխիա հայերի հոսքը հատկապես ուժեղացավ 1990-ական թթ. և զագաթնակետին հասավ 1990-1993թթ.: Հիմնական պատճառը սոցիալ-տնտեսական խնդիրներն էին: Արտագաղթողների կողմից Չեխիային նախապատվություն տալն ուներ բազմաթիվ նախադրյալներ: Դրանց թվում կարևոր նշանակություն ուներ այն հանգամանքը, որ Չեխիան միաժամանակ գտնվում էր Եվրոպայի կենտրոնում, սակայն ոչ վաղ անցյալում մտնում էր սոցճամբարի համակարգի մեջ, որի մաս էին կազմում նաև Չեխիա ներգաղթող հայերի էլակետային երկրները (Հայաստան և հետխորհրդային այլ

<sup>1</sup> [http://www.agbu.org/publications/article.asp?A\\_ID=35](http://www.agbu.org/publications/article.asp?A_ID=35)

<sup>2</sup> [http://noravank.am/arm/seminar/detail.php?ELEMENT\\_ID=3820&spphrase\\_id=1491](http://noravank.am/arm/seminar/detail.php?ELEMENT_ID=3820&spphrase_id=1491)

հանրապետություններ): Բացի այդ, կարևոր մեկ այլ հանգամանք՝ կրկին պայմանավորված անցյալի ժառանգությամբ, զգալի թվով հայեր ԽՍՀՄ գոյության պայմաններում զբոսաշրջային այցելություններ էին կատարում Չեխիա և որոշ չափով ծանոթ էին այդ պետությանը: Պետք է առանձնացնել նաև Չեխիայի միգրացիոն օրենսդրության առավել ազատական լինելու գործոնը՝ բազմաթիվ արևմտյան պետությունների համեմատությամբ: Դրա դրդապատճառն էր Չեխիայից ծայր առած արտագաղթը դեպի Արևմտյան Եվրոպայի երկրներ, որի արդյունքում առաջացավ աշխատուժի (մասնավորապես՝ բարձրորակ, մտավոր աշխատանք կատարելու ունակ) պահանջարկ: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ Չեխիայում հաստատված հայերի զգալի մասն ունի կրթական բարձր մակարդակ (Չեխիայում բնակվող հայերի կրթական մակարդակի մասին տե՛ս *Աղյուսակ 9.1*):

***Աղյուսակ 9.1***

***Չեխիայում ապրող հայերի (ներառյալ երեխաները) կրթական մակարդակը<sup>1</sup>***

Բարձրագույն կրթություն	36%
Բուհի ուսանող	13%
Միջնակարգ կրթություն	31%
Միջնակարգ դպրոցի աշակերտ	3%
Ավարտել է նախակրթարան	7%
Նախակրթարանի աշակերտ	10%

<sup>1</sup> Աղյուսակը վերցված է Սունյունի Ս., Չեխիայի հայերը. փոքր համայնք, մեծ ներուժ, [http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT\\_ID=2375](http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=2375) հոդվածից:

Դեպի Չեխիա հայերի միգրացիոն հոսքերի մասին խոսելիս պետք է նշել նաև այն հանգամանքը, որ բազմաթիվ արտագաղթողներ Չեխիան դիտարկում էին ոչ թե որպես վերջնական հանգրվան, այլ միջանկյալ օղակ, որտեղ կարճաժամկետ հաստատումից հետո հնարավոր կլինի տեղափոխվել ավելի բարձր կենսամակարդակ ունեցող արևմտյան երկիր: Չեխիա տեղափոխված հայերի զգալի մասը սկզբում փորձել է հաստատվել ԱՄՆ-ում կամ Արևմտյան Եվրոպայի երկրներից մեկում, սակայն անհաջողություն կրելով՝ նախընտրել է Չեխիան:

### ***Կազմակերպչական կառույցները***

Չեխիայի հայ համայնքի կյանքում կարևոր դերակատարություն ունեն համայնքային կառույցները (Չեխիայի հայկական համայնքային կառույցների մասին տե՛ս *Սոցիոլոգիա 9.2*): Սրանք, չնայած դեռևս չեն կարողանում ապահովել ակտիվ ներհամայնքային կյանքի գոյություն, սակայն, այնուամենայնիվ, ծավալում են որոշակի գործունեություն այս ուղղությամբ, որի շարունակական զարգացման պարագայում հնարավոր կլինի հասնել ակնկալվող արդյունքին: Ներհամայնքային միավորների թվում արժե նշել 1995թ. Սերգեյ Գրիգորյանի հիմնած Չեխ-հայկական ընկերությունը:

Կառույցն ի սկզբանե ավելի մեծ խնդիրներ էր դրել իր առջև՝ Չեխիայում բնակվող բոլոր հայերի միավորում, չեխական հասարակության հետ փոխհարաբերությունների խնդիրներ, տեղեկատվական աշխատանքների իրականացում, հայկական փոքրամասնության իրավունքների պաշտպանություն և այլն, սակայն ընկերության ձեռքբերումները խիստ համեստ եղան, նրա գործունեությունը շուտով սկսեց սահմանափակվել միայն

---

Պրահայում: Ընկերությունը յուրաքանչյուր տարի նշում է Հայոց ցեղասպանության տարելիցը: Կառույցի շոշափելի ձեռքբերումներից էր 2001թ. Չեխիայի հայերի հանդիպման կազմակերպումը Վիեննայում ՀՀ հյուպատոսի հետ, ինչի շնորհիվ լուծվեցին Չեխիայի հայ համայնքի հետ ՀՀ կառավարության փոխգործակցության մի շարք հարցեր:

Մեկ այլ հայկական կազմակերպություն է 2000թ. հիմնադրված Հայկական տուն քաղաքացիական ընկերակցությունը, որին կարող են անդամակցել ինչպես Չեխիայում և Հայաստանում ապրող հայերը, այնպես էլ հայկական մշակույթով հետաքրքրվող չեխերը: 2007թ. դրությամբ այն ուներ ավելի քան 60 անդամ (որոնցից 21-ը՝ չեխ, 10 հոգի ո՛չ Չեխիայի, ո՛չ էլ Հայաստանի քաղաքացիներ չեն): Հայկական տուն քաղաքացիական ընկերակցությունն ակտիվ խորհրդատվական աշխատանք է տանում գաղթյալների շրջանում իրավական, առաջին հերթին՝ միգրացիոն օրենսդրության հարցերի վերաբերյալ: Ցանկացողներին օգնություն է ցուցաբերվում համակարգչով աշխատելու, ինչպես նաև այլ հմտություններ ձեռք բերելու գործում, ինչը թույլ կտա նրանց ունենալ ավելի բարձրակարգ աշխատանք: Ընկերակցությունը նաև հրատարակում է «Նաիրի» ամսագիրը, որում նույնպես արձարծվում են գաղթողների իրավական պաշտպանության հարցերը:

Բավական ակտիվ գործունեություն է ծավալում Տիգրան Աբրահամյանի գլխավորած «Արմենիա» ակումբը, ինչպես նաև «Ուրարտու» հայ-չեխական միավորումը՝ Ալեքսանդր Սարգսյանի ղեկավարությամբ:

Պրահայում և Բռնոյում գործում են հայկական շաքաթօրյա դպրոցներ:

**Չեղիարի իսպիական կառույցները**

**Աղյուսակ 9.2**

	<b>Քաղաքը</b>	<b>Կառույցի անվանումը</b>	<b>Ղեկավարը</b>	<b>Կոնտակտային տվյալները</b>
1.	Պրահա	Արմենիա» ակումբ	Նսվեագահ Տիգրան Արրախալյան	<b>Հասցե՝</b> Գրահա Ցերեղոստոսովեկյայի փող. 12 <b>Հեռ.</b> 00420/723290840
2.		«Армянский дом» փրոթորն	Նսվեագահ Հրանտ Սարգսյան	-

---

### ***Տեղեկատվական ռեսուրսները***

1999թ. սեպտեմբերից Պրահայում լույս է տեսնում «Օրեր» համաեվրոպական ամսագիրը: Այն հրատարակում է Կովկաս-Արևելյան Եվրոպա լրատվական կենտրոնը՝ Հակոբ Ասատրյանի<sup>1</sup> խմբագրությամբ: Երկամսյա պարբերականը լուսաբանում է ոչ միայն Չեխիայում բնակվող հայերի գործունեությունը, այլև անդրադառնում է եվրոպական 30-ից ավելի հայ համայնքների մշակութային, քաղաքական ու հասարակական, մարզական և համայնքային կյանքին: Բացի Հայաստան-Եվրոպա հարաբերություններից՝ ամսագրի ուշադրության կենտրոնում են գտնվում հայ-չեխական հարաբերությունները, Չեխիայում և եվրոպական այլ երկրներում բնակվող հայերի խնդիրները<sup>2</sup>: 2009թ. նոյեմբերի 20-ին մեծ հանդիսավորությամբ նշվեց «Օրեր» ամսագրի 10-ամյակը:

2002թ. ապրիլից Հայկական տուն քաղաքացիական ընկերակցությունը հրատարակում է «Նաիրի» ամսագիրը, որում նույնպես արձարծվում են գաղթողների իրավական պաշտպանության հարցերը: Պրահայում է գտնվում «Ազատ Եվրոպա/Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայությունը: Հայ համայնքի կյանքը երբեմն լուսաբանվում է նաև Ռադիո Պրահայի «Բազմամշակութային Չեխիա» շաբթի շրջանակներում (Չեխիայի հայկական լրատվամիջոցների մասին տե՛ս *Աղյուսակ 9.3*):

---

<sup>1</sup> Հակոբ Ասատրյանը նաև ՀՀ սփյուռքի նախարարի խորհրդականն է Չեխիայի հայկական համայնքներում:

<sup>2</sup> <http://www.orer.cz/?lang=AM&oper=about>

**Չլեհիայի հայկական լրատվամիջոցները**

**Աղյուսակ 9.3**

	<b>Քաղաքը</b>	<b>Անվանումը (փայքը)</b>	<b>Ղեկավարը</b>	<b>Կոնտակտային տվյալները</b>
1.	Պրահա	«ՕՐԵՐ» ամսագիրը orer.cz	Գլխ. խմբագիր՝ Հակոբ Ասատրյան	<b>Հասցե</b> ՝ Třibetska 806/2 ,Praha 6, 16 000 <b>հեռ./ֆայքս</b> ՝ 420- 606 56 56 11 <b>Էլ. փոստ</b> ՝ hakob@orer.cz
2.	Մյադա Բոլեղավ	« <i>Harps</i> » ամսագիր	Գլխ. խմբագիր՝ Սարինա Սարգսյան	<b>Հասցե</b> ՝ ք. Մյադա Բոլեղավ, 293 07, Տոբլուֆ փող. 5 <b>Հեռ.</b> ՝ 00420/606466567
3.	Պրահա	«Ազատ Եվրոպա/Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայություն armenialiberty.org	Տնօրեն՝ Հրայր Թամրազյան	<b>Հասցե</b> ՝ Vinohradska 159A, 10000 Praha 10 <b>հեռ./ֆայքս</b> ՝ <b>Էլ. փոստ</b> ՝ armenian@rferl.org

---

## 10. ՉԵԽԻԱՅԻ ՀԱՅԵՐԸ.

### ՆՈՐ ՁԵՎԱՎՈՐՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նորաստեղծ Չեխիայի հայ համայնքին բնորոշ են մի շարք առանձնահատկություններ՝ պայմանավորված նրա նորաստեղծ և բավական սակավաթիվ լինելով: Բազմաթիվ մեխանիզմներ, որոնք արդյունավետ կերպով գործում են հարուստ ավանդույթներ ունեցող և սովորաբարից հայկական ավանդական համայնքներում, գործնականում Չեխիայի հայ համայնքում կիրառվելու նախադրյալներ չունեն: Օրինակ, եթե ԱՄՆ-ում, Լիբանանում կամ Ֆրանսիայում եկեղեցական, հասարակական, քաղաքական, մշակութային, կրթական կառույցները, ունենալով իրենց կենտրոններն ու մասնաճյուղերը, տասնամյակներ (որոշ դեպքերում՝ նույնիսկ դարեր) շարունակ բավական արդյունավետ գործունեություն են ապահովում, ապա ակնհայտ է, որ այս մեխանիզմները նույնական գործադրման պայմաններ չունեն Չեխիայում: Դրա պատճառ հանդիսացող համայնքային գործոնների շարքին պետք է գումարել նաև Չեխիայի հայ համայնքի անդամների այստեղ հաստատվելու դրդապատճառները: Եթե ավանդական սփյուռքահայությանը (որը հիմնականում բաղկացած է Հայոց ցեղասպանության արդյունքում աշխարհով մեկ սփռված հայերի ժառանգներից) որոշակիորեն բնորոշ է ազգային արժեքների պահպանման և զարգացման ձգտումը, ապա վերջին երկու տասնամյակներին տնտեսական դրդապատճառներով հայրենիքից արտագաղթածները զգալի չափով թերանում են այս առումով: Սրանից հետևում է, որ նորաստեղծ համայնքներում, օրինակ՝



հենց Չեխիայի հայ համայնքում, առկա է ազգային արժեքների ու ինքնության պահպանման հրամայականի գիտակցման մակարդակի որակական բարձրացման խնդիր:

Սակայն միաժամանակ ակնհայտ է, որ այս խնդիրների լուծումը լոկ ավանդական համայնքներում գործող մեխանիզմներով անհրաժեշտ արդյունավետության չի կարող հանգեցնել: Ուստի անհրաժեշտ է ավանդականին զուգահեռ կիրառել նաև նորագույն մեթոդներ վերոհիշյալ խնդիրների լուծման համար: Այս առումով առաջնակարգ դերակատարություն ունի տեղեկատվական ռեսուրսների և հնարավորությունների արդյունավետ օգտագործումը: Մրանից չի բխում, թե վերոհիշյալ մեթոդները կիրառական չեն ավանդական համայնքներում, սակայն Չեխիայի հայ համայնքի պարագայում դրանց գործադրումն առավել արդիական է, քանի որ, այնուամենայնիվ, ավանդական համայնքներում գործում են նախկին կառույցներն ու մեխանիզմները, որոնք, թեկուզև սովորույթի ուժով, տալիս են որոշակի արդյունավետություն:

Չեխիայի հայ համայնքին բնորոշ է ադապտացման և ինտեգրման խնդիրների արագ լուծումը: Հայերն առանձնապես կարողացել են ներգրավվել Չեխիայի տնտեսությունում: Զգալի թվով հայերի հաջողվում է իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Այս մասին 2007թ. իր հոդվածում Ս.Սոււլյոնսին նշում է. «Հայերի մեծամասնությունը սեփական բիզնես ունի. հայերն ունեն ոչ մեծ մթերային խանութներ, կոշիկի, կարի արհեստանոցներ և այլն: Տարածված է նաև ոսկերչական բիզնեսը: Չեխիայի հայերի մեծ խիստ փոքր թիվ են կազմում գործազուրկները՝ 5%-ից քիչ (Չեխիայում ապրող հայերի ունեցած

---

զբաղվածության, ինչպես նաև մինչև Չեխիա տեղափոխվելը նրանց զբաղվածության տեսակների մասին տե՛ս *Աղյուսակ 10.1* և *Աղյուսակ 10.2*): Հատկանշական է, որ վարձու աշխատող հայերի միայն կեսն է աշխատում չեխական ընկերություններում, մնացած հայերը, աշխատանքի շուկայում որպես վարձու աշխատողներ հանդես գալով, կա՛մ օտարերկրյա, կա՛մ ձևականորեն չեխական, բայց հայ ղեկավարություն կամ հայկական աշխատանքային կոլեկտիվ ունեցող ընկերությունների աշխատակիցներ են»<sup>1</sup>: Բացի այդ, կարևոր հանգամանք է բնակարանային խնդիրների լուծումը: Հայերի ճնշող մեծամասնությունն այս հարցը լուծում է կամ բնակարանի գնմամբ, կամ վարձակալմամբ (Չեխիայում հայերի բնակարանային պայմանների մասին տե՛ս *Աղյուսակ 10.3*):

Չնայած հայերի ինտեգրման դրական գործընթացին, առկա է նաև որոշակի բացասական վերաբերմունք ներգաղթողների նկատմամբ: Մակայն այս վերաբերմունքը բնորոշ է ոչ միայն հայ համայնքին, այլև ընդհանրապես օտարերկրացիների ներգաղթին: Մասնավորապես, այս միգրացիան Չեխիայի որոշ շրջանակներում նույնականանում է անօրինականության և հանցագործության միտումների աճի մտավախությանը:

Չեխիայի հայերի միգրացիոն խնդիրների թվում կարևոր տեղ է զբաղեցնում փախստականների խնդիրը: 1991-2003թթ. երկրում փախստականի կարգավիճակ ստանալու հայտ են ներկայացրել 3093 հայեր, որոնցից միայն 149-ն (4,8%) է ստացել այդ կարգավիճակը: Իսկ 2005-2006թթ. փախստականի կարգավիճակ

---

<sup>1</sup> Մումյոննի Ս., Չեխիայի հայերը. փոքր համայնք, մեծ ներուժ, [http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT\\_ID=2375](http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=2375)

ստանալու հավակնող օտարերկրացիների թվում հայերը կազմել են 1-2% (տե՛ս *Աղյուսակ 10.4*): Ավելի հեշտությամբ հայերին հաջողվում է ստանալ Չեխիայի քաղաքացիություն: Քաղաքացիության տրամադրման ամենաբարձր ցուցանիշը եղել է 1999-2000թթ. (1999-2003թթ. հայերի չեխական քաղաքացիություն ստանալու և քաղաքացիության տրամադրման դեպքերի դինամիկան տե՛ս *Աղյուսակ 10.5*-ում): Պետք է նշել նաև, որ Չեխիայի օտարերկրացիների շրջանում հայերն անլեզալ միգրացիայի ցուցանիշներով զբաղեցնում են բավական բարձր դիրքեր:

Հայերի արագ ինտեգրումը պայմանավորված է նաև լեզվական հարցով: Չեխիայում զգալիորեն գործածական է ռուսաց լեզուն, ինչն էապես հեշտացնում է հաղորդակցությունը բոլոր բնագավառներում: Հայերի փոքրահասակ և երիտասարդ տարիքային խմբերը հեշտությամբ յուրացնում են չեխերենը (Չեխիայի հայերի չեխերենին տիրապետելու մասին տե՛ս *Աղյուսակ 10.6*-ում): Սա, իր հերթին, առաջ է բերում նաև բացասական հետևանքներ: Մասնավորապես, սրվում է հայոց լեզվի և հայեցի ինքնության վտանգման հիմնախնդիրը: Սա պայմանավորված է նաև Չեխիայի հայ համայնքի բնույթով. բացասական ազդեցություն են ունենում ներհամայնքային կառույցների սակավությունը, դրանց բավարար չափով զարգացած չլինելը, ինչպես նաև համայնքի փոքրաթվությունը: Դրա հետևանքով հայերը, հաճախ դուրս գալով ներհամայնքային շրջանակներից, ակտիվ շփումներ են հաստատում հետխորհրդային այլ հանրապետությունների ներկայացուցիչների հետ:

Չեխիայի հայ համայնքի կյանքում կարևոր դեր ունեն հայ-չեխական հարաբերությունների զարգացմանը միտված գործունեությունը և Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին

---

նվիրված միջոցառումները: Այսպես, օրինակ, 2005թ. ապրիլի 24-ին Պրահայի կենտրոնական հրապարակում 300 հայերի մասնակցությամբ տեղի ունեցավ բողոքի ցույց՝ նվիրված Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցին: Ցույցի մասնակիցները կոչ-դիմում հղեցին Չեխիայի խորհրդարանին<sup>1</sup>: Հայոց ցեղասպանությանը նվիրված միջոցառումների շարք տեղի ունեցավ նաև 2010թ.՝ նվիրված Մեծ եղեռնի 95-ամյակին: Պրահայում անցկացվեց հոգեհանգստյան ժամերգություն, որին հետևեց հուշ-երեկո քաղաքային գրադարանի դահլիճում, ապա բացվեց հայ նկարիչների աշխատանքների ցուցահանդես «Ի հիշատակ՝ 95 տարի անց» խորագրով: Միջոցառումներին մասնակցեցին ոչ միայն հայ համայնքի ներկայացուցիչներ, այլև Չեխիայի և այլ պետությունների քաղաքական, հասարակական, հոգևոր, մշակութային գործիչներ: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ միջոցառումները չսահմանափակվեցին Չեխիայի հայ համայնքի կենտրոն Պրահայով: Բռնություն մատուցվեց պատարագ Չեխիայի Հայ Առաքելական եկեղեցու հոգևոր հովիվ Բարսեղ վարդապետ Փիլավյանի կողմից, ապա տեղի ունեցավ Բռնոյի հայ համայնքի անդամների հանդիպումը ՀՀ դեսպան Ա.Հովակիմյանի հետ<sup>2</sup>: Միջոցառումների կազմակերպման գործում կարևոր դեր կատարեցին «Արմենիա» ակումբը, Ա.Հովակիմյանը, Բարսեղ վարդապետ Փիլավյանը, չեխահայ համայնքի այլ ներկայա-

---

<sup>1</sup> Բադալյան Մ., Եղեռնի 90-րդ տարելիցի անդրադարձներ «Օրեր» մասագրում, <http://www.armtown.com/news/am/azg/20050826/2005082603/>

<sup>2</sup> Ցեղասպանության 95-ամյա տարելիցին նվիրված միջոցառումներ Սլովակիայում, Հունգարիայում և Չեխիայում, [http://www.report.am/news/other/old\\_11516.html?external=1&itpl=default/print.tpl.html](http://www.report.am/news/other/old_11516.html?external=1&itpl=default/print.tpl.html)

ցուցիչներ: 2011թ. նույնպես Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի միջոցառումներն աչքի ընկան բազմազանությամբ: Այս անգամ ևս դրանց մասնակցեցին չեխահայ համայնքի տարբեր կառույցների ներկայացուցիչներ, չեխ մտավորականներ, հոգևոր, մշակութային գործիչներ<sup>1</sup>:

Կարևոր նշանակություն ունի չեխահայության կապերի ամրապնդումը հայրենիքի հետ: Չեխիայի հայ համայնքի կյանքի կազմակերպման մեջ նշանակալի է եղել Ավստրիայում, Հունգարիայում, Չեխիայում և Սլովակիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Հովակիմյանի դերը<sup>2</sup>: 2011թ. հունիսի 30-ին Չեխիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան է նշանակվել Տիգրան Սեյրանյանը: Այնուամենայնիվ, Հայաստանի պետական, հասարակական, գիտական, կրթական, մշակութային զանազան կառույցները հսկայական աշխատանք ունեն կատարելու Չեխիայի հայության հետ կապերն ամրապնդելու, չեխահայ համայնքի զարգացմանը նպաստելու ուղղությամբ:

Չեխիայի հայ համայնքի զարգացման և կշռի բարձրացման տեսանկյունից կարևորվում է հայերի հեղինակության բարձրացումը երկրում: Այս առումով նշանակալի է հայերի դերակատարությունը գիտության և մշակույթի<sup>3</sup>, մարզական և այլ բնագավառներում: Վերջին տարիներին Չեխիայի հայ համայնքի մի շարք ներկայացուցիչներ ճանաչվել են տարբեր մարզական և երաժշտական մրցույթների հաղթողներ (Արամայիս Թոխյան՝

<sup>1</sup> «Օրեր», 2011թ. ապրիլ. 24, <http://www.orer.cz/>

<sup>2</sup> Տե՛ս «Օրեր», 2009, N 1, <http://www.orer.cz/?lang=AM&num=2009070118>

<sup>3</sup> Տե՛ս «Հայության մտավոր ներուժը Արևելյան Եվրոպայում» բաժնում:

---

կարատեի Չեխիայի չեմպիոն, Մոնիկա Հարությունյան՝ գեղասահքի Եվրոպայի պատանեկան առաջնության արծաթե մեդալակիր, Վարինե Մկրտչյան (սուպրանո)՝ Չեխիայի երիտասարդ կատարողների 2009թ. մրցույթի հաղթող և այլն)<sup>1</sup>: Այս հաջողությունները նպաստում են ինչպես նորաստեղծ համայնքի կայացմանը, այնպես էլ չեխական հասարակությունում հայերի հանդեպ դրական կարծիքի ձևավորմանը:

Այսպիսով, Չեխիայի հայ համայնքն Արևելյան Եվրոպայի ինքնատիպ հայկական համայնքներից է, որը, բացի Արևելյան Եվրոպայի մյուս հայկական համայնքներին (ընդհանրապես հայկական սփյուռքին) բնորոշ բազմաթիվ խնդիրներից, ունի նաև առանձնահատուկ խնդիրներ, որոնք պայմանավորված են ինչպես Չեխիայի, այնպես էլ տեղի հայ համայնքի յուրահատկություններով: Հետևաբար, Չեխիայի հայ համայնքի զարգացումը և նրա առջև կանգնած մարտահրավերների լուծումը ենթադրում են ինչպես տեղային, այնպես էլ համակարգային մոտեցումներ:

Վերոհիշյալ խնդիրների լուծման համատեքստում կարևորվում է Չեխիայի հայկական կառույցների զարգացումը, դրանց ինտեգրումը չեխական միջավայրին: Անշուշտ, առկա է Արևելյան Եվրոպայի երկրների հետ դրանց ակտիվ համագործակցության հրամայականը: Սակայն այնպիսի խնդիրների լուծումը, որոնք բնորոշ են բոլոր սփյուռքահայ համայնքներին, պահանջում են ավելի ընդլայնել համագործակցության շրջանակը և ակտիվ փոխհարաբերություններ հաստատել ընդհանրապես սփյուռքյան

---

<sup>1</sup> Ղազարյան Շ., Որ չկորցնեն տունդարձի ճանապարհը, «Առավոտ», 24.06.2010, <http://www.aravot.am/am/articles/guidepark/80405/view>

կառույցների հետ: Այս համակարգում, բնականաբար, կարևորագույն դեր ունի Հայաստանը, առանց որի ակտիվ գործունեության՝ նորաստեղծ չեխահայ համայնքը կենսունակ չի գտնվի:

### ***Չեխիայի հայ համայնքի կրթական խնդիրները***

Չեխիայի հայության առջև ծառայած մարտահրավերների շարքում առաջնային է հայապահպանության, ազգային մշակույթի զարգացման, մայր Հայրենիքի հետ կապերի ամրապնդման հրամայականը: Այս առումով չափազանց արդիական են Չեխիայի հայ համայնքի կրթական խնդիրների ուսումնասիրությունը և դրանց լուծման մեջ Հայության ներուժի դերակատարության բարձրացումը:

1990-ական թթ. Չեխիայի հայ համայնքի ձևավորմանը զուգահեռ՝ հասունացավ կրթական խնդրի կարգավորումը: Չեխիայում հաստատված հայերը ձեռնամուխ եղան հայկական կրթության կազմակերպմանը: Այս խնդիրը լուծելու համար կազմակերպվեցին հայկական շաբաթօրյա դպրոցներ: Դրանք, բնականաբար, չէին կարող ապահովել հայ մանուկների այնպիսի հայեցի կրթություն, ինչպես հայրենիքում, այնուամենայնիվ, նշանակալի երևույթ դարձան համայնքի կյանքում: Շաբաթօրյա դպրոցները նպատակ են հետապնդում ծանոթացնել հայ աշակերտներին իրենց մայրենի լեզվին, հայոց պատմությանն ու մշակույթին: Այս առումով կարևոր նշանակություն ունեցավ Պրահայի հայկական շաբաթօրյա դպրոցի հիմնումը:

---

### ***Պրահայի հայ համայնքի շաբաթօրյա դպրոցը***

1996թ. Պրահայում հիմնադրվեց հայկական շաբաթօրյա դպրոց, որը սկսեց գործել 1997 թվականից: Այս գործում կարևոր դեր ունեցավ Արարատ Նիկողոսյանը<sup>1</sup>, որը հիմնադրման պահից դպրոցի պատասխանատուն էր, իսկ այժմ տնօրենն է Արմեն Քոլոյանը: Հիմնադիր ուսուցիչներից էին Ալլա Եսայանը և Կարինե Փարյանը: Տարբեր տարիների ընթացքում դպրոցում դասավանդել են Սոնա Աթանեսյանը, Սիրանույշ Տոնյանը, Հռիփսիմե Նալբանդյանը: Դպրոցը գործում է Կարլովի համալսարանի տարածքում: Դպրոցի հիմնադրման գործում կարևոր դեր են ունեցել ոչ միայն Չեխիայի հայ համայնքի ներկայացուցիչները, այլև համայնքի բարեկամ չեխ գիտնականները: Դրա աշխատանքների կազմակերպումն իրականացնում է հետևյալ անձնակազմը. Պրահայի հայ համայնքի շաբաթօրյա դպրոցի տնօրեն Արմեն Քոլոյան, ավագ տարիքի աշակերտների ուսուցչուհի Լարիսա Գրիգորյան, միջին տարիքի աշակերտների ուսուցչուհի Անժելա Դադայան, կրտսեր տարիքի աշակերտների ուսուցչուհի Օովինար Բեյբուրյան<sup>2</sup>:

Դպրոցում ուսուցումը սկսվում է յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի երկրորդ շաբաթ օրվանից և ավարտվում մայիսի 28-ին նախորդող շաբաթ օրը: Պրահայի հայկական շաբաթօրյա դպրոցում պարապմունքներ անցկացվում են միայն շաբաթ օրերին: Յուրաքանչյուր տարի այստեղ իրականացվում են մի շարք միջոցառումներ՝ նվիրված Հայաստանի անկախության

---

<sup>1</sup> Ղազարյան Շ., Որ չկորցնեն տունդարձի ճանապարհը, «Առավոտ», 24.06.2010, <http://www.aravot.am/am/articles/guidepark/80405/view>

<sup>2</sup> Պրահայի հայ համայնքի շաբաթօրյա դպրոց, <http://haydproc.cz/About.aspx>



հոչակմանը, հայոց բանակին, դեկտեմբերյան երկրաշարժին, Հայոց ցեղասպանությանը, Հայաստանի առաջին հանրապետությանը և այլն:

Դպրոցում ուսանելն անվճար է: Հարկ է ընդգծել, որ այն ֆինանսական աջակցություն չի ստանում նաև պետության կողմից և գործում է աշակերտների ծնողների կամավոր հանգանակությունների շնորհիվ: Հանգանակված գումարների օգտագործումը հաշվետվությամբ ներկայացվում է ծնողներին: Աշակերտները վճարում են միայն Հայաստանից առաքված դասագրքերի համար, սակայն այդ գումարը վերադարձվում է գիրքը հետ հանձնելուն պես: Անշուշտ, դպրոցի ֆինանսական խնդիրների լուծման պարագայում, որը ենթադրում է բարձր հովանավորություն, հնարավոր կլինի էապես բարձրացնել կրթության մակարդակը և հաղթահարել մի շարք խոչընդոտներ:

Շաբաթօրյա դպրոցի ուսումնական ծրագիրը ներառում է հայոց լեզու, գրականություն, պատմության խնդիրներին վերաբերող զրույցներ, կրոնական դասեր, երգի, պարի դասեր, ինչպես նաև ասեղնագործություն:

Պրահայի հայ համայնքի երեխաները հիմնականում հաճախում են չեխական, որոշ դեպքերում՝ ռուսական և ամերիկյան դպրոցներ: Հարկ է նշել, որ այստեղ, նաև շրջապատի հետ շփումներում և անգամ շաբաթօրյա դպրոցում դասամիջոցների ժամանակ հայ երեխաները գերազանցապես խոսում են չեխերեն, ինչպես նաև ռուսերեն և անգլերեն: Մա վկայում է այն մասին, որ շաբաթօրյա դպրոցի հայոց լեզվի դասավանդման ձևաչափը չի կարող ամբողջովին լուծել համայնքի առջև ծառայած գլխավոր մարտահրավերներից մեկը՝ հայոց լեզվի իմացության և կիրառման

---

խնդիրը: Ակներն է, որ հայոց լեզուն զիջում է դիրքերը և դադարում կիրառական լինել հայ համայնքի անդամների համար նույնիսկ ներհամայնքային շփումներում: Սա ընդհանրապես հայ համայնքի գոյության վճռական խոչընդոտ է, որն աստիճանաբար ավելի է ընդլայնվում: Հենց այս մարտահրավերներին դիմագրավելու համար շաբաթօրյա դպրոցը կարգախոս է ընտրել անվանի գրող Խաչիկ Դաշտենցի իմաստուն խոսքը. «Մեր շուրջը լեզուներ են նոր ու հին, մեր շուրջը խոսում են այլոքեն, եկ խոսենք, եղբայր իմ, հայերեն»<sup>1</sup>:

Կարևորվում է Պրահայի հայ համայնքի շաբաթօրյա դպրոցի ակտիվ համագործակցությունն ինչպես Սփյուռքի, այնպես էլ Հայաստանի կրթական հաստատությունների հետ: Այս առումով որոշակի դեր ունեցավ 2010թ. կայացած Համահայկական կրթական 4-րդ խորհրդաժողովին Պրահայի շաբաթօրյա դպրոցի ուսուցչուհիներ Ա.Դադայանի և Լ.Գրիգորյանի մասնակցությունը: Նշենք, որ այս խորհրդաժողովին մասնակցում էին Սփյուռքի 83 և ՀՀ ու ԼՂՀ 41 ներկայացուցիչ<sup>2</sup>: Նման խորհրդաժողովներին սփյուռքահայ դպրոցների ներկայացուցիչների մասնակցությունը կարևոր նշանակություն ունի: Մասնավորապես, առավել մեծ նշանակություն ունի Չեխիայի նման փոքր հայկական համայնք ունեցող երկրների հայկական դպրոցների մասնակցությունը, քանի որ, ի տարբերություն առավել մեծաքանակ հայկական համայնքներ և բազմաթիվ դպրոցներ ունեցող երկրների, Չեխիայի հայկական դպրոցներն ունեն հայկական կրթության կազմակերպման փորձի

---

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> <http://www.ktak.am/Spyurk/2010/Contacts-list-2010.pdf>

ուսումնասիրության և համագործակցության ավելի մեծ պահանջ:

Պրահայի հայ համայնքի շաբաթօրյա դպրոցը 2010թ. հայտ էր ներկայացրել<sup>1</sup> ՀՀ Սփյուռքի նախարարության և Համաշխարհային հայկական կոնգրեսի կողմից անցկացվող «Լավագույն հայկական կրթօջախ» մրցույթին: Սա ցույց է տալիս, որ Պրահայի հայկական դպրոցի ներկայացուցիչները գիտակցում են կրթօջախի համահայկական կրթական համակարգում ինտեգրվելու և համագործակցելու անհրաժեշտությունը: Չնայած Պրահայի հայկական շաբաթօրյա դպրոցն արժանացավ ոչ թե մրցանակի<sup>2</sup>, այլ պատվոգրի մասնակցության և հայապահպանության գործում ունեցած ավանդի համար: Մասնակցության փաստն ինքնին վկայում է համագործակցության և համահայկական կրթական գործընթացներին հաղորդակից լինելու կարևոր հանգամանքի մասին:

Կարևոր նշանակություն ունի Պրահայի հայկական շաբաթօրյա դպրոցի համագործակցությունը ոչ միայն համայնքի կրթական այլ միավորների, այլև զանազան համայնքային կառույցների հետ: Այդպիսի համագործակցության օրինակ կարելի է համարել Պրահայի հայկական դպրոցի

---

<sup>1</sup> <http://www.armcongress.am/AM/news/77>

<sup>2</sup> Մեկօրյա կրթօջախներից գլխավոր մրցանակ ստացավ Հայկական կիրակնօրյա դպրոցը (ՌԴ, Ուֆա), մրցանակների արժանացան Մ.Մաշտոցի անվան հայկական կիրակնօրյա դպրոցը (Ուկրաինա, Օդեսա), Ստեղծագործական զարգացման և հումանիտար կրթության «Էթնոս» կենտրոնը (ՌԴ, Տյումեն), Գեորգ Թահթաեան կիրակնօրյա ազգային վարժարանը (Մեծ Բրիտանիա, Լոնդոն): Տե՛ս «Պարզևների արժանացան «Լավագույն հայկական կրթօջախ» մրցանակաբաշխության հաղթողները», <http://www.mindiaspora.am/am/News?id=1131>

---

ներկայացուցիչների մասնակցությունը «Օրեր» եվրոպական ամսագրի 10-ամյակին նվիրված միջոցառմանը: Այստեղ մասնավորապես ելույթով հանդես է եկել դպրոցի ուսուցչուհիներից Լ.Գրիգորյանը: Դպրոցի տնօրեն Արմեն Քոլոյանը շեշտել է, որ պարբերականն անցած տարիներին միշտ եղել է դպրոցի կողքին և հաղթահարելով բազում դժվարություններ՝ կարողացել է դառնալ համայնքային կյանքի լուսաբանման միակ օրգանը<sup>1</sup>: Ինչպես պարբերական մամուլի, այնպես էլ համայնքային այլ կառույցների հետ ակտիվ համագործակցությունը նպաստում է դպրոցի բնականոն գործունեությանը: Այսպիսի համագործակցությունը նպաստում է ինչպես առանձին վերցված կառույցների, այնպես էլ համայնքի զարգացմանն ընդհանրապես:

Կարևոր նշանակություն ունի Հայաստանի հետևողական աջակցությունը Պրահայի հայկական շաբաթօրյա դպրոցի գործունեությանը: Այս հարցում կարևոր է նաև դպրոցի ուսուցիչների աշխատանքի գնահատումը: Այսպիսի գնահատական էր ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից Պրահայի հայ համայնքի շաբաթօրյա դպրոցի ուսուցչուհի Լարիսա Գրիգորյանին պատվոգիր հանձնելը<sup>2</sup>: Ուսուցչուհու երկար

---

<sup>1</sup> Մեկնարկել է «Օրեր» եվրոպական ամսագրի 10-ամյակին նվիրված միջոցառումների շարքը, <http://www.nt.am/newpost.php?NewsID=1020482&LangID=4>

<sup>2</sup> Սփյուռքի նախարարության պատվոգիրը Պրահայի շաբաթօրյա դպրոցի ուսուցչուհի Լարիսա Գրիգորյանին, <http://www.nt.am/newsday.php?p=-0&c=0&t=0&r=0&year=2010&month=02&day=19&shownews=1022677&LangID=4#1022677>

տարիների աշխատանքի գնահատումը նոր լիցք է հաղորդում դպրոցի աշխատանքներին, քանի որ օտարության մեջ հայապահպանությամբ զբաղվող կրթության նվիրյալները տեսնում են, որ արժանանում են հայրենի պետության ուշադրությանը: Իսկ 2011թ. փետրվարին Պրահայի հայկական շաբաթօրյա դպրոցում աշակերտների, ուսուցիչների և ծնողների ներկայությամբ Չեխիայի հայկական համայնքներում ՀՀ սփյուռքի նախարարի խորհրդական Հակոբ Ասատրյանը նախարարության հայտարարած մրցույթին մասնակցության և հայապահպանության գործում ունեցած ավանդի համար դպրոցի տնօրեն Արմեն Քոլոյանին հանձնեց նախարար Հրանուշ Հակոբյանի ստորագրությամբ պատվոգիրը<sup>1</sup>:

Դպրոցը Չեխիայի ամենամյա ազգային պատանեկան ու երիտասարդական մշակութային փառատոների մասնակից է: Երկրի ազգային փոքրամասնությունների ընտանիքում հայ համայնքն արդեն ճանաչված է նաև հանձին Պրահայի շաբաթօրյա հայկական դպրոցի<sup>2</sup>: Այսպիսով, տեսնում ենք, որ Պրահայի հայ համայնքի շաբաթօրյա դպրոցն աշխատանքներ է կատարում հայ համայնքը Չեխիայում ներկայացնելու ուղղությամբ: Սա, բնականաբար, ունի էական դրական նշանակություն, քանի որ հայկական համայնքի հեղինակության բարձրացումը պայմանավորում է այս երկրում հայերի դրության բարելավում և համայնքային կառույցների գործունեության ասպարեզի ընդլայնում:

---

<sup>1</sup> Տե՛ս «Սփյուռքի նախարարության պատվոգիրը Պրահայի շաբաթօրյա դպրոցին», «Օրեր», 1-2, 2011, <http://www.orer.cz>

<sup>2</sup> Ղազարյան Շ., նշվ. աշխ.:

---

Պրահայի հայ համայնքի շաբաթօրյա դպրոցը հայ համայնքի գլխավոր կրթական հաստատությունն է, ինչը պայմանավորված է ինչպես Պրահայի մայրաքաղաք, այնպես էլ հայ համայնքի կենտրոն լինելով: Պրահայի հայկական շաբաթօրյա դպրոցն ունի առաջնակարգ դեր հայ համայնքի կրթական խնդիրների լուծման մեջ: Կարևոր է դպրոցի համագործակցությունը համայնքի կրթական այլ կառույցների, ինչպես նաև հայ համայնքի բոլոր մյուս միավորների հետ: Պրահայի հայ համայնքի շաբաթօրյա դպրոցն ունի զարգացման ներուժ, որի արդյունավետ գործադրումն անվիճելի հրամայական է Չեխիայի հայ համայնքի համար:

### ***Բռնոյի հայկական շաբաթօրյա դպրոցը***

2007թ. հոկտեմբերի 6-ին Բռնո քաղաքում բացվեց հայկական շաբաթօրյա դպրոց: Նախաձեռնությամբ հանդես եկավ Հայ Առաքելական եկեղեցու Չեխիայի հոգևոր հովիվ Բարսեղ վարդապետ Փիլավչյանը: Բռնոյի հայկական շաբաթօրյա դպրոցը նպատակ ունի ոչ միայն հայ երեխաներին սովորեցնել հայոց լեզու և պատմություն, այլև ծանոթացնել հայկական պարերին և երաժշտությանը: Դասավանդվում են հետևյալ առարկաները՝ հայոց լեզու և գրականություն, հայոց պատմություն, հայ եկեղեցու պատմություն, պարարվեստ և երաժշտություն: Առարկաների այս ընդգրկումը, անշուշտ, կարող է կարևոր խթան հանդիսանալ հայապահպանության բնագավառում համայնքի բնականոն գործունեության ապահովման համար: Հաշվի առնելով բազմաթիվ գաղթօջախներում առկա կրթական ծանր վիճակը և դպրոցներում դասավանդվող առարկաների սակավությունն ու սահմանափակ

ընդգրկումը, Բոնոյի հայկական դպրոցի առարկաների ընդգրկումը կարելի է բավարար համարել: Այնուամենայնիվ, մի քանի առարկաների դասավանդմամբ, շաբաթական մեկ օր գործող դպրոցից անիրատեսական է ակնկալել համակողմանի հայկական կրթության ապահովում:

Դպրոցի բացման օրը գրանցվեցին 30 հայրերին: Հիշատակման է արժանի նաև այն հանգամանքը, որ բացման արարողությանը մասնակցում էին ոչ միայն Բոնո քաղաքում բնակվող հայեր, այլև Պրահայի հայկական գաղթօջախի ներկայացուցիչներ: Մասնավորապես, արարողությանը մասնակցում էր «Օրեր» ամսագրի գլխավոր խմբագիր Հակոբ Ասատրյանը, որը նաև ՀՀ սփյուռքի նախարարի խորհրդականն է Չեխիայի հայկական համայնքներում: Անշուշտ, կարևոր հանգամանք է Բոնոյի հայկական շաբաթօրյա դպրոցի համագործակցությունը Պրահայի հայկական շաբաթօրյա դպրոցի հետ, որն սկսվեց Բոնոյի դպրոցի բացման պահից, երբ Բարսեղ վարդապետ Փիլավչյանը նորաբաց դպրոցի ուսուցիչներին բաժանեց Պրահայի դպրոցից ուղարկված դասագրքերը<sup>1</sup>:

Պրահայի և Բոնոյի հայկական դպրոցների շարունակական համագործակցությունը կնպաստի ոչ միայն այս երկու կրթօջախների զարգացմանը, այլև ընդհանրապես Չեխիայի հայ համայնքի կրթական կյանքի առաջխաղացմանը: Այս համագործակցությունը, անշուշտ, նպաստում է ոչ միայն կրթական

---

<sup>1</sup> Չեխիայի Բոնո քաղաքում բացվեց հայկական շաբաթօրյա դպրոց, «Ազգ», 12-10-2007, <http://www.azg.am/AM/20071012151022677&LangID=4#1022677>

---

ուղորտի, այլև ընդհանրապես համայնքի հզորացմանն ու զարգացմանը:

Անշուշտ, Բոնոյի հայկական շաբաթօրյա դպրոցը պետք է հիմնվի ավելի քան մեկ տասնամյակ ավելի վաղ գործունեությունն սկսած Պրահայի հայ համայնքի շաբաթօրյա դպրոցի փորձի վրա: Դա վերաբերում է ինչպես ուսումնական գործընթացը կազմակերպելուն, Չեխիայի կրթական համակարգին բնորոշ առանձնահատկություններն ու յուրահատկություններն արդյունավետ օգտագործելուն, այնպես էլ թույլ տրված սխալները չկրկնելուն:

Այս դպրոցի պարագայում նույնպես առաջնակարգ նշանակություն ունի հայկական կրթական գործընթացներում մասնակցության և ինտեգրման ապահովումը: Բոնոյի հայկական շաբաթօրյա դպրոցը նույնպես ունի զարգացման զգալի ներուժ, որը կարող է արդյունավետ օգտագործվել ինչպես Պրահայի հայ համայնքի շաբաթօրյա դպրոցի ու Չեխիայի հայ համայնքի մյուս կառույցների, այնպես էլ Սփյուռքի և Հայաստանի զանազան միավորների հետ ակտիվ համագործակցության պարագայում:

Չեխիայի հայ համայնքի կրթական խնդիրների լուծման մեջ կարևոր դերակատարություն ունի Հայաստանի Հանրապետության և Չեխիայի Հանրապետության համագործակցությունը կրթական, մշակութային և այլ բնագավառներում: Այս առումով հատկանշական է 2010թ. դեկտեմբերի 10-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չեխիայի Հանրապետության կառավարության միջև մշակույթի, կրթության, գիտության, երիտասարդության և սպորտի



բնագավառներում համագործակցության մասին» համաձայնագիրը<sup>1</sup>, որում կրթությանը հատկացված է առանձին հոդված: Համաձայնագրի կրթությանը վերաբերող 4-րդ հոդվածը հարկ ենք համարում մեջբերել ամբողջությամբ, որտեղ կողմերը պարտավորվում են մասնավորապես աջակցել.

ա) բոլոր մակարդակներում դպրոցների միջև ուղղակի համագործակցությանը,

բ) տեղեկատվության, մանկավարժական և մեթոդական հրապարակումների ու այլ ուսումնական նյութերի փոխանակմանը,

գ) չեխերենի և հայերենի ուսուցմանը՝ հիմնականում ուսումնական նյութերի միջոցով, դասախոսների ուղարկմանը և Պայմանավորվող կողմերի պետությունների ազգերի լեզուների և մշակույթի վերաբերյալ դասընթացների կազմակերպմանը,

դ) բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների ու դասախոսների փոխանակմանը<sup>2</sup>:

Դպրոցների միջև փորձի փոխանակումը կօժանդակի նաև Չեխիայի հայկական դպրոցներում հայկական կրթության փորձի համակողմանի կիրառմանը: Ուսումնական նյութերի տարածումը կարող է լրացնել հայկական դպրոցներում առկա ուսումնական

---

<sup>1</sup> Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Չեխիայի Հանրապետության կառավարության միջև մշակույթի, կրթության, գիտության, երիտասարդության և սպորտի բնագավառներում համագործակցության մասին, <http://www.edu.am/DownloadFile/4149arm-hamadzaynagir.PDF>

<sup>2</sup> Նույն տեղում:

---

գրականության սակավության հիմնախնդիրը: Հայերենի իմացության տարածումը Չեխիայում կնպաստի հայոց լեզվի թուլացող դիրքերի ամրապնդմանն այս երկրում: Իսկ բարձրագույն ուսումնական հաստատությունների համագործակցության շնորհիվ հնարավոր է ամուր կապ ստեղծել Չեխիայի բուհերում սովորող հայ ուսանողների և Մայր հայրենիքի միջև, նպաստել նրանց մասնակցությանը Հայության առջև ծառայած մարտահրավերների լուծմանը:

Վերոհիշյալ խնդիրների լուծումը, անշուշտ, կնպաստի ոչ միայն Չեխիայի հայ համայնքի կրթական և ընդհանրապես համայնքային խնդիրների լուծմանը, այլև Չեխիայում հայկական մշակույթի ճանաչման շնորհիվ կնպաստի տեղի հայ համայնքի դիրքերի հզորացմանը և հեղինակության բարձրացմանը:

Չեխիայի հայ համայնքի կրթական կյանքում կարևոր տեղ է զբաղեցնում համահայկական կազմակերպությունների հետ համագործակցությունը տարբեր, այդ թվում կրթության բնագավառում: Այս առումով նշանակալի էր 2010թ. մայիսին Պրահայում կայացած Հայկական բարեգործական ընդհանուր միության Վիրտուալ քուլեջի տնօրեն Երվանդ Զորյանի հանդիպումը Պրահայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ<sup>1</sup>: Հանդիպման ընթացքում Ե.Զորյանը ներկայացրել է Վիրտուալ քուլեջի շուրջ մեկամյա գործունեությունը, ընդգծել չեխահայության այդ ծրագրերին մասնակցելու հնարավորությունները: Բացի այդ, քննարկվել են

---

<sup>1</sup> Պրահայում տեղի է ունեցել հանդիպում Երվանդ Զորյանի հետ, <http://www.nt.am/news.php?p=4&c=cz&t=0&r=0&year=2009&month=11&day=-27&shownews=1020482&p=4&c=z&t=0&r=0&year=2010&month=05&day=-26&shownews=1026685&LangID=4#1026685>

կրթությանը վերաբերող ՀԲԸՄ կրթական այլ ծրագրեր: Նման հանդիպումները նպաստում են ոչ միայն համայնքային, այլև համահայկական կրթական խնդիրներում չեխահայության ընդգրկվածությանը:

Չեխիայի հայ համայնքի կրթական խնդիրները կարևորվում են ընդհանրապես սփյուռքահայության կրթական խնդիրների համատեքստում: Մասնավորապես, չափազանց մտահոգիչ է հայոց լեզվին տիրապետելու մակարդակն ընդհանրապես Սփյուռքում և մասնավորապես Չեխիայի հայ համայնքում: Համայնքի կրթական խնդիրներին և ծանր կացությանն է անդրադառնում նաև «Օրեր» ամսագրի խմբագիր Հակոբ Ասատրյանը՝ նշելով, որ Չեխիայում քչերն են գրում և կարդում հայերեն: Պրահայում շաբաթօրյա հայկական դպրոց հաճախում է 30 աշակերտ, «որը շատ քիչ է 6.000-անոց հայկական համայնքի համար»<sup>1</sup>:

Անհրաժեշտ է ընդգծել նաև ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտությունը վերոհիշյալ խնդիրների լուծման մեջ: Ակնհայտ է, որ այստեղ բավարար չափով չեն օգտագործվում առկա ռեսուրսները: Ասվածի ապացույցն է «Օրեր» ամսագրի խմբագիր Հ.Ասատրյանի նկատառումը, որը վերաբերում էր հայաստանյան հեռուստատեսությունների հաղորդումներին: Նա հատկապես ընդգծում է կրթության խնդիրներում հեռուստատեսային ռեսուրսի ներգրավելու անհրաժեշտությունը Չեխիայի հայաբնակ

---

<sup>1</sup> Սփյուռքում հայ երիտասարդները հայերեն գրել-կարդալ դժվարանում են, <http://www.report.am/news/society/spyurq-hayeren.html>

---

այն բնակավայրերում, որտեղ չկան հայկական դպրոցներ<sup>1</sup>: Ակնհայտ է, որ կրթադաստիարակչական հաղորդումները, որոնք գրեթե բացակայում են կամ խիստ սակավաթիվ են հայկական հեռուստատեսությունում, կարող են կարևոր դեր ունենալ հայապահպանության խնդրում: Նման հաղորդումները կնպաստեն ինչպես հայոց լեզվի յուրացմանը, այնպես էլ հայկական մշակույթի և քաղաքակրթական առանձնահատկությունների ընկալմանն ու ճանաչմանը Մփյուռքում, տվյալ դեպքում՝ Չեխիայի հայ համայնքում:

Կարևորվում է նաև համայնքային կառույցների աշխատանքների համակարգումը, ինչի մասին Հակոբ Ասատրյանը նշում է. «Ճիշտ է, կա շաբաթօրյա դպրոց, կա հոգևորական, բայց համայնքը չունի համայնքային կենտրոն, որտեղ մարդիկ գան-գնան, հավաքվեն, այդ հարցն արդեն քննարկվում է»<sup>2</sup>: Անշուշտ, ինչպես դպրոցների, այնպես էլ համայնքային մյուս կառույցների ակտիվ համագործակցությունը և համակարգումը կնպաստեն համայնքի զարգացմանն ու ամրապնդմանը:

Չեխիայի հայ համայնքի կրթական խնդիրների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այս հարցում չի օգտագործվում Հայության ողջ ներուժը: Անշուշտ, խոսքը վերաբերում է ինչպես համայնքային, այնպես էլ հայաստանյան ներուժի համախմբմանը:

---

<sup>1</sup> Հայաստանի հեռուստատեսություններով հեռարձակվող հաղորդումները դուր չեն գալիս սփյուռքահայերին, <http://www.virahayer.com/armenia-diaspora-news/487.html>

<sup>2</sup> Մարտինյան Ի., Տպագիր մամուլն այստեղ ավելի ազատ է, քան էլեկտրոնային լրատվամիջոցները, <http://hetq.am/am/media/mamul-506/>

Այս առումով կարևորվում է համայնքի կրթական հիմնախնդիրներում միավորել ողջ համայնքը, ակտիվացնել Չեխիայի հայկական կրթօջախների հարաբերությունները Սփյուռքի (առաջին հերթին՝ Եվրոպայի) այլ համայնքների հետ: Բնականաբար, առաջնակարգ նշանակություն ունի Չեխիայի հայկական կրթական հաստատությունների հարաբերությունների զարգացումը հայաստանյան գիտական և կրթական զանազան հաստատությունների հետ: Այս համագործակցությունը կարող է կրել տարաբնույթ ձևաչափեր՝ փորձի փոխանակում, ուսուցիչների վերապատրաստում հայրենիքում, անհրաժեշտ գրականության ապահովում և այլն:

Ընդգծելով Չեխիայի հայկական շաբաթօրյա դպրոցների գոյության կարևորությունը՝ չպետք է գերազնահատել այս դպրոցների ներուժն ու հնարավորությունները: Ակնհայտ է, որ սրանք կարող են բավարարել համայնքի նվազագույն պահանջները: Ուստի, հաշվի առնելով արդի կրթամշակութային, քաղաքակրթական գլոբալացման գործընթացները՝ հարկ ենք համարում ընդգծել, որ Չեխիայի հայ համայնքի կրթական խնդիրների լուծման համար անհրաժեշտ են միանգամայն նոր մոտեցումներ և կառույցներ, որոնք կարող են դիմագրավել վերոհիշյալ մարտահրավերներին: Առաջին հերթին նկատի ունենք համացանցի ընձեռած ահռելի հնարավորությունների օգտագործումը կրթական խնդիրների լուծման մեջ: Վերոհիշյալ խնդիրը, բազմաթիվ յուրահասակություններով հանդերձ, բնութագրական է ոչ միայն Չեխիայի հայ համայնքին, այլև Սփյուռքի հայկական համայնքներին ընդհանրապես:

Չեխիայի հայ համայնքի կրթական խնդիրները, բազմաթիվ յուրահասակություններ ունենալով հանդերձ, կազմում են սփյուռ-

քահայ կրթօջախներին բնորոշ հիմնախնդիրների բաղկացուցիչները: Հետևաբար, դրանք պահանջում են ինչպես տեղային՝ Չեխիայի հայ համայնքի առանձնահատկությունները հաշվի առնող, այնպես էլ ընդհանրապես Սփյուռքի կրթական խնդիրներին վերաբերող համակարգային մոտեցումներ:

**Աղյուսակ 10.1<sup>1</sup>**

**Չեխիայում ապրող հայերի զբաղվածության տեսակները**

	Անհատ ձեռներեցներ	41%
Վարձու աշխատողներ	Չեխական ընկերությունում	13%
	Օտարերկրյա ընկերությունում	4%
	Աշխատանքային կոլեկտիվում հայերի գերազանցությամբ ընկերությունում	9%
Ուսանողներ		8%
Գործազուրկներ		5%
Տնային տնտեսուհիներ		5%
Թոշակառուներ		10%
Երեխաներ		5%

<sup>1</sup> Աղյուսակներ 10.1-10.6-ը վերցված են Սումյուննի Ա., «Չեխիայի հայերը. փոքր համայնք, մեծ ներուժ» հոդվածից, [http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT\\_ID=2375](http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=2375):

**Աղյուսակ 10.2**

**Ներկայում Չեխիայում ապրող հայերի զբաղվածությունը մինչև Չեխիա տեղափոխվելը**

Վարձու աշխատողներ	62%
Անհատ ձեռներեցներ	5%
Գործազուրկներ	9%
Ուսանողներ	7%
Չէին աշխատում տարիքի պատճառով (երեխա/թոշակառու)	17%

**Աղյուսակ 10.3**

**Հայ գաղթյալների բնակության պայմանները Չեխիայում**

Մեփական բնակարան	8%
Մեփական տուն	17%
Կոմերցիոն վարձակալում	48%
Փախստականներին տեղավորելու ծրագրով հասկացված կացարան	8%
Գործատուի տրամադրած կացարան	11%
Հանրակացարան	5%
Բնակություն ազգականների կամ բարեկամների մոտ	3%

**Աղյուսակ 10.4**

**Չեխիայում փախստականի կարգավիճակ ստանալու համար հայտարարություն տված քաղաքացիների հիմնական խմբերը**

Տարբեր երկրների քաղաքացիների բաժինը փախստականի կարգավիճակ ստանալու փաստաթղթեր հանձնողների մեջ, 2005թ.		Տարբեր երկրների քաղաքացիների բաժինը փախստականի կարգավիճակ ստանալու փաստաթղթեր հանձնողների մեջ, 2006թ. հոկտեմբեր	
1. Ուկրաինա	25%	1. Ուկրաինա	16%
2. Մյովակիա	18%	2. Իրաք	11%
3. Հնդկաստան	9%	3. Ռուսաստան	11%
4. Չինաստան	7%	4. Բելառուս	8%
5. Ռուսաստան	6%	5. Նիգերիա	6%
6. Բելառուս	5%	6. Չինաստան	5%
7. Վիետնամ	5%	7. Ղազախստան	5%
8. Մոնղոլիա	3%	8. Մոնղոլիա	4%
9. Նիգերիա	2%	9. Կուբա	4%
10. Մոլդովա	1%	10. Շրի Լանկա	3%
13. Հայաստան	1%	13. Հայաստան	2%

**Աղյուսակ 10.5**

**Հայերի չեխական քաղաքացիություն ստանալու և քաղաքացիության տրամադրման դեպքերի դինամիկան 1999-2003թթ.**

1999թ.	2000թ. ընդամենը	2000թ. միայն փախստականներ	2001թ. ընդամենը	2001թ. միայն փախստականներ	2002թ. ընդամենը	2002թ. միայն փախստականներ	2003թ. ընդամենը	2003թ. միայն փախստականներ
40	36	28	20	9	8	2	18	7

**Աղյուսակ 10.6**

**Հայ գաղթյալների չեխերենին տիրապետելու մակարդակը**

Ազատ մակարդակ	31%
Միջին մակարդակ	42%
Թույլ մակարդակ	27%



## 11. ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ. ՏԵՂԵԿԱՏՈՒ

### *Թվաքանակը և աշխարհագրական սփռվածությունը*

Ռումինիայում հայկական արմատներով բնակչության թիվը շուրջ 7500-10.000 է, որոնցից շուրջ 5000-ը հայկական ծագման մասին հիշողությունը վառ պահած տրանսիլվանահայության ձուլված շառավիղներ են: Հայերը կենտրոնացած են հիմնականում մայրաքաղաք Բուխարեստում, Կոնստանցա և Պիտեշտ քաղաքներում, հայաբնակ են նաև Սուչավա, Յաշ, Պիտեշտ, Տրանսիլվանիայի Գեոլա, Գեորգե և Դումբրավե քաղաքները: Ներկայում հայերի թիվը Ռումինիայում նվազման միտում ունի, քանի որ հայերի տասարդները մեծ մասամբ տեղափոխվում են Արևմտյան Եվրոպայի երկրներ:

### *Պատմական ակնարկ*

Ռումինահայությունն Արևելյան Եվրոպայի հնագույն պատմությունն ունեցող և մինչ այժմ դիմագիծը պահպանող հայկական համայնքներից է: Ներկայիս Ռումինիայի տարածքում հայերի ներկայության պատմությունը սկսվում է դեռևս 5-12-րդ դարերից, թեև երկրում հայերի հաստատման պաշտոնական տարեթիվը համարվում է 1350թ., երբ Բոտոշան քաղաքում հիմնվել է առաջին հայկական եկեղեցին: Բացի այդ, նույն ժամանակաշրջանում հայերը ևս 2 քարաշեն եկեղեցիներ են կառուցել Ռոման և Յաշ (Յասսի) քաղաքներում: Տարբեր ժամանակներում հայերի սովոր իմբեր բնակվել են նաև Կլուժ-Նապոկա, Կոնստանցա, Սուչավա, Տոքշան և այլ քաղաքներում՝ հիմնականում Ռումինիայի Վալախիա և Մոլդովա գավառներում: 17-րդ դարում

---

ռումինաբնակ հայերի մեծ մասը հաստատվել է երկրի արևմտյան Տրանսիլվանիա գավառում, որը հետագայում անցել է Ավստրո-Հունգարիայի տիրապետության տակ, և հայերն արագ կաթոլիկացել են: Հայերը Ռումինիայի տարածքում խոսել են հայոց լեզվի բարբառներից մեկով՝ Առդեալի բարբառով: Հայ բնակիչները դարերի ընթացքում Ռումինիայի տարածքում ստեղծել են իրենց բանահյուսությունը, երգն ու պարը (օրինակ՝ արմենեասկ պարը)<sup>1</sup>: Տրանսիլվանահայության մեծ մասը հետագայում, երբ Տրանսիլվանիան անցել է Ռումինիային, տեղափոխվել է Հունգարիա:

Մոտավոր հաշվարկներով միջնադարում հայ բնակչության թիվը հասել է շուրջ 30, իսկ 1922թ.՝ 25 հազարի: Այս սովոր բնակչության վկայություն են դարձել բազմաթիվ հայկական տեղանունները, հայկական թաղամասերի ու փողոցների առկայությունը: 15-17-րդ դարերում Ռումինիայի ներքին և արտաքին առևտուրը զգալի չափով կենտրոնացած է եղել հայերի ձեռքում, հայերը խթանել են արհեստների զարգացումը, մեծ ներդրում ունեցել նաև երկրի քաղաքական, ռազմական, մշակութային կյանքում, շարունակ հիմնել են բազմաթիվ գործարաններ (մեծ մասամբ՝ կտորեղենի և սննդեղենի), բացել վաճառատներ, կառուցել եկեղեցիներ, դպրոցներ: 16-րդ դարում Մոլդովայի հոսպոդար (մեծ իշխան) է եղել ականավոր քաղաքական գործիչ Յոն Քաջը՝ հայտնի նաև որպես Յոն Արմյանուլ՝ Հայ, որին ժողովուրդը կոչել է «Մոլդովայի հայր»: Իսկ 17-րդ դարում Ռումինիայի արտաքին քաղաքականության մեջ մեծ դերակատարում

---

<sup>1</sup> <http://www.hayernaysor.am/newpost.php?NewsID=1095&LangID=4>

է ունեցել Պետրոս Գրիգորովիչը (Պետեր Արմին): Նա եղել է Ռումինիայի իշխան Միհայ Վիտյազուլի (1593-1601) դեսպանը և խորհրդականը, տարբեր դիվանագիտական հանձնարարություններ է կատարել Ավստրիայում, Ռուսիայում և Կ.Պոլսում: Մեկ այլ ականավոր դիվանագետ է եղել Սուլդովայի իշխան, պետական խորհրդական Մանուկ բեյը (Միրզայան), որը 19-րդ դարի սկզբին մեծ ծառայություններ է մատուցել Բալկանյան քաղաքների տնտեսական զարգացմանը: Սուլդովայի լուսավորիչ է հռչակվել հայ հոգևորականի որդի Գեորգե Ասաքին, որը 19-րդ դարի սկզբին ռումինական և մուղովական գրականության մեջ նոր դարազուլի է բացել իր բանաստեղծություններով և պատմական նովելներով: Ռումինիայի հանրային և մշակութային կյանքում նշանակալի է եղել հայ ազնվական ընտանիքների՝ Գոյլավ (Կոյլավյան), Բուիկլիու (Պըյրգյան), Միսիր (Միսիրյան) ներկայացուցիչների ներդրումը: 19-րդ դարի Ռումինիայի այլ ականավոր հայերից են նաև ռումինական փիլիսոփայության հիմնադիրներից Վասիլե Կոնտան (Կոնտայան), գրող Կարապետ Իբրըիլեանուն, նկարիչ Թեոդոր Ամանը, աստղագետ, մաթեմատիկոս Մալիրու Հարետը և այլք: Տնտեսագետ, պետական գործիչ Գրեգորի Տրանկու-Յաշը հիմնադրել և նախագահել է Ռումինիայի աշխատանքի նախարարությունը: Իսկ արվեստաբան Գրիգոր Զամպաքճյանը գնել է կերպարվեստի բազմաթիվ գործեր և Բուխարեստում հիմնել իր անունով թանգարան, որը գործում է մինչ այժմ և քաղաքի այցեքարտերից մեկն է:

19-րդ դարում Ռումինիայի հայ գաղթավայրում գործել են մի շարք հասարակական կազմակերպություններ: Բուխարեստում կազմակերպված միություններից կարելի է հիշել «Արարատյան

---

ընկերությունը»՝ 1838թ., «Արարատ» ուսումնասիրաց ընկերությունը՝ 1843թ., «Հայրենասիրաց» ընկերությունը՝ 1887թ., Մուչավայում՝ «Անի» ընկերությունը, Կոնստանցայում «Արաքս» գրադարանային ընկերությունը և այլն<sup>1</sup>:

20-րդ դարում կրկին ստվարացել են ռումինահայության շարքերը՝ Մեծ եղեռնից փրկվածների հաշվին: 1915թ. Բուխարեստում կառուցվել է հայկական Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցին, որը Էջմիածնի Մայր աթոռի փոքրացված կրկնօրինակն է:

1927թ. ռումինահայոց թեմի առաջնորդարանին առընթեր հիմնադրվել է Ռումինահայ կենտրոնական մատենադարան-գրադարան ու թանգարան: 1944թ. գրական-հասարակական գործիչ Հակոբ Սիրունու նախաձեռնությամբ մատենադարանը վերակազմավորվել և կոչվել է Հայ մշակույթի տուն, որը հայկական դպրոցի շենքից տեղափոխվել է ռումինահայ բարերարներ Հովսեփ և Վիկտորյա Տուտյանների նվիրատվությամբ հատկացված հատուկ կառուցված շինություն՝ հայկական եկեղեցու տարածքում: Գրադարանը բավական հարուստ է հայերեն, ռումիներեն և օտար լեզուներով գրականությամբ, ինչպես նաև հին հայկական ձեռագրերի օրինակներով: Թանգարանը ևս հարուստ է հնագույն թանկարժեք նմուշներով: Այստեղ է պահվում նաև Մոլդովայի իշխան Ալեքսանդր Բարեպաշտի 1401թ. հրովարտակը, որով արտոնվել է հայերին հիմնադրել Ռումինիայում առաջին՝ Մուչավայի հայոց թեմը: Բացի Տուտյան մշակույթի տնից, Բուխարեստի հայկական եկեղեցու տարածքում

---

<sup>1</sup> Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Խ. Բ, Երևան, 1967, էջ 141:

են գտնվում նաև Միսաքյան-Քեսիմյան 7-ամյա վարժարանի շենքը, Շահիմ գերդաստանի հիշատակի աղբյուրը, ազգային հերոս Անդրանիկ Օզանյանի կիսանդրին, Եղեռնի 90-ամյակին նվիրված խաչքարը և այլն:

### **Կազմակերպչական կառույցները**

20-րդ դարի կեսերից Ռումինիայում գործել են հայկական միություններ, հրատարակվել է «Նոր կյանք» հայալեզու թերթը: 1980-ականների վերջին Ռումինիայում կրկին աշխուժացել է հայերի կյանքը: Բուխարեստում գործող Ռումինիայի հայերի միությունը դարձել է հայերի կազմակերպման հիմնական օղակը (տե՛ս *Աղյուսակ 11.1*): Միությունը գլխավորում է Ռումինիայի գրողների միության փոխնախագահ, Ռումինիայի ներկայիս սենատոր, Սենատում տնտեսության, արդյունաբերության և ծառայությունների մշտական հանձնաժողովի նախագահ, լիբերալ ազատական կուսակցության փոխնախագահ, 2007-2008թթ. տնտեսության և ֆինանսների նախարար Վարուժան Ոսկանյանը: Կառույցի գլխավոր քարտուղարն է Պերճ Մարգարյանը, փոխնախագահը՝ Վարուժան Փամբուքյանը, որը ներկայացնում է հայ համայնքը Ռումինիայի խորհրդարանում՝ առաջադրվելով Ռումինիայի Հայոց միության կողմից: Վերջինս նաև Պատգամավորների պալատում ազգային փոքրամասնությունների խորհրդարանական խմբի ղեկավարն է<sup>1</sup>:

---

<sup>1</sup> <http://hayernaysor.am/newsday.php?p=0&c=0&t=0&r=0&year=2009&month=-04&day=27&shownews=22&LangID=4#22>

---

Հայերի միությունն ունի մարզային բաժանմունքներ Կլուժ (քարտուղար՝ նկարչուհի Ագատուհի Վարդուկա-Խորենյան) և այլ քաղաքներում: Ներկայիս հայտնի հայ գործիչներից են գրող Պետրոս Խորասանճյանը, հայ գրականության թարգմանչուհի Մադլեն Գարագաշյանը, դերասան Ֆլորին Գևորգյանը, ֆուտբոլի վաստակավոր մարզիչ Ֆլորին Հալաճյանը:

2010թ. հուլիսին Ռումինիայի Դումբրվեն (*Dumbraveni*) քաղաքում, հայ կաթողիկե Սբ. Եղիսաբեթ տաճարի հարևանությամբ գտնվող Ապաֆի ամրոցում բացվել է Տրանսիլվանիայի հայոց թանգարանը: Միջոցառման կազմակերպիչների ցանկում ներգրավված էր Դումբրվենի հայկական Ելիզաբեթուպոլիս հաստատությունը: Թանգարանում ներկայացված է Տրանսիլվանիայի հայոց անցյալի, նիստուկացի, երկրամասի զարգացման մեջ նրանց ներդրած նպաստի, 18-րդ դարում հայերի կազմակերպած Դումբրվեն քաղաքի հիմնադրման մասին պատմող ցուցահանդեսը<sup>1</sup>:

Ռումինիայի հայերի միությունն ունի նաև Միսաքյան-Գեսիմյանի անվան երկօրյա դպրոց, ուր 6-16 տարեկան աշակերտները կրթարան են հաճախում շաբաթ և կիրակի օրերին: Դպրոցի երկու ուսուցիչները՝ Արշալույս Պարոնյանը, Նարինե Բոզդան-Քրուշը, դասերը վարում են և՛ արևմտահայերեն, և՛ արևելահայերեն: Գործում է պարային խմբակ:

---

<sup>1</sup> <http://hayernaysor.am/newsday.php?p=0&c=0&t=0&r=0&year=2010&month=-07&day=19&shownews=12046&LangID=4#12046>

### ***Տեղեկատվական ռեսուրսները***

Ռուսիանիայում գործող «Նոր կյանք» թերթը լույս է տեսնում 1950 թվականից, միայն հայերեն լեզվով, որպես շաբաթաթերթ, իսկ 1982 թվականից հետո՝ ամսաթերթ, ապա 1990թ. թերթը դարձել է երկլեզու՝ հայերեն և ռուսերեն: «Նոր կյանքին» զուգահեռ՝ տեղի հայ համայնքում գործում է «Արարատ» ամսաթերթը: Այն հրատարակվել է 1924-1942թթ., ապա դադարեցրել գործունեությունը, իսկ 1990 թվականից վերսկսել է աշխատանքները՝ սկզբում կրկին որպես ամսաթերթ, իսկ 1993թ. հոկտեմբերից՝ երկշաբաթաթերթ: Ի տարբերություն «Նոր կյանք»-ի, «Արարատ» թերթը հրատարակվում է միայն ռուսերեն լեզվով, բայց ընդգրկում է հայ գրականության և մշակույթի վերաբերյալ տեղեկատվություն: 1994 թվականից համայնքում գործում են նաև «Արարատ» հրատարակչությունն ու տպագրատունը:

Բացի այդ, լույս են տեսնում նաև «Անի» ռուսերեն և «Արմենիա» հունգարերեն (Կլուժում) պարբերականները: Գործում են հայկական միություններ, շաբաթօրյա և կիրակնօրյա դպրոցներ, հայկական ռադիոժամ և հեռուստաժամ (տե՛ս *Աղյուսակ 11.2*):

**Աղյուսակ 11.1**

**Ռուսմենիայի հայկական կառույցները**

	<b>Քաղաքը</b>	<b>Կառույցի անվանումը</b>	<b>Ղեկավարը</b>	<b>Կոնտակտային տվյալները</b>
1.	Բուխարեստ	Ռուսմենիայի հայոց միություն	Նստավանդանի Վարուժան Ուկանյան, փոխնախագահ Վարուժան Փալբուկյան	<b>Հեռ.Ֆաքս</b> (+ 40 21) 3111415, (+ 40 21) 3138459 <b>Էլ. փոստ</b> birousen5@yahoo.com

**Աղյուսակ 11.2**

**Ռուսմենիայի հայկական լրատվամիջոցները**

	<b>Քաղաքը</b>	<b>Անվանումը (կայքը)</b>	<b>Ղեկավարը</b>	<b>Կոնտակտային տվյալները</b>
1.	Բուխարեստ	«Արարատ» երկշաբաթաթերթը araratonline.com	Տնօրեն՝ Միլիայ Ստեփանյան- Կազմակերպիչ	<b>Հասցե</b> ՝ ք. Բուխարեստ, Հայկական փող. 13 <b>Հեռ.</b> (4021) 314 67 83 <b>Ֆաքս</b> (4021) 311 14 20 <b>Էլ. փոստ</b> redactia@araratonline.com
2.	Բուխարեստ	«Նոր կյանք» անազիր www.araratonline.com	Տնօրեն՝ Միլիայ Ստեփանյան- Կազմակերպիչ	<b>Հասցե</b> ՝ ք. Բուխարեստ, Հայկական փող. 13 <b>Հեռ.</b> (4021) 314 67 83 <b>Ֆաքս</b> (4021) 311 14 20 <b>Էլ. փոստ</b> ziar.ararat@gmail.com



## 12. ԳԵՌԼԱՅԻ ՀԱՅԵՐԸ

### Արա Պապյանի անձնական դիտարկումները<sup>1</sup>

Հոդվածի մեջ, որոշակի պատմական հենքի վրա, արտացոլված են 1997թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին ներկայիս Ռուսինիայի Գեռլա քաղաք Արա Պապյանի կատարած երկու այցերի և հանդիպումների դիտարկումները:

1995թ. նոյեմբերից մինչև 1997թ. սեպտեմբեր դիվանագիտական ծառայության մեջ եմ եղել Բուխարեստի Հայաստանի Հանրապետության դեսպանատանը նախ՝ որպես առաջին քարտուղար, ապա նաև՝ որպես գործերի ժամանակավոր հավատարմատար (*charge d'affaires ad interim*): 1997թ. օգոստոսի սկզբին դեսպանությունը տեղեկացվեց, որ հունգարահայերը ցանկություն են հայտնել հանդիպելու ռումինահայ համայնքի ներկայացուցիչների հետ և որպես հանդիպման վայր են առաջարկում Գեռլա քաղաքը: Քաղաքի ընտրությունը պատահական չէր: Գեռլան տեղակայված է Բուխարեստից Բուդապեշտ տանող կիսաճամփին: Սակայն ընտրության ամենակարևոր գործոնը բուն քաղաքի կարևորությունն էր երկու համայնքների համար: Քաղաքը 1920 թվականից, բացի մի կարճ ժամանակահատվածի՝ 1940-44թթ., գտնվում է Ռուսինիայի կազմում, սակայն այն առնվազն մի քանի դար եղել է Ավստրո-Հունգարիայի կազմում և հանդիսացել է

---

<sup>1</sup> Հոդվածը վերատպվում է «Նորավանք» ԳԿՀ կայքից, [http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT\\_ID=4234](http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=4234)

---

Տրանսիլվանիայի հայության կենտրոնը: Գեռլան մինչև 1920թ. կոչվել է Արմենոպոլիս (հայերեն՝ Հայաքաղաք, հունգարերեն՝ *Szamosújvár or Örményváros*, գերմաներեն՝ *Armenierstadt*):

Լուրն առնելուն պես դիմեցի Ռումինիայի խորհրդարանի անդամ, Մարդու իրավունքների և ազգային փոքրամասնությունների հանձնաժողովի նախագահ Վարուժան Փամբուկչյանին: Նա սիրով համաձայնեց միասին այցելել Տրանսիլվանիա: Մեզ միացան նաև Ռումինիայում հայտնի գործարար Ժիրայր Գյուլբենկյանը և էլի մեկ-երկու հոգի:

Ներկայիս Ռումինիայի տարածքում հայերը զանգվածաբար բնակություն են հաստատել 14-15-րդ դարից: Արդեն 1415թ. հայերը Սուչավայում (Մոլդովայի սահմանի մոտ) Զամկա անունով վանք ունեին: Նույն վայրերում հայերը 1512թ. կառուցել են Հաճկատար վանքը: Անվանումը ստուգաբանվում է որպես հաճույքը, ցանկությունը, ուխտը, կատարող վանք: Առայսօր այն մեծ ուխտատեղի է նաև ռումինացիների համար: Քանի որ վանքը հայկական է, ռումինացիները հավատում են, որ եթե վանքում դիպչեն հայերին, ապա նրանց ուխտը կկատարվի: Իմ այցերից մեկի ժամանակ, երբ քայլում էինք դեպի վանք, ռումինացի կանայք իրենց գլխաշորերն էին նետում մեր ոտքերի առաջ: Բնագղաբար մենք խուսափում էինք գլխաշորերը տրորելուց: Մեզ բացատրեցին, որ գլխաշորերը նետված են, որ քայլենք գլխաշորերի վրայով: Ռումինացիները հավատում են, որ այս ձևով հաղորդակից կլինեն հայերի հաջողությանը: Սա դարեր շարունակ ռումինացիների մեջ տարածված ավանդույթ ու հավատալիք է, քանի որ, թեև այդ վայրերում արդեն հայեր չկան, այնուհանդերձ, նրանք հիշվում են որպես մեծահարուստ և հաջողակ առևտրականներ:

Հենց այս վայրերից էլ հայերը 17-րդ դարից սկսած արտագաղթել են Տրանսիլվանիա: 1672թ. թուրքերը ներխուժել են Մոլդովա, 1683թ. գրավել Ջամկա վանքը: Խուսափելով թուրքերից՝ հայերն անցել են ավելի ապահով վայր՝ Հաբսբուրգների տիրապետության տակ գտնվող Տրանսիլվանիա: Հիշեցնենք, որ հայերը Մոլդովայում էին հայտնվել Ղրիմից՝ դարձյալ խուսափելով թուրքական վայրագ տիրապետությունից: Ընդհանրապես, ըստ տեղի հայերի մեջ տարածված ավանդության, հայերի այդ հատվածը Հայաստանից արտագաղթել է 11-րդ դարում՝ Անիից:

Մոլդովայից հեռացած հայերը (մոտ երեք հազար ընտանիք) 1702թ. Հաբսբուրգներից տեղափոխվել են Գեռլա բնակավայր և հիմնել Արմենոպոլիս քաղաքը: Եթե Մոլդովայի հայերն առաքելական էին, ապա Գեռլայում հաստատվելուց հետո նրանք դառնում են կաթոլիկ: Կարելի է ենթադրել, որ դա Տրանսիլվանիայում հաստատվելու թույլտվության նախապայմաններից էր: Արմենոպոլիսի հայոց առաջին եպիսկոպոս է դառնում Օշենտիոս Վրրգարյանը (*Auxentiu Vărzărescu*, 1655, Բոտոշանի – 1715, Վիեննա): Մի քանի տասնամյակ տևած շինարարությունից հետո 1792թ. օծվում է հայոց Սուրբ Երրորդություն եկեղեցին:

Եկեղեցին մշտապես գործել է նաև կոմունիստների ողջ տիրապետության ընթացքում:

Իմ այցի ժամանակ եկեղեցում ժամերգություն էր ընթանում, բնականաբար, լատիներեն և հունգարերեն: Սուրբ Երրորդություն եկեղեցին գտնվում է Գեռլա քաղաքի կենտրոնական հրապարակի վրա: Այն շրջապատված է 18-19-րդ դարի երկհարկանի տներով, այդ թվում նաև հայոց առաջնորդարանով՝ կառուցված 1761թ.: Ե՛վ եկեղեցին, և՛ առաջնորդարանը լեցուն են զանազան հնատիպ,

---

բազմալեզու գրքերով և փաստաթղթերով: Առաջնորդարանն ունի կամարակապ ներքին բակ: Ամենահետաքրքրականն առաջնորդների յուզաներկ նկարների պատկերաշարն է: Ամենահին կտավներում պատկերված առաջնորդները մորուքավոր ու վեղարավոր են, նորերն՝ ավելի շեկ ու անմորուս:

Հայկականության միակ ցուցիչը երկու խորանների առկայությունն է՝ Սբ. Գրիգոր Լուսավորչի և Սբ. Հռիփսիմեաց: Եկեղեցին բազիլիկ կառույց է: Զանգակատունն ունի 8-10 հարկանի շենքի բարձրություն: Բուն եկեղեցին շատ մեծ է և տպավորիչ: Իմ տեսած ամենամեծ հայկական եկեղեցին է: Եկեղեցու տակ կատակոմբեր են, ուր ավելի քան հարյուր տարի իրականացվել են թաղումներ: Թաղումները ոչ ավանդական ձևի են, այսինքն՝ դագաղները տեղադրված են պատերի մեջ՝ 4-5 շարքով: Թեև, ըստ ինձ ուղեկցողների, բոլոր թաղվածները հայեր էին, սակայն արձանագրությունները լատինատառ էին, անունները՝ հունգարական: Մեկ-երկու անուն կար, որոնցից կարելի էր կռահել դրանց հայկական ծագման մասին:

Եկեղեցու ներսում՝ հյուսիսային խորանի մոտ, կար մի հսկայական, դատարկ շրջանակ: Պարզվեց, որ Ռուբենսի նկարի շրջանակն է: Բուն նկարն այդ ժամանակ գտնվում էր Կլուժի պատկերասրահում: Նկարի պատմությունը հետաքրքրական է: Արմենոպոլսի հայերը ժամանակին պարտքով մեծ գումար են տվել Ավստրո-Հունգարիայի կայսրերին: Վերջիններս, չկարողանալով վերադարձնել պարտքը, որպես հատուցում 19-րդ դարի սկզբին հայերին առաջարկել են Ռուբենսի նկարը: Քանի որ Ռումինիայում օրենք էր ընդունված կոմունիստների կողմից անօրինականորեն բռնագրավված գույքի վերադարձի մասին,

հորդորեցի հայերին անպայմանորեն պայքարել նկարի վերադարձի համար: Բուխարեստ վերադառնալուց հետո նկարի մասին պատմեցի ազդեցիկ հայերին և պաշտոնական գրությամբ դիմեցի Ռումինիայի մշակույթի նախարարությանը: Հետագայում գոհունակությամբ իմացա, որ նկարը վերադարձվել է հայկական եկեղեցուն, և ներկայումս այն գրավել է իր դատարկ շրջանակը Սուրբ Երրորդություն եկեղեցում:

Գեռլա քաղաքի շրջակայքում կա նաև ավանդական հայկական գերեզման: Այստեղ թաղված են Եղեռնից փրկված հայերը, և տապանաքարերի վրա կարելի է հանդիպել հայերեն գրությունների ու բազմաթիվ հայկական ազգանունների: Գերեզմանն ունի մատուռ: Ընդհանրապես, Գեռլայում կա երեք հայկական եկեղեցի:

Գեռլայի շատ շենքեր մինչև հիմա ունեն հայերեն արձանագրություններ: Քաղաքում գործում էին «Արարատ» կազինոն, «Երևան» ավտոսպասարկման կենտրոնը: Քաղաքի բնակչությունը մոտավորապես 25 հազար է: Թեև պաշտոնապես քաղաքում ապրում է ընդամենը մի քանի տասնյակ հայ, այնուամենայնիվ, բնակչության առնվազն կեսը հավատացած է, որ ունի հայկական ծագում: Հիշարժան է, որ տեղացի հայերը մեծ ակնածանք ունեն, իրենց խոսքով, «իսկական հայերի» նկատմամբ: Երբ փողոցում կանգնած զրուցում էինք Վարուժան Փամբուկչյանի հետ, մեզ մոտեցավ մի ծեր կին և ներկայացավ որպես տեղացի հայ: Ասաց, որ իր նախնիները Հայաստանում ապրել են «ծովի ափին»: Իմանալով, որ ես Հայաստանից եմ, սկսեց ձեռքով շոշափել ինձ՝ ասելով, որ ինքը «մինչև հիմա չէր տեսել իսկական հայի»:

Հետաքրքրական է, որ Գեռլայի հայերը մի ճաշ են եփում, որը

---

կոչում են «ականջապուր», սակայն չեն հասկանում այդ բառի իմաստը:

Թեև Տրանսիլվանիայի հայերն ավելի քան ինը հարյուր տարի առաջ են արտագաղթել Հայաստանից, ներկայումս ունեն հունգարական անուններ, հայախոս չեն և կաթոլիկ են (չեն պատկանում Հայ կաթողիկե համայնքին), այսուհանդերձ, անբացատրելի մի ուժ նրանց մեջ պահել է որոշակի հայկականության գիտակցություն: Գեռլայի հայերի միության նախագահ Յան Էսցեգարի (*Janos Esztegar*) հետ գնացել էի Գեռլայի քաղաքապետի մոտ: Էսցեգարը խոսում էր քաղաքապետի հետ և ասում էր. «մենք՝ հայերս», և ես չէի կարողանում հասկանալ՝ ի՞նչն է նրան հայ պահում:

Կարծում եմ, որ առաջին գործոնը հայ լինելու հպարտությունն է: Հայերը դարեր շարունակ այնքան ազդեցիկ ու հարգված են եղել, որ ներկայումս էլ այդ տարածաշրջանում հայ լինելն ընկալվում է որպես պատկանելություն որոշակի ընտրյալ խավի: Երկրորդ գործոնը Ռումինիայի պաշտոնական քաղաքականությունն է: Յանկանալով թուլացնել հունգարացիների ազդեցությունը նախկին Տրանսիլվանիայի վրա՝ ռումինական պետությունը խրախուսում է հունգարախոս և կաթոլիկ հոծ զանգվածի մեջ (1,8 մլն մարդ) ճեղքերի առաջացումը և ազգային խմբերի վերադարձն արմատներին: Երրորդ գործոնը հայոց պետականության առկայությունն է: Ինչպես ասաց Գեռլայի հայերից մեկը. «Ես հիմա նայում եմ քարտեզին, կարդում եմ Հայաստան անունը և գիտեմ, որ Հայաստանը կա»:

Առանց գերագնահատելու օտարախոս և այլադավան հայերի դերն ու նշանակությունը՝ անհրաժեշտ եմ համարում ընդգծել նրանց կարևորությունը հայոց պետականության շահերի

առաջնորդման և, նպաստավոր պայմանների առկայության դեպքում, որոշակի ծրագրերում նրանց հնարավոր ընդգրկման մասին: Ցանկացած պետություն, անկախ հզորության չափից, կարիք ունի այլ պետություններում իր նկատմամբ բարեկամաբար տրամադրված կազմակերպված խմբերի առկայության: ԽՍՀՄ-ը դա անում էր կոմունիստական կուսակցություններ ստեղծելով, ամերիկացիներն անում են զանգվածային մշակույթի տարածումով, մենք կարող ենք անել սփռված Հայության միջոցով և Հայության վերագարթոնքով:

---

### 13. ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ. ՏԵՂԵԿԱՏՈՒ

#### ***Թվաքանակը և աշխարհագրական սփռվածությունը***

Սլովակիայի ներկայիս տարածքում բնակվում է 400-500 հայ՝ հիմնականում մայրաքաղաք Բրատիսլավայում: Սակավաթիվ հայ ընտանիքներ կան Կոշիցեում, Պրիեվիձայում, Տրեբիշովում, Ժիլինայում, Զվոլենում:

#### ***Պատմական ակնարկ և կազմակերպչական կառույցները***

Սլովակիայի հայ համայնքը պատկանում է նոր ձևավորվող համայնքների շարքին և չունի համայնքային կյանքի երկարամյա պատմություն: Մինչև 1992թ. այստեղ հայերի թիվը չէր անցնում 100-ը: 1990-ականների սկզբներին Սլովակիայում հայերը հաստատվել են հիմնականում Հայաստանից և նախկին խորհրդային այլ երկրներից: Հիմնական զբաղմունքը փոքր բիզնեսն է: Երկրում հայտնի են նաև որոշ հայ մշակութային գործիչներ: Չնայած համայնքի փոքրաթիվ լինելուն՝ երկրում 1999-ից գործում է բավական կազմակերպված հայ համայնք, որը հիմնադրել և ղեկավարում է երկրում հայտնի գործարար Աշոտ Գրիգորյանը: Համայնքը պաշտոնապես գրանցվել է 2002թ.:



#### 14. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՐՈՒՄԻ ՂԵԿԱՎԱՐ, ԴՈԿՏՈՐ ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԵՏ<sup>1</sup>

*- Պրն Գրիգորյան, պատմեք, խնդրեմ, Սլովակիայի հայ համայնքի գործունեության և նպատակների մասին:*

- Սլովակիայի հայ համայնքը հիմնադրվեց մեր կողմից 1999թ.: Մինչ այդ էլ մենք մշտապես մշակութային միջոցառումներ, հետաքրքիր երեկոներ ու դիվանագիտական ընդունելություններ ենք կազմակերպել: Կազմակերպվել են հայկական կոնյակի համտեսումներ, համատեղ մոդա-շոու և այլ միջոցառումներ: Մեզ համար, օրինակ, պատմական օր էր, երբ 1995թ. առաջին անգամ Սլովակիայի նախագահն իր տիկնոջ հետ այցելեց մեր միջոցառմանը:

Մեր համայնքը մի քանի հիմնական նպատակ է հետապնդել՝ Սլովակիայում ներկայացնել հայ մշակույթը, նպաստել հայ-սլովակյան տնտեսական, քաղաքական հարաբերությունների զարգացմանը և հասնել Ցեղասպանության ճանաչմանը: Հատուկ միջոցառումներ ենք կազմակերպել Ցեղասպանության հիշատակը նշելու համար: 1999թ. Բրատիսլավայի ազգային օպերային թատրոնի մեներգիչ Գ.Հովսեփյանի և իմ կնոջ՝ դաշնակարուհի Հ.Գաբրիելյանի մասնակցությամբ դասական մշակույթի օր կազմակերպեցինք և այն նվիրեցինք Ցեղասպանության հիշատակին: Հրավիրել էինք երկրի բոլոր նախարարներին, պառլամենտի

---

<sup>1</sup> Հարցազրույցը վերատպվում է «Նորավանք» ԳԿՀ կայքից, [http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=5092&phrase\\_id=9080](http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5092&phrase_id=9080)

---

անդամներին և այլ գործիչներին: Չնայած Թուրքիայի դեսպանության հրահրած որոշ խոչընդոտներին՝ բոլոր հրավիրվածները մասնակցեցին, և միջոցառումն անցավ փառահեղ կերպով: Ներկա էին նաև հյուրեր Հայաստանից՝ Երևանի քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ: Նրանց համար կազմակերպեցինք դիվանագիտական ընդունելություն՝ Սլովակիայի պաշտոնատար անձանց մասնակցությամբ: Դա սեպտեմբերի 9-ին էր, իսկ սեպտեմբերի 15-ին՝ Նուրեդդին Նուրհանը՝ Թուրքիայի դեսպանը Սլովակիայում, հետ կանչվեց Բրատիսլավայից:

Դա առաջին քայլն էր 1999թ., իսկ արդեն 2004թ. նոյեմբերի 30-ին Սլովակիայի պառլամենտն ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող 4 կետից բաղկացած պատմական բանաձևը:

Բրատիսլավայի ամենագեղեցիկ վայրերից մեկում վեր է խոյանում ֆանտաստիկ խաչքար, որի վրա գրված է բանաձևի տեքստը. «Սլովակիայի Հանրապետության Ազգային խորհուրդը (ԱԽ) հաստատում է 1915թ. հայերի ցեղասպանությունը, որի արդյունքում կոտորվել են Օսմանյան կայսրությունում ապրող հարյուր հազարավոր հայեր և այդ փաստը համարում է ոճիր ընդդեմ համայն մարդկության: Սլովակիայի ԱԽ-ը հաստատում է, որ.

1. Թուրքիան մինչ այժմ չի ընդունել 1915թ. ցեղասպանության փաստը,

2. ՀՀ անկախության ձեռքբերման սկզբից Թուրքիան ամբողջովին շրջափակել է Հայաստանից դեպի Եվրոպա ամենակարճ ճանապարհը և չունի տնտեսական ու դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի հետ,

3. Թուրքիայի պառլամենտն ընդունել է օրենք, ըստ որի՝ քրեական հետապնդման են ենթարկվում հայկական ցեղասպա-

նության կամ Կիպրոսի բաժանման խնդրի մասին արտահայտվողները,

4. Թուրքիայում ապրում է հայկական փոքրամասնություն, որի իրավունքները համակարգված ճնշման են ենթարկվում»: Չորս կետից բաղկացած այս բանաձևն անցավ առանց «դեմ» ձայնի:

Ցեղասպանության ճանաչման հաջորդ օրը Թուրքիայի դեսպանը կրկին հետ կանչվեց՝ չնայած նա ունեցել էր նաև մեծ հաջողություն. նույն օրը Թուրքիայի՝ Եվրամիության անդամության թեկնածուի հարցն էր դրված, և պատլամենտը քվեարկեց հոգուտ իրենց: Երբ քննարկվում էր Թուրքիայի հարցը, պատգամավոր Ֆ.Միկլոշկոն ձայն խնդրեց և ասաց, որ իրենք դեմ են Թուրքիայի անդամակցությանը, սակայն քանի որ Եվրամիությունը գտնում է, որ Թուրքիան պետք է թեկնածու անդամ դառնա, ինքը պահանջում է թեկնածության հարցից առաջ քվեարկության դնել այս բանաձևը, և կարդաց 4 կետերը: Դրանից հետո իրարանցում սկսվեց. մի երկու ժամ ելույթ ունեցավ Սլովակիայի արտգործնախարարը, որը դեմ էր բանաձևին: Ես նստած էի օթյակում: Նա երկար խոսեց: Բայց բանաձևն ընդունվեց, շեշտում եմ, առանց «դեմ» ձայնի:

Այսպես, մինչև 2004թ. մենք զբաղվել ենք Ցեղասպանության ճանաչման, հետո՝ Ցեղասպանության բանաձևի հետևանքների հարցով. ինչպես նշեցի, Բրատիսլավայում տեղադրել ենք Հայաստանից բերված հուշաքար-խաչքարը:

Այնուհետև շատ լուրջ գործ ենք արել Սլովակիայի և ՀՀ Պաշտպանության նախարարությունների համագործակցությանը նպաստելու համար: 2004թ. նրանց միջև կարևոր պայմանագիր ստորագրվեց, որի արդյունքում ՀՀ ռազմաօդային ուժերը համա-

---

լրվեցին տասը մարտական հզոր ինքնաթիռներով և այլ ռազմամթերքով:

Մշտապես զբաղվել ենք հայ-սլովակյան բիզնես համագործակցությանը նպաստող գործունեությամբ: Առաջին սլովակյան-հայկական բիզնես ֆորումը կազմակերպել ենք Հայաստանում 2000թ.: Ընդհանուր առմամբ արդեն կայացել է այդպիսի 6 ֆորում: Վերջին ժամանակահատվածում լրջացրել ենք տնտեսական գործունեությունը: Խթանել ենք Սլովակիայից Հայաստանին ցածր տոկոսադրույքներով վարկային միջոցների տրամադրումը: Սլովակյան կողմից Հայաստանին տրվել են 5%-ոց վարկեր 5-7 տարով: Հայկական բանկերի երաշխիքի պայմաններում դա Հայաստանի ներսում դառնում է մոտ 8-9%, քանի որ բանկն ինքը նշանակում է իր տոկոսները:

Լուրջ գործունեություն ենք ծավալում էներգետիկայի, հեռահաղորդակցության ոլորտներում: Արցախում կառուցում ենք հիդրոէլեկտրակայան, որը ժամանակակից լավագույն տեխնիկայով է զինված լինելու. առաջին անգամ պատմության մեջ հայկական պետությունն այդպիսի հիդրոէլեկտրակայան կունենա:

Շարունակում ենք արտոնյալ 7+3 (10) տարի կառուցապատման վարկային միջոցներ տրամադրել հիդրոկայանների վերակառուցման համար: Այդ միջոցներով է (13,5 մլն եվրո) վերակառուցվում Սևան-Հրազդան կասկադին պատկանող Երևանի հիդրոկայանը: Երևանի բժշկական համալսարանին *Simense*-ի սարքավորումներ գնելու համար ևս վարկային միջոցներ են տրվել: Ունենք նաև այլ ծրագրեր, որոնց շուրջ ծավալուն աշխատանք ենք տանում:

**- Իսկ ի՞նչ գործունեություն է ծավալում ներկայում Ձեր կողմից ղեկավարվող մյուս կառույցը՝ Եվրոպայի հայկական միությունների ֆորումը:**

- Մեր՝ Եվրոպայի հայկական միությունների ֆորումն (ԵՀՄՖ) արդեն 11 տարեկան է: Այն հիմնադրել է Թորոս Սակերյանը, որը 5 տարի պահեց իր գումարներով: Ֆորումի անդամներն են 32 երկրների համայնքներ և տարբեր կազմակերպություններ ու անհատներ ամբողջ Եվրոպայից: Ռուսաստանի հայ համայնքն էլ է մասնակցում ֆորումին, սակայն Ռուսաստանն իր առանձին միավորներն ունի, և դրանք շատ ավելի ակտիվ աշխատում են այնտեղ:

Սլովակիայի հայ համայնքը ԵՀՄՖ-ին անդամակցում է 2002-ից: 2008-ից կառույցի նախագահը ես եմ: Այդ տարի Բրատիսլավայում նշեցինք ԵՀՄՖ տասնամյակը. կազմակերպեցինք համաժողով՝ նվիրված կառույցի տասնամյակին և Հայաստանի Առաջին հանրապետության 90-ամյակին: Դեռևս 2003թ. պրն Սակերյանի հանձնարարությամբ մենք Բրատիսլավայում կազմակերպել էինք 1-ին համահայկական լրագրողների ֆորումը: Պրն Սակերյանն էր, որ 2001թ. կազմակերպեց առաջին համահայկական գործարարների ֆորումը Բուդապեշտում, 2002թ.՝ առաջին հայ իրավաբանների ֆորումը Փարիզում, որին ներկա էին ՀՀ ՄԴ նախագահ Գազիկ Հարությունյանը, Էդվարդ Նալբանդյանը (այն ժամանակ՝ իբրև Ֆրանսիայում ՀՀ դեսպան), ԱՄՆ-ից Վարդգես Եղիայանը և այլ հայտնի իրավաբաններ: Վերջինս մեր ֆորումում ելույթ ունեցավ, ներկայացրեց ապահովագրական գործակալությունների դեմ դատական գործի իր նախագիծը, որը հետագայում իրականացրեց: Դրա շնորհիվ Յեդասպանության գոհերի շատ ժառանգներ կարողացան փոխհատուցում ստանալ իրենց

---

նախնիների կյանքի ապահովագրության և բանկային միջոցների դիմաց: Մենք այժմ այնքան լավ իրավաբաններ և լոբբիստներ ունենք աշխարհում: Շատ հայտնի է նաև Հարի Հակոբյանը (Մեծ Բրիտանիա), որը Հաագայի դատարանում շահեց Պաղեստինի դատն Իսրայելի դեմ:

Հետագայում ԵՀՄՖ-ն համահայկական լրագրողների ֆորումներ կազմակերպեց նաև Հայաստանում: Պարբերաբար կազմակերպվող այդ ֆորումների ժամանակ այնպիսի տեղեկատվական հոսք է ընթանում, որ հետո բոլոր համայնքների ներկայացուցիչներն իրենց տեղերում շարունակում են աշխատանքները: Համայնքները, ակտիվ անհատներն այնպիսի ծրագրեր են ներկայացնում, որ զարմանում ես. ծրագրեր, որոնց մասին մինչ այդ միայն իրենք գիտեին: Ֆորումները մեկ նպատակ ունեն՝ նպաստել Եվրոպայի հայերի միջև տեղեկատվության փոխանակմանը և համագործակցությանը:

Ներկայում ԵՀՄՖ-ն հիմնականում զբաղվում է Եվրոպայում և Ամերիկայում լոբբիստական գործունեությամբ: Օրինակ՝ ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից թիվ 252 բանաձևի քննարկումից առաջ մենք Եվրոպական ֆորումի անունից 100 սենատորների նամակ էինք գրել, և ջերմ պատասխաններ ստացանք նրանցից: Նախագահ Օբամային ենք նամակ ուղարկել: Այն ստորագրեցին Կիպրոսի պառլամենտի նախագահ Մարիոս Գարոյանը, Շարլ Ազնավուրը և այլ հայտնի հայ գործիչներ: Հետագայում նորից ենք նամակ հղելու նախագահ Օբամային՝ շատ ավելի խիստ տոնով: Հենց հիմա կոնգրեսականներին էլի նամակ ենք պատրաստել, որը դեռ չենք ուղարկել:

Շվեդիայի պառլամենտի կողմից Ցեղասպանության ճանաչման բանաձևի ընդունումից հետո շնորհակալական նամակներ ենք հղել նրա անդամներին: Շվեդիայի հայ համայնքի հետ շատ լավ ենք աշխատում. նրանք ակտիվ են այս հարցում:

**- *Ի՞նչ ծրագրեր ունեք ապագայի համար:***

- Ես հիմա մի կարևոր խնդրի վրա եմ աշխատում. ուզում եմ Բրատիսլավայում ստեղծել Եվրամիություն-Հարավային Կովկաս ռազմավարական կենտրոն: Այդ կենտրոնի միջոցով Սլովակիան կարող է Հարավային Կովկասի համար դառնալ դարպաս դեպի Եվրամիություն, իսկ Հարավային Կովկասը Եվրամիության համար՝ դարպաս դեպի Հայաստան: Հիմա աշխատում եմ Սլովակիայի պառլամենտի, արտգործնախարարության հետ, որ սատարեն այդպիսի մի կենտրոն ստեղծել, որը կկազմակերպի համապատասխան ֆորումներ: Կցանկանայի, որ առաջին ֆորումը Եվրամիություն-Հարավային Կովկաս-Լեռնային Ղարաբաղ ձևաչափն ունենա: Այդ ուղղությամբ ենք աշխատում. ուզում ենք հրավիրել Լեռնային Ղարաբաղի ղեկավարությանը, ներկայացնենք խաղաղ գոյակցության ծրագիր և այլն:

Բացի այդ, ուզում ենք ԵՀՄՖ-ն գրանցել նաև Հայաստանում, որպեսզի զարգացնենք Եվրոպա-Հայաստան՝ Սփյուռք-Հայաստան կապը: Մի ամսից նախատեսում ենք հանդիպել ԱՄՆ հայ գործիչների հետ, որպեսզի փորձենք Ամերիկա-Եվրոպա սփյուռքի կապերը միավորել: Մեծ պահանջ կա համաշխարհային հայկական ֆորում ստեղծելու, ընդ որում՝ մեծ պահանջ կա, որ ստեղծվելիք ֆորումը զբաղվի ոչ միայն Ցեղասպանության և Ղարաբաղի հարցերով, որոնք մեր հիմնախնդիրներն են, այլ նաև Հայաստանի ներքին խնդիրների լուծմանն աջակցելով: Ամեն

---

դեպքում, եթե կարողանանք Հայաստան-Սփյուռք կապն այնպիսի մակարդակի հասցնել, որ, օրինակ, Սփյուռքը ՀՀ պառլամենտում ունենա ներկայացուցիչներ (ինչը կա աշխարհի շատ պառլամենտներում), դրանից հետո կարելի կլինի համատեղ ուժերով շատ խնդիրներ լուծել:

Ես գտնում եմ, որ Արևելյան Հայաստանում, որտեղ ծնվել ու մեծացել եմ, կա հզոր մտավորական խումբ, և նրա ու արևմտահայության մերձեցումը որակական թռիչք կապահովի Հայաստանի համար: Բացի այդ, այսօր այն հայ երիտասարդությունը, որ դրսում է սովորում, այնպիսի վերելք կապահովի Հայաստանի համար, որ ուրիշ ոչ մի ճանապարհով չենք կարող նույնիսկ երազել: Պարզապես շատ է պակասում կազմակերպչական կողմը: Դա է մեր ապագան. գոյություն ունեցող ուժերը՝ լավ ուժերը, Սփյուռքն ու Հայաստանը միավորելով մենք կունենանք այնպիսի ռեսուրսներ, որոնք շատ արագ մեզ ոտքի կկանգնեցնեն:



## ԱՄՓՈՓՈՒՄ

Արևելյան Եվրոպայի երկրներում հայերը հաստատվել են պատմական անցյալում: Այսօր արևելաեվրոպական երկրների հայ համայնքներն ընդգրկում են ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից սփյուռքը: Ավանդական սփյուռք ասելով հիմնականում նկատի ունենք Հայոց ցեղասպանության հետևանքով Արևելյան Եվրոպայի երկրներում հայտնված հայությանը: Ժամանակակից սփյուռքը կազմում են հետխորհրդային շրջանում Հայաստանից գաղթած մեր հայրենակիցները:

Արևելաեվրոպական հայ համայնքների վրա ազդեցություն է թողել այդ երկրների հասարակական-քաղաքական միջավայրը: Երկրորդ աշխարհամարտից հետո, մինչև 20-րդ դարի կեսն ընկած ժամանակահատվածն ինչպես Արևելյան Եվրոպայի երկրների, այնպես էլ տեղի հայ համայնքների պատմությունը բաժանում է առանձին փուլերի:

Նախախորհրդային շրջանում Արևելյան Եվրոպայի հայ համայնքներում ակտիվ գործունեություն են ծավալում եկեղեցիները, հայկական ավանդական կուսակցությունները, ազգային մամուլը և հայկական մշակութային, կրթական, բարեգործական տարաբնույթ կազմակերպությունները: Վերջիններիս գործունեությունը կարևոր նշանակություն ուներ հայ համայնքների ինքնակազմակերպման գործում և աշխուժություն էր հաղորդում համայնքային կյանքին:

Խորհրդային տարիներին՝ կապված քաղաքական ազատությունների սահմանափակումների, ինչպես նաև հակակրոնականության հետ, զգալիորեն տուժեց ինչպես Հայ Առաքելական եկեղեցու, այնպես էլ այլ կառույցների գործունեությունը: Բազմաթիվ կազմակերպություններ

---

դադարեցրին իրենց գործունեությունը: Բուլղարիայում, օրինակ, այդ ժամանակաշրջանում պաշտոնապես գրանցված էր ընդամենը մեկ հայկական կազմակերպություն՝ Հայկական կրթամշակութային կազմակերպությունների «Երևան» միությունը:

Հետխորհրդային շրջանում քաղաքական ազատությունները, ինչպես նաև հակակրոնական մթնոլորտի հաղթահարումը նպաստավոր պայմաններ ստեղծեցին հայ հոգևոր և աշխարհիկ կառույցների ակտիվացման համար: Ներկայումս Արևելյան Եվրոպայի հայ համայնքներում ազատ գործում են ոչ միայն հայկական եկեղեցիները, այլև կրթական, մշակութային, մարզական, բարեգործական և այլ կառույցներ: Հրատարակվում են հայկական թերթեր: Համայնքային կյանքի բովանդակությունը կազմում են հիմնականում մշակութային միջոցառումներն ու ազգային տոնակատարությունները:

Արևելաեվրոպական հայ համայնքների աշխուժացման գործում կարևոր նշանակություն ունեցան նաև Հայաստանի անկախացումը և դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ՀՀ և Արևելյան Եվրոպայի երկրների միջև: Այդ երկրներում հիմնված ՀՀ դեսպանությունները լուրջ գործիք են ոչ միայն միջպետական հարաբերությունների զարգացման, այլև հայության համախմբման, հայ համայնքների կյանքի կազմակերպման ու աշխուժացման գործում:

Ներկայումս Արևելյան Եվրոպայի հայ համայնքների կյանքում կարևորվում է երկու գործոն՝ քաղաքական և տնտեսական: Քաղաքական առումով պայմանները նպաստավոր են: Ընձեռված ազատությունները լայն գործունեության հնարավորություն են տալիս հայկական համայնքային կառույցներին: Մինչդեռ տնտեսական իրավիճակը որոշակի անորոշություն է հաղորդում հայ համայնքների կյանքին: Մի

կողմից՝ շարունակվում է Հայաստանից միգրացիան Արևելյան Եվրոպայի երկրներ, մյուս կողմից՝ այդ երկրներում հաստատված հայերը՝ ավելի բարեկեցիկ կյանքի ակնկալիքով, տեղափոխվում են Կենտրոնական և Արևմտյան Եվրոպայի երկրներ և ԱՄՆ:

Կարծում ենք, Արևելյան Եվրոպայի հայ համայնքների խնդիրների լուծումն էապես պայմանավորված է հայության շրջանում նոր մտածողության արմատավորմամբ, որի առանցքում պետք է լինի հայաստանակենտրոնությունը:

---

## РЕЗЮМЕ

В восточноевропейских странах армяне обосновались еще в историческом прошлом. Сегодня армянские общины Восточной Европы включают в себя и традиционную диаспору, и современную волну эмиграции. Говоря о традиционной диаспоре, мы в основном имеем в виду армян, обосновавшихся в восточноевропейских странах вследствие Геноцида. Современную эмигрантскую волну составляют наши соотечественники, покинувшие Армению уже в постсоветский период.

На восточноевропейских армянских общинах сказывается общественно-политическая среда этих стран. После Второй мировой войны, в период до середины XX века история как стран Восточной Европы, так и местных армянских общин делится на отдельные этапы.

В досоветский период в жизни армянских общин Восточной Европы деятельное участие принимали церкви, традиционные армянские партии, национальная пресса и разные культурные, образовательные, благотворительные армянские организации. Деятельность последних имела важное значение в самоорганизации армянских общин и активизировала общинную жизнь.

В советские годы, в связи с ограничением политических свобод, а также антирелигиозной политикой, значительно пострадала деятельность как Армянской Апостольской церкви, так и других структур. Многочисленные организации прекратили свою деятельность. В Болгарии, например, в этот период официально была зарегистрирована лишь одна армянская организация – союз армянских образовательно-культурных организаций «Ереван».

В постсоветский период обретение гражданских свобод, а также преодоление атмосферы антирелигиозности создали благоприятные условия для активизации армянских духовных и светских организаций. В настоящее время в армянских общинах Восточной Европы свободно действуют не только армянские церкви, но и образовательные, культурные, спортивные, благотворительные и другие организации. Издаются армянские газеты. Содержание общинной жизни составляют в основном культурные мероприятия и национальные праздники.

Важную роль в активизации армянских общин Восточной Европы сыграло также обретение независимости Арменией и установление дипломатических отношений между РА и западноевропейскими странами. Учрежденные в этих странах посольства РА – серьезный инструмент не только развития межгосударственных отношений, но и консолидации армянства, организации и активизации жизни армянских общин.

На сегодня в жизни армянских общин Восточной Европы наиболее значимы два фактора: политический и экономический. В политическом плане условия благоприятны. Предоставленные свободы дают структурам армянских общин широкие возможности для деятельности. Между тем экономическая ситуация придает некоторую неопределенность жизни армянских общин. С одной стороны, продолжается миграция из Армении в страны Восточной Европы, с другой – обосновавшиеся в этих странах армяне в надежде на более благополучную жизнь эмигрируют в страны Центральной и Западной Европы, а также США.

Думается, решение проблем армянских общин Восточной Европы во многом зависит от укоренения среди армян нового мышления, в основе которого должен быть *армениоцентризм*.

---

## SUMMARY

Armenians have settled in Eastern Europe long ago. Currently the Armenian communities in Eastern Europe include both traditional and modern Diasporas. By traditional Diaspora we mean primarily the Armenians who appeared in Eastern Europe as a result the Armenian Genocide. Modern Diaspora consists of our compatriots who left Armenia in the post-Soviet period.

The Armenian communities in Eastern Europe were influenced by the social and political environment of these countries. The period after the World War II till middle of 20<sup>th</sup> century divides the history of both Eastern Europe and Armenian communities there into separate stages.

In the pre-Soviet period the churches, Armenian traditional political parties, national press and various Armenian cultural, educational, benevolent organizations carried out extensive activities in the Armenian communities of Eastern Europe. Their activities were of great importance for self-organization of the Armenian communities and infused the community life with liveliness.

In the Soviet period restrictions of the political liberties and anti-religiousness considerably affected the activity of not only the Armenian Apostolic Church, but also other institutions. Many organizations discontinued their activities. For example, in that period there was only one officially registered Armenian organization in Bulgaria – the “Yerevan” Association of the Armenian Educational and Cultural Organizations.

In the post-Soviet period the political freedoms and overcoming the anti-religious atmosphere created favorable conditions for boosting the activities of Armenian religious and secular organizations. Presently not only Armen-

ian churches, but also educational, cultural, sports, benevolent and other organizations act freely. Armenian newspapers are published. The community life mainly consists of cultural events and national festivities.

The independence of Armenia and establishment of diplomatic relations between the Republic of Armenia and Eastern European countries also contributed greatly to revival of the Armenian communities. The Armenian embassies in these countries are important vehicles not only in development of the interstate relations, but also for consolidation of Armenianness, organizing and revitalizing the life of Armenian communities.

Currently two factors – political and economic – appear to be most important in the life of the Armenian communities of Eastern Europe. In the political terms the circumstances are favorable. The available freedoms afford opportunities of extensive activities for the Armenian community organizations. As for the economic aspect, there is still some uncertainty in the life of the communities. On the one hand, migration from Armenia to the countries of Eastern Europe continues, on the other hand, Armenians who had settled there move to Central and Western Europe and the USA in search of more prosperous life.

We believe that the solution of problems that Armenian communities of Eastern Europe face greatly depends on enrooting a new, Armenia-centered mentality among the Armenians.

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ  
ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

*Հեղինակային խմբի ղեկավար*  
**Աննա Ժամակոչյան**

*Հեղինակային խումբ*  
**Արա Պապյան**  
**Արեստակես Սիմավորյան**  
**Դիանա Գալստյան**  
**Էդվարդ Բադալյան**  
**Սամվել Մարտիրոսյան**  
**Վահրամ Հովյան**  
**Տիգրան Ղանալանյան**

*Տեխնիկական խմբագիրներ*  
**Խոնարհիկ ՔԱՐԱՌԴԼԱՆՅԱՆ**  
**Լուսինե ԲԱՂԱՄՅԱՆ**  
*Ձևավորող*  
**Արմեն ԲԱՐԻՇՅԱՆ**

**«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ**

ՀՀ, 0026 Երևան, Գարեգին Նժդեհի 23/1

Կայք՝ [www.noravank.am](http://www.noravank.am)

Էլ. փոստ՝ [office@noravank.am](mailto:office@noravank.am)

Հեռախոս/ֆաքս՝ + (374 10) 44 04 73

---

Թուղթը՝ օֆսեթ, ծավալը 11.5 տպ. մամուլ:  
Տպաքանակը՝ 300: Տառատեսակը՝ Sylfaen:  
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում: